



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



- 1 -- ԵՊ. ՊՕՅԱՃԵԱՆ Պահեր
- 2 -- Լ. ՓԻՐԱՆՏԵԼԼՕ Վեց անճամարութիւններ,
որոնք հեղինակ մը կը փնտռեն
- 12 -- Ս. ՓԱՆՈՍԵԱՆ Մախանեմզուած արանքը
- 19 -- ԱՐՄԱՆՏ Ես կը գամ նորից
- 20 -- » » Ես մթնել եմ
» » Նռնագոյն կարօտ
- 21 -- » » Ձեռքերդ եմ սիրում
» » Օ՞, կից
- 22 -- Բ. ԲԷՊԱՊՃԵԱՆ Պիլի տը Բիտ
- 24 -- Յ. ՕՇԱԿԱՆ Սահակ Պարգեւեան
- 39 -- Ս. Պ. ՏԱՏՈՅԵԱՆ Անշրջանցելի հակասականութիւն
- 43 -- Լ. ՄԿՐՏՁԵԱՆ Մի դրուագ չորրորդ դարից
- 48 -- * * * Գասպար Իփէկեան
- 50 -- Մ. ՊԱՐՍԱՄԵԱՆ Գասպար Իփէկեանի
գրականութեան նկարագիրը
- 55 -- Գ. ԻՓԷԿԵԱՆ Ո՞վ է բանաստեղծը
- 56 -- » » Արուեստն ու արուեստագէտը
- 58 -- * * * Մաքրաչրումներ՝
«Մեր կեանքը» վեպին մէջ
- 69 -- * * * Ուրիշըմ Կօլտինկ
Նոպէլեան գրական մրցանակակիր
- 71 -- * * * Մշակութային յարեր

Բազմը

ԱՄՍԱԳԻՐ ԳՐԱԳԱՆՈՒՐԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

ԻՐ. ՅԱՐԻ. ԲԻՒ 10 ՀՈՒՅՍՄԱՐՈՐ 1983 ԳԵՐԱԿԵ

Պ Ա Հ Ե Ր

Քու սենեակիդ խաղաղութեան մէջ գազտնապահ,
Մեր գիրկ գրկի, մեր աչք աչքի եւ շունչ շունչի սրտատրոփ
Անցուցած կեա՛նքն է սսկէ ետք, որ ամէն օր եւ ամէն պահ՝
Ինձի հոգի տայ եւ պիտի ներշնչումներ աշխատապիտի:

Կը մնայինք մենք թով թովի. պիտի մնանք մենք դեռ այդպէս,
Լռութեան խոր ու մայրական պաշտպանութեան տակ ապահով,
Կեա՛նք մը լման ու մտնեն ետք սիրոյ յոյսին տակ հրակէզ,
Փոշի՛ նոյնիսկ եթէ ըլլանք, ըլլանք ոգի, դողդոջուն հով:

Անձերը գոյգ մեր երկուքիս՝ նոյնացուցած մէկ անձի մէջ,
Ապրինք պիտի եւ ընթանանք նոյն Աստուծոյ ուղեգրքով,
Աստղերուն նոյն նուագին տակ, գեփիւտներուն մէջէն նայն գէջ՝
Զատենք պիտի կեանքի տիզմէն մեզի բաժին յոյս մ'անվրդով:

Բաժինը մեր յանրժական Բովանդակի անհուն կեանքէն՝
Երգն է Լոյսին, երգը Սիրոյ, երգն Աղօթքին,
Երգն անվախման, որ կ'ամսփէ ցաւերն ամէն,
Որ կ'օրօրէ Արարչութիւնն ընդմէջ Աստուծոյ եւ Ունայնին:

(Անտիպ)

ԵԿ. ՊՅՍԱՃԵԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳԱՆՈՒՐԱՆ
2002-07-11 P
digitised by A.R.A. 2003-84 P.

Լ. Փ Ի Բ Ա Ն Տ Ե Լ Լ Օ

Վ Ե Ց

Ա Ն Ձ Ն Ա Խ Ո Ր Ո Ւ Թ Ի Ն Ն Ե ր,

Ո Ր Ո Ն Ք

Հ Ե Ղ Ի Ն Ա Կ Մ Ը

Կ Ը Փ Ն Տ Ո Ւ Ե Ն



Հայացուց՝

Բ. ՓԱՓԱՋԵԱՆ

(Պչրասէր դերասանուհիմ, զգայնացած, տեսնելով որ առաջիմ մեծ դերակատարը կը փորձէ սիրաբանիկ խորթ աղջկան հետ, կ'առաջանայ եւ բեմադրիչիմ կը հարցնէ)

ՊՉՐԱՍԷՐ ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻՆ. — Ներկեցէք, փորձը պիտի շարունակուի՞ :
ԲԵՄԱԴՐԻՉԸ. — Այո՛, է հարկէ: Սակայն առայժմ թող տուէք, որ մտիկ ընեմ :
ԵՐԻՏԱՍՄԱՐԴ ԱՌԱՋԻՆ ԴԵՐԱԿԱՏԱՐԸ. — Կացութիւնը այնքա՛ն նորութիւն է...

ՊԱՐՁԱՄԻՏ ԱՂՋԿԱՅ ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻՆ. — Շա՛տ հետաքրքրական :
ՊՉՐԱՍԷՐ ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻՆ (կատաղի նայուածք մը նետելով առաջիմ մեծ դերակատարիմ. — Ասով հետաքրքրուողներուն համար՝ անշուշտ...

ԲԵՄԱԴՐԻՉԸ (հորը) .— Պէտք է իրողութիւնները յստակօրէն բացատրէք ինծի (Կը Յատի) :

ՀԱՅՐԸ .— Լաւ ուրեմն . ահա , պարտն տնօրէն : Խեղճ մարդ մը կար քովո . իմ պաշտօնեաս , քարտուղարս : Ամբողջովին նուիրուած էակ մը , որ ամէն ինչի եւ ամէն բանի մէջ լաւապէս կը հասկցուէր իրեն հետ : (Յոյց կոտայ մայրը) Օ՛հ , առանց որեւէ յետին մտածումի , ի հարկէ : Կնոջս նման , ինք եւս բարի էր ու խոնարհ : Երկուքն ալ շարիք գործելու ա՛նասակ էին . մտքերնէն անդամ չէին կրնար անցընել :

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ .— Ի՛նչքն է , որ շարիքի մասին մտածեց անոնց փոխարէն , եւ իրականացուց :

ՀԱՅՐԸ .— Ճիշդ չէ : Ես իրենց բարին ուզեցի . . . նաեւ՝ իմ բարիքս , կը խոստովանիմ : Հասած էի այնպիսի տեղ մը , պարտն , որ չէի կրնար բառ մը իսկ ըսել մէկուէն կամ միւսին , առանց որ իրենք , իսկոյն , մեղսակից ակնարկ մը փոխանակեն : Այն՝ . նայուածքներով կը խորհրդակցէին , գիտնալու համար , թէ ինչպէ՛ս պէտք է ընկալին ըսածս , որպէսզի զիս վերաւորած շըլլան : Կ'ըմբռնէք անշուշտ , թէ տարկա իսկ կը բաւէր զիս կատարեցնելու , անտանելի ջղայնութեան մը մէջ նետելու համար :

ԲԵՄԱԴՐԻՉԸ .— Ի՛նչո՞ւ չէիք վռնտեր ձեր քարտուղարը :

ՀԱՅՐԸ .— Ըրի , դուքն ըրի զինքը . այն ատեն ականատես եղայ այս խեղճ կնոջ , կորսուած խեղճ անասունի մը նման , անտէր մնացած եւ դժար սրտութեամբ ներս առնուած անասուններու նման , տան մէջ շըջելուն :

ՄԱՅՐԸ .— Անշուշտ , հարկաւ . . . :

ՀԱՅՐԸ (դառնալով կնոջ կողմը , սնոր քսիլիքը կանխելով) .— Տղուդ մասին պիտի խօսիս , չէ՞ :

ՄԱՅՐԸ .— Այո , պարտն , տղաս խից ինձմէ :

ՀԱՅՐԸ .— Ճիշդ է , սակայն անդժուրեմա՞մբ չէր . կ'ուզէի որ ան , հողին հետ յարաբերելով , առողջ եւ ուժեղ մեծնար :

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ (հեղմանքով ցոյց տալով տղան) .— Ի՛նչ աղուոր արդիւնք :

ՀԱՅՐԸ .— Իմ յանցանքս չէ , եթէ արեւոյն զուրս եկաւ : Գիւղը ստնտուի մը յանձնեցի զինք , պարտն , զեղջիւռէի մը . . . : Կինս բաւարար ուժեղ չէր թուեր ինձի , կարենալ զայն դիեցնելու համար , հակառակ անոր , որ ժողովուրդի ծայքն զուրս եկած էր : Միշտ նոյն դրդապատճառք . . . ա՛յն՝ որ զիս մղած էր իր հետ ամուսնանալու . . . թերեւս մտահալածածանքի մը հետեւանքն էր . ի՛նչ կրնամ ընել . . . ես միշտ ցանկապած եմ ուժեղ բարոյական առողջութիւն : (Խորք աղիկը քարձրածայն կը խըռապ) : Լռեցուցէք զինք . անտանելի է :

ԲԵՄԱԴՐԻՉԸ .— Լռեցէ՛ք : Աստուած իմ , ձեռքէք որ մտիկ ընեմ :

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ .— Շատ լաւ . սակայն տիկին Փաշէի նման կ'իններու խանութներուն յետամտեղը այցելող յաճախորդներուն բարոյական առողջութիւնը . . . :

ՀԱՅՐԸ .— Յիմար . այդտեղ է որ ես մարդ եմ : Ա՛յն՝ որ կրնայ ձեզի անհեթեթութիւն մը թուիլ , պարտն , շուտիկիտ ապացոյցն է , թէ դուք ձեր գիմայ ունիք իրապէս ապրող էակ մը : Եւ ճիշդ իմ անհեթեթութիւններուս պատճառով է որ հասած եմ տառապանքի այս աստիճանին : Այլեւս չէի կրնար սպրիլ այս կնոջ հետ : (Յոյց տալով կինը) : Մակայն հաւատացէ՛ք ինձի , զիս ճշտող խեղդիչ ձանձրոյթին պատճառով չէ , — այո , իրապէս խեղդիչ բան մը , — որ այդպէս վարուեցայ . այլ աւելի ա՛յն ցաւին , — ցաւ ու անձկութիւն , — որ կը զգայի իրենց համար :

ՄԱՅՐԸ .— Եւ զիս արձակեց :

ՀԱՅՐԸ.— Այո, պարոն, տալով իրեն ինչ որ պէտք էր: Ձինք ինձմէ ազատելու համար, յանձնեցի այն մարդուն:

ՄԱՅՐԸ.— Եւ ի՞ր ազատութիւնը վերագտնելու համար...

ՀԱՅՐԸ.— Այո, կ'ընդունիմ, իրմէ ձերբազատուելու համար: Ամբողջ շարիքը ատկէ եկաւ: Բայց ես այլպէս վարուեցայ, հաւատալով, թէ լաւ գործ մը կը կատարեմ, թէ աւելի իրեն է որ օգտակար կ'ըլլամ, քան ինծի: Կ'երդնուծ: (Անտքերը խաչածնելով. մօրը): Անկէ ետք, որեւէ ատեն աչքէս հեռացուցի՞ր ձեզի, ըսէ՛... մինչեւ որ, օր մը, ինձմէ դադարի միւր ուրիշ քաղաք մը տարաւ քեզ, յիմարաբար Ղլայնացած այն հողածուքեան համար, որ, այնուամենայնիւ, այնքան մաքուր էր, — այո՛, այնքան՝ մաքուր, առանց որեւէ յետին նպատակի, հաւատացէք պարոն, — որ կը տածէի ձեզի հանդէպ: Մեծ գուրգուրանքով կը հետաքրքրուէի նոր կազմուած ընտանիքով, որ կ'աճէր: (Յոյց տալով խորք ազդիկը): Հարցուցէ՛ք իրեն. ի՞նք կրնայ վկայել:

ԽՈՒԹ ԱՂՁԻԿԸ.— Եւ ինչպէ՞ս...: Շատ վտեր էի դեռ, հիւսկէնները կոճակէս կախուած եւ շրջազգեստէս աւելի երկար տաքստեհրով, հազիւ այսքան հասակով աղջնակ մը եղած ատենս: զինք կը դռնէի, դպրոցէն արձակուելու պահուն, ինծի սպասելու վրայ: Կու դար աճուածիս վրայ հակելու...

ՀԱՅՐԸ.— Ի՞նչ ամօթ... այս մէկը նենգութիւն է, զարշիւի է:

ԽՈՒԹ ԱՂՁԻԿԸ.— Եւ ինչո՞ւ:

ՀԱՅՐԸ.— Այո, վատարանութիւն է: (հօտքը բնմադրիչին ուղղելով, քաջատուրութեան եղանակով մը եւ շատ արագ): Երբ մեկնեցաւ (ցոյց տալով մայրը) տունը պարապ թուեցաւ ինծի: Այս կինը իմ մղձաւանջն էր, սակայն իր ներկայութիւնը կը լեցնէր տունը: Յարկաբաժնին մէջ կը թափառէի անգլուխ ճանճի մը նման: (Յոյց տալով տղան): Երբ սըւսիկա, դուրսը մեծցած այս տղան, տուն վերադարձաւ, այն սպաւորութիւնը ունեցայ, թէ այլեւս ոչ մէկ կապ ունէր ինծի հետ: Իր մայրը, որ իմ կեանքիս մէջ մոլորանքի փակադիծի նման բան մը եղած էր, այլևս տունը չէր եւ չէր կրնար իր եւ իմ միջեւ շաղկապողի դերը կատարել: Տղան միևնակը մեծցաւ, մեկուսացած, առանց զգացական եւ մտային որեւէ կապ ունենալու հետս: Ուստի — ստիկա ձեզի տարօրինակ պիտի թուի, սակայն ճշմարտութիւնն է — սկսայ հետաքրքրութիւն մը զգալ, ապա՝ անսակ մը քաղցրութիւն, խանդակաթ քաշողութիւն մը, դէպի պատիկ ընտանիքին օճախը, որուն կազմաւորումին մէջ ինքս դերակատար եղած էի: Ձիս շրջապատը պարտաւր կը լեցունէի՝ մտածելով այս պատկերներուն մասին: Կարեք ունէի — այո՞, իրապէ՛ս անհրաժեշտութիւն մըն էր ստիկա — հաւատալու, որ այդ օճախը խաղաղ էր, զբաղուած՝ գոյութեան պարզագոյն գրազուամներով, երջանիկ, ու իմ ուղեղիս բարդութիւններէն ու տարապանքներէն դուրս եւ հեռու: Ատոր փաստը ունենալու համար էր, որ կ'երթայի տեսնելու այս պատիկ աղջնակը, դպրոցէն արձակուելու պահուն:

ԽՈՒԹ ԱՂՁԻԿԸ.— Այո՞, այո՞... կը հետեւէր ինծի փողոցին մէջ. կը ժպտաւի եւ երբ տուն հասնէի, ձեռքով այսպէս կը բարեւէր: Աչքերս լայն բացած, խրոնած, կը նայէի իրեն: Ձէի պիտեք, թէ ով էր: Մօրս խօսեցայ այդ մասին. վստահ եմ, որ իսկոյն հասկցաւ, թէ ինքն էր: (Մայրը գլխով քայտօ կ'ըսէ): Քանի մը օր դպրոց չդրկեց զիս: Երբ վերադարձի սկսայ երթալ, զինք տեսայ ելքի դրան մօտ, ձեռքին՝ մեծ տուփ մը. գուարճալի էր: Մօտեցաւ ինծի, գլուխ շոյեց ու սուսփէն

դուրս քաշեց Չլորանսի յարդէ զլիտարի մը, մայիսեան վարդերով զար-
դարուած... Ինծի համար էր :

ԲԵՄԱԴՐԻՉԸ — Օ՛հ... պատմութիւններ կը հնարէք :

ՏՂԱՆ (արհամարհանալով) — Այո. կատարելապէս իրաւունք ունիք. դրա-
կանութիւն կ'ընէ :

ՀԱՅՐԸ — Գրականութիւն... Կեանք է, պարոն. եւ տառապանք...

ԲԵՄԱԴՐԻՉԸ — Կրնայ ըլլալ, սակայն կարելի չէ ատիկա խաղալ :

ՀԱՅՐԸ — Ամբողջովին համաձայն եմ, պարոն անօրէն : Այդ բոլորը տեղի
պիտի ունենան վարագոյրը բացուելէն առաջ. դայն ըիմ հանելէն ոչ
մէկ օրուս : (Յայց տալով խորք աղբիկը) : Ինչպէս կը տեսնէք, հիւս-
կէնները կոնակէն կախ աղջնակ մը չէ այլեւս :

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ — Չկան նաեւ տարատները, որոնք շրջագրեստէս երկար
էին...

ՀԱՅՐԸ — Տրամը նոր է, պարոն. ինքնատիպ է, բարդ, շա՛տ հետաքրքրա-
կան. հուստացէք ինծի :

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ — Հօրս մահէն ետք...

ՀԱՅՐԸ — Թշուառութիւնը մտաւ իրենց տունէն ներս : Վերադարձեր են հոս,
տունց որ էս լուր ունենամ : Ատիկա՝ ի՛ր յիմարութեան պատճառով :
(Յայց տալով կիճը) : Հազիւ թէ դրել գիտէ, ճիշդ է. սակայն կրնար
աղջկան կամ տղուն միջոցով գրել տալ ինծի, որ իրենք կարիքի մէջ
էին :

ՄԱՅՐԸ — Ընդունեցէք պարոն, թէ այս բոլոր բարի տրամադրութիւնները
զուշակել չէի կրնար :

ՀԱՅՐԸ — Քու ամենամեծ յանցանքդ ատիկա է եղած. երբե՛ք չես կրցած
զուշակել զբացումներէս եւ ո՛չ մէկը :

ՄԱՅՐԸ — Այնքան տարիներու բաժանումէն եւ այնքա՛ն անցուդարձերէ
ետք...

ՀԱՅՐԸ — Ե՛ս եմ յանցաւորը, որ այդ բարի մարդը ձեզ տաւ-տարաւ : (Տնօ-
րէիիմ) : Ինչպէս ըսի, անպարարի մը նման, մէկ օրէն միւսը անհետա-
ցուցած էր զիրենք, որովհետեւ չգիտեմ ի՞նչ պաշտօն մը գտած էր՝
այլուր : Հնարաւոր չեղաւ ինծի իրենց հետքը գտնել. ուստի՝ բնականօ-
րէն քիչ-քիչ, նուազ հետաքրքրուեցայ իրենց մով... : Տրամը պայթե-
ցաւ յանկարծ եւ բռուն կերպով, իրենց վերադարձին : Այն օրը, երբ,
աւա՛ղ, տարուած դեռեւս կեանքով լի մարմնիս թշուառութիւնէն... :
Այո՛, ինչպիսի՛ թշուառութիւն է միայնակ մարդու մը համար, որ
նուատացուցիչ կապեր ընդունիլ չ'ուզեր եւ որ այնքան ծեր չէ տա-
կաւին, որ կարենայ կնոջ պահանջը չ'ունենալ, ոչ ալ բաւական երի-
թաւորը՝ որ կարենայ առանց ամչնալու հետապնդել զանոնք... : Ի՛նչ
թշուառութիւն. ի՛նչ կ'ըսեմ, ի՛նչ զարհուրանք... : Ոչ մէկ կին կրնայ
այլեւս սէր տալ նման մարդու մը : Անմիջապէս որ կ'ըմբռնենք ատիկա՝
պէտք է հրաժարինք կիներէն... : Ա՛հ, պարոն, ամէն մարդ, ուրիշ-
ներուն առջեւ, երեւութապէս կը ներկայանայ արժանապատուութեամբ
լի... սակայն ամէնքս ալ լաւ գիտենք, թէ ինչպիսի անխոստովանելի
բաներ տեղի կ'ունենան մեր մէջ, երբ մենք մեզի հետ առանձին կը
մնանք : Յաճախ տեղի կու տանք փորձութեանց, անմիջապէս ետք, մեծ
փութկոտութեամբ վերականգնելու համար մեր ամբողջական արժա-
նաւորութիւնը, ամուր՝ ինչպէս չիքիմի վրայ դրուած քարը, մեր սե-
փական աչքերէն ծածկուելու համար, թաղելու համար բոլոր հետքե-
րը, մինչև անգամ յիշատակը մեր ամօթանքին : Այս այսպէս է ամէ-

նուն համար: Սակայն ամէնուն տրուած չէ այդ բոլորը խոստովանելու քաջութիւնը:

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ.— Այո՞: Որովհետեւ նման բաներ ընելու քաջութիւնը... բոլոր տղամարդերը ունին...

ՀԱՅՐԸ.— Բոլոր տղամարդերը: Սակայն՝ դադանորէն: Ատոր համար է, որ քաջութեան կարիքը կայ՝ խոստովանելու համար: Կը բաւէ, որ մէկը խոստովանի այդ բոլորը եւ իսկոյն շնական կը համարեն զինք: Ու կը սխալին, պարոն. նման խոստովանողն ալ միւսներուն նման է. նոյնիսկ աւելի լաւ է, քան միւսները, որովհետեւ չի վախնար իր իմացականութեան լոյսը սփռելու ամօթանքի կարծիքին վրայ, որուն, մարդկային անասնականութիւնը չ'ուզեր ճակատէն նայիլ... մեծամասնութիւնը նոյնիսկ աչքերը կը գոցէ՝ իր շառագունումը շտեմնելու համար... Կինը, զիտէ՞ք, թէ ինչպէս կը վարուի կինը, կը նայի ձեզի դրոշմը ու հրապուրիչ նայուածքով մը: Կը բռնէք զայն: Հազիւ դրկերնուդ մէջ սեղմած՝ ան կը գոցէ աչքերը: Ատիկա ինքնալքումի նշանն է. նշանը, որ կ'ընէ մարդուն՝ «կուրցի՛ր, ես կոյր եմ»:

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ.— Իսկ երբ կինը չի գոցեր, երբ այլեւս կարիքը չի զգար աչքերը փակելու, ինքնիրմէ պահուցուելու, ամօթին շառագունումը ծածկելու... երբ, ընդհակառակն, շոր ու անտարբեր այքով մը կը նայի մարդուն, շառագունումին, որ կուրցած է՝ առանց յաւելեալ սէր զգալու...: Ա՛հ, ինչ զգուելի կը դառնան այն աստեղ ուղեղային բարդութիւնները, այդ փիլիսոփայութիւնը, որ կը շղթայագործէ դազանը եւ սպա կ'ուզէ ազատել զայն, արդարացին...: Լսել չեմ կրնար, պարոն: Երբ մարդս հարկադրուած չէ, ինչպէս ես էի, կեանքը «պարզացնելու» այդպէս, անասնական ձեւով, մէկդի նետելով «մարդկային» ամէն բնու, սրբազան ըղձանքները, զուսպ ձորումներ, իտէալներ, պարտականութիւն, զոհարարելով իր ամօթխածութիւնն ու ամօթանքը, ոչինչ կրնայ բարկութիւն առթել եւ այնքան նողկանք պատճառել, որքան նման խղճահարութիւնները...: Կոկորդիլոսի արցունքները...

ԻԵՄԱՆԻԻԶԸ.— Նիւթին եկէք, ինդրեմ. նիւթին գանք: Այս բոլորը տեսութիւններ են պարզապէս:

ՀԱՅՐԸ.— Լաւ, շատ լաւ. սակայն իրականութիւնները տուրակներու կը նմանին, եթէ պարսպ են, ուրի չեն կրնար մնալ: Որպէսզի իրողութիւն մը կարենայ ոտքի մնալ եւ իմաստ մը ունենայ, պէտք է նախ տեղաւորել անոր մէջ զինք յառաջանող դրոշմապատճառները, զգացումները: Ես չէի կրնար զիտնալ, որ այդ մարդուն մահէն ետք, թշուառութեան մէջ ինկած գաւակները ապրեցնելու համար (ցոյց տալով մայրը) կարուհի պիտի դառնար ու պիտի երթար գործ ինդրելու ճիշդ նոյնինքն տիկին Փաշէն:

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ.— Ա՛հ, հռչակաւոր դերձակուհի մը՝ տիկին Փաշէն... Եթէ կ'ուզէք դիտնալ: Երեւութապէս կը ծառայէ բարձր դասու տիկիններուն, սակայն դործը այնպէս մը դասաւորած է, որ այդ զլաւ տիկինները, իրենց կարգին, ծառայեն իրեն. դեռ չխօսելով նուազ զլաւ տիկիններէն իր կատարած շահերուն մասին...

ՄԱՅՐԸ.— Կը յուսամ, կը հաւատաք պարոն, թէ ոչ իսկ վայրկեան մը մտքս անցած է, թէ այդ ջատուկը դործ կը հոյթայթէր ինծի, պարզապէս որովհետեւ աչքը տնկած էր աղջկանս վրայ:

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ.— Ինչո՞ւ մայր: Գիտէ՞ք ինչ կ'ընէր այդ տիկին Փաշէն, երբ իրեն կը բերէր աշխատուած դործը...: Նախ դիտել կու տար, թէ ինչ

պիտի՛ կերպասներ, ի՛նչ պիտոյքներ մտնած էր, մօրս յանձնելով կա-
րի գործ մը. ապա՛ կը զննէ՛ր, կը զննէ՛ր վճարումէն...: Այն ա-
տեն, կը հասկնաք անշուշտ, ես էի որ կը վճարէի, մինչ այս խեղճ
կինը կը կարծէր, թէ ինչպիսիք կը զոհարերէ ինձի եւ այս երկու պըզ-
տիկներուն համար՝ գիշերները լուսցնելով տիկին Փաշէի հագուստ-
ներուն վրայ:

ԲԵՄԱՐԻՒՉԸ.— Եւ հոն էր, որ օր մը հանդիպեցաք...

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ (ցոյց տալով հայրը).— Այո, պարոն, հանդիպեցայ իրեն,
տիկին Փաշէի հին յաճախորդներէն մին: Պիտի տեսնէք, թէ ինչ տե-
սարան դուրս կու գայ. ապշեցուցիչ բան մը:

ՀԱՅՐԸ.— Եւ մօրը վրայ հասնիլը:

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ (նեղուրբամբ).— Գրեթէ ճի՛շդ ատենին:

ՀԱՅՐԸ.— Ոչ թէ գրեթէ, այլ՝ ատենին, ատենին: Բարեբախտաբար ճի՛շդ
ժամանակին ճանչցայ պինք: Եւ հիւրընկալեցի դերենք, բոլորը միա-
սին, իմ տանս մէջ: Կըմբռնէք իմ վիճակս եւ իրը: Ինք՝ կը տեսնէք
ահա իր կեցողածը. իոկ ես, այլեւս չեմ համարձակիր երեւը նայելու:

ՊՅՈՐԹ ԱՂՋԻԿԸ.— Ձարմանալի մարդ է: Ինչպէ՛ս կ'ուզէք, պարոն, որ այդ
բոլորէն ետք կարենամ համետտ, պէտք եղածին նման, գոքը աղջնակ
մը դառնալ, որպէսզի «բարոյական ուժեղ առողջութեան» մը մասին
իբ ունեցած անիծեալ ցանկութեանց կերպարին համապատասխանած
ըլլամ...

ՀԱՅՐԸ.— Տրամը, ըստ ինձի, ամբողջովին ատոր մէջ է, պարոն. իմ գիտակ-
ցելուն մէջ՝ մեզմէ իւրաքանչիւրին այնպէս կարծելուն, թէ «մէկ» է
ինք, մինչդեռ ամէն մարդ «հարիւր» է, «հազար» է. այնքան անգամ
«մէկ» է, ո՛րքան կարելիութիւն կայ իր մէջ...: Ատոր հետ «մէկ»ն է,
միւսին հետ՝ ուրիշ մը: Ատիկա, միշտ ալ պահելով պատրանքը, թէ
ինք նոյնը կը մնայ, բոլորին համար, այն «մէկ» էակը, զոր կը կար-
ծենք ըլլալ մեր բոլոր արարքներուն մէջ: Մինչդեռ չկայ ատէկ աւելի
մեծ անճշտութիւն: Մենք այդ իրողութեան կ'անդադառնանք, երբ,
դժբախտ պատահարով մը, մեր արարքներուն մէջ բան մը սխալ կ'ըն-
թանայ. այն ատեն կը նշմարենք, թէ մենք մեր ամբողջ էութեամբ
մասնակից չենք մեր այդ ընկրկումին, տկարացումին. եւ որ անուոր
անարդարութիւն մը պիտի ըլլար, եթէ մեզ զատէին միայն մէկ հատիկ
արարքին համար, եւ անարգանքի սիւնին գամէին մեր ամբողջ կեան-
քին համար, իրբեւ թէ մեր ամբողջ կեանքը խտացած ըլլար այդ միակ
արարքին մէջ: Կըմբռնէ՞ք հիմտ նենդութիւնը այս աղջկան: Ձիս ա-
նակնկալի բերաւ տեղ մը, կեցուածքի մը մէջ, ուր պէտք չէ որ տեսած
ըլլար զիս. զիս տեսաւ այնպէս՝ ինչպէս երբեք պէտք չէ երեւէի իր
աչքին, եւ հիմա կ'ուզէ ինձի հպուստեան անձնաւորութիւն մը, որ ես,
չեմ կարծեր, թէ պէտք է ընկալեմ, իր պատկերացուցածը ըլլալու հա-
մար. անձնաւորութիւն մը, որ իմն եղաւ զոյութեանս անցողակի եւ
ամօթալի մէկ պահուն: Ահա, պարոն, թէ ինչ կը զգամ: Եւ զուք պի-
տի տեսնէք, որ ատիկա տրամին պիտի տայ մեծ տարողութիւն մը:
Կայ սակայն նաեւ միւս անձնաւորութիւններուն կացութիւնը: (Տղամ
ցոյց տալով): Կայ իր վիճակը:

ՏՂԱՆ (արհամարհանալով ուսերը շարժելով).— Ձիս հանդիստ ձգեցէք: Ես
ո՛չ մէկ գործ ունիմ հող:

ՀԱՅՐԸ.— Ինչպէ՛ս թէ ոչ մէկ գործ ունիս:

ՏՂԱՆ.— Ոչ մէկ գործ ունիմ եւ չեմ ուզեր որեւէ բանի խառնուիլ...: Դուն

շատ լաւ գիտես, որ ես ստեղծուած չեմ ձեզի հետ դորձ ունենալու համար :

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ .— Ա՛հ, այո՛, մենք ոչինչ մարգեր ենք. իսկ ինքը՝ Չեւի սրունքէն դուրս եկած է . . . : Իայց դուք կրցաք նշմարել, պարոն, որ ամէն անգամ, որ արհամարհայից ակնարկ մը կը նետեմ իրեն, ի՛նքն է որ կը խոնարհեցնէ այգերը . . . : Շատ լաւ գիտէ, թէ ինչ չարիք հասցուցած է ինձի :

ՏՂԱՆ (հագիւ մայիլով աղբկան) .— Ե՛ս :

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ .— Դո՛ւն, այո, դո՛ւն : Դուն էիր որ դիս մայթերուն վրայ նետեցիր : Քու կեցուածքդ չէ՞ր, որ արգելք հանդիսացաւ այն պարզ ու տարրական մարդասիրութեան, — ըսել չեմ ուզեր, թէ նշմարիտ մտերմութիւն մը կար տան մէջ, ո՛չ, — սակայն այն պարզ ու տարրական մարդասիրական մտեցումին, որ վստահութիւն կը ներշնչէ հիւր եղողներուն, եւ զանոնք գերձ կը կացուցանէ անցանկալի ըլլալու մտածումէն ու զգայնութենէն : Մենք դարձանք «ինքնակոշներ», որոնք կու գային ներխուժել թու ճիւղակիան սահմաններէդ ներս : Ա՛հ, պարոն, պիտի ուզէի ձեզ մասնակից դարձնել իրեն հետ ունեցած իմ դժլուրի զլիտի քանի մը տեսարաններուն : Կ'ըսէ թէ ես ուզած եմ բռնադատել բոլոր շուրջիներս . սակայն հիշդ իր այդ կեցուածքին պատճառով էր, որ ես դիմեցի այդ փաստարկումին, զոր ինք «վստողի» կ'որակէ. ահա թէ ինչու ես այդ տունը մտայ, մօրս հետ, — որ իր մայրն է նոյն ատեն, — իբրեւ տանտիրուհի :

ՏՂԱՆ .— Բոլորն ալ աղուոր դերեր ունին իմ դէմս, պարոն . դիւրին է իրենց դերը : Երեւակայեցէք սակայն դաւակ մը, որ իր տան մէջ կ'պարի շատ խաղաղ, եւ օր մըն ալ կը տեսնէ ժամանումը երիտասարդ ու լրբենի աղջկայ մը, որ կը հարցնէ, թէ մ'ըր է իր հայրը, որուն չեմ գիտեր ի՞նչ ունի եղեր հաղորդելիք . որ յանկարծ կը տեսնէ ու կը լսէ այդ աղջիկը, որ կու գայ միշտ նոյն այս հովիտով, ընկերակցութեամբբ սա աղջնակին, որ կը տեսնէ, թէ ան իր հօրը հետ կը վարուի երկզիմի եւ հարկադրող ձեւերով, զրամ կը պահանջէ անկէ եւ այնպիսի՛ եղանակով մը, որ ենթադրել կու գայ, թէ մարդը այդ դրամը պիտի տայ իրեն, որովհետեւ ստիպուած է տալ . . .

ՀԱՅՐԸ .— Ըհիշդ է, ստիպուած էի տալու . մօրդ համար էր :

ՏՂԱՆ .— Ես ի՛նչ գիտէի այդ մասին : Ե՛րբ անսած էի մայրս : Ե՛րբ խօսած էին ինձի անոր մասին : Օր մը իր երեւան գալը տեսայ : (Յոյց տալով խորք ազդիկը) : Իր եւ այս փոքր մանչուն ու աղջնակին հետ : Ու ըսին ինձի՝ «Ան նաեւ թու մայրդ է, դիտե՛ս» : (Կրկին ցոյց տալով խորք ազդիկը) : Իր ձեւերէն դատելով կրցայ ըմբռնել, թէ ինչպէս է, որ մէկ օրէն միւսը անոնք մուտք դորձեցին մեր տունը . . . : Ա՛հ, պարոն, ինչ որ կը գգամ, չեմ կրնար, չեմ ուզեր բացատրել : Կրնամ, շատ-շատ, զգուցումներս յայտնել խորհրդապահօրէն . . . եւ ես, ստիկա ինքզինքիս խոստովանելով իսկ արդէն քաւական կը տատապիմ : Հետեւաբար, այս տրամին մէջ ես ոչ մէկ դեր ունիմ խաղալիք : Հաւատացէք ինձի, պարոն, ես թատրոնին մէջ անիրականացնելի անձնաւորութիւն մըն եմ : Այս, ես իրենց հետ ընելիք չունիմ . թող հանդիստ ձգեն դիս :

ՀԱՅՐԸ .— Ինչպէ՛ս . . . բայց ճիշդ որովհետեւ դուն կատուցուած ես այնպէ՛ս՝ ինչպէ՛ս որ ես . . .

ՏՂԱՆ .— Ո՛վ ըսաւ ընդի, թէ ինչպէս կատուցուած եմ ես : Դուն ե՛րբ դրադած ես ինձմով :

ՀԱՅԲՐԸ.— Հասկնալի է, կ'ընդունիմ. սակայն մի՞թէ «թատերական» կացութիւն մը չէ, ինծի Համար այնքան դատան եղող քու, ինքզինքդ տեսարար մօրմէդ հետու պահելը. մօրմէդ, որ վերադարձած է տուն եւ առաջին անգամ ըլլալով քեզ կը տեսնէ մեծցած. մայրդ, որ չի ճանչնար քեզ, բայց գիտէ, որ դուն էր գաւազն ես: (Յոյց տալով մայրը): Տեսէք, կու լայ:

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ (առտեքը կատարութեամբ գետին գարնելով).— Ապուշի մը պէս:

ՀԱՅԲՐԸ (բեմագրիչին ցոյց տալով խորթ աղջիկը).— Եւ ինք բնականաբար չի կրնար տանիլ զայն: (Վերսկզբով խօսիլ տղուն մասին): Կ'ըսէ, թէ դորձ չունի արամին մէջ, մինչդեռ ինք առանցքն է դորձողութեան: Նայեցէք սա խեղճ պզտիկին, որ կծկուած կը մնայ մօրը մօտ, վախ՝ վրէնելով, նուաստացումի կեցուածքով մը... Ինքն է ատոր պատասխանատուն, Ամենաողբերգական կացութիւնը թերեւս այս պզտիկինն է. ինքզինք օտար կը զգայ աւելի՛՝ քան միւսները. խեղճ փոքրիկը... անձկութեամբ չի նուաստացումի ապրում մը ունի, այսպէս, ողորմա՛ծութեամբ մեր տունէն ներս ընդունուած ըլլալուն: (Խորհրդապահաբար): Ճիշդ էր հայրն է... անոր պէն՝ խոնարհ. ոչ մէկ խօսք կ'ըսէ:

ԲԵՄԱԴՐԻԾԸ.— Ասիկա չէ լաւադոյնը ձեր արամին: Դուք չէք կրնար դիտնալ, թէ պզտիկները ինչպիսի՛ դժուարութիւններ են բեմին վրայ:

ՀԱՅԲՐԸ.— Օ՛հ, անիկա երկար պիտի չձանձրացնէ ձեզ. այդ աղջնակը եւս. մինչեւ անգամ ինքն է, որ առաջինը կը հետանայ... Տրամը կը լուծուի հետեւեւալ ձեռով. երբ այս խեղճ մայրը մտաւ տունս, պզտիկները, զորս ունեցած էր այս տունէն դուրս, կը կազմէին յաւելիալ ընտանիքը, որ կ'անհետանայ այս աղջնակին մահով, պզտիկին անձնատուութեամբ, մեծ աղջկան տունէն փախուստով: Այդ ընտանիքը չի կրնար ազրիւ, որովհետեւ օտար է օձախին: Այնպէս որ, բոլոր փոթորիկներէն ետք, մենք երեքս — ես, մայրը եւ տղան — ինքզինքնին կը դռնէնք, այդ օտար ընտանիքին անհետացումով, մենք ալ օտար իրարու, մահացու ամայութեան մը մէջ... Վրիժառուութիւնն էր, ինչպէս ըստու տղան հեղեանքով, վրիժառուութիւնը փորձութեան սատանային, որ, աւա՛ղ, ներսս է եւ կը ստիպէ ինծի հետապնդել անկարելի երջանկութեան մը իրագործումը, երբ կը պակսի բացարձակ հաւատքը, ա՛յն հաւատքը, որ մեզի խոնարհաբար ընդունիլ կու տայ կեանքը այնպէս՝ ինչպէս որ է... Մեր հպարտութիւնը մեզ կը մղէ կեանքը փոխարիւնելու մեր անձով, ուրիշներուն համար զարբնելու իրականութիւն մը, որ կը կարծենք, թէ լաւ պիտի ըլլայ իրենց համար, եւ որ սակայն այդ արդիւնքը չի տար... պատճառն այն է, որ մեզնէ իւրաքանչիւրը իրականութիւն մը ունի, զոր պէտք է յարգել Աստուծո՛վ տրուած բանի մը նման, նոյնիսկ եթէ ատիկա ցաւ պատճառէ մեզի:

ԲԵՄԱԴՐԻԾԸ.— Լաւ. ստիպուած եմ ընդունելու, թէ կը հետաքրքրէք զիս եւ՛ շատ: Այս ամէնուն մէջ կը տեսնեմ լաւ արամի մը աստղճը...

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ (փարձուելով խաճուիլ խօսակցութեամբ).— Ինծի նման անձնաւորութի՛ւն մը...

ՀԱՅԲՐԸ (հրելով խորթ աղջիկը եւ սնձկագին սպասելով բեմագրիչի արջուտին).— Դուն լու՛հ, լու՛հ:

ԲԵՄԱԴՐԻԾԸ (իր մտածումը շարունակելով).— Ամբողջովին ինքնատեպ...
ՀԱՅԲՐԸ.— Այնպէս չէ՞, պարոն տնօրէն:

ԲԵՄԱԴՐԻՉԸ.— Բայց մեծ յանդգնութիւն է, դալ ալուպէս, ինծի հրամցնել հուժ Երևթը, այսպիսի ինքնապատահութեամբ մը...

ՀԱՅՐԸ.— Կ'ըմբռնէ՞ք, պարոն տնօրէն, մենք ծնած ենք թատրոնին համար, այնպէս՝ ինչպէս որ ենք...

ԲԵՄԱԴՐԻՉԸ.— Սիրող դերասաններ էք:

ՀԱՅՐԸ.— Բնաւ երբեք. «Թատրոնի համար ծնած» ըսի, որովհետեւ...

ԲԵՄԱԴՐԻՉԸ.— Մի փորձէք ինծի հաւատացնել, մա'նաւանդ դուք, որ բնաւ բեմ ելած չէք:

ՀԱՅՐԸ.— Սակայն կը վստահեցնեմ ձեզի, պարոն տնօրէն, որ միայն իմ սեփական դերս խաղցած եմ. եւ կամ, կեանքի ընթացքին ուրիշներու կողմէ ինծի պարտադրուած գերերը: Իմ հրայրքս է որ, — ինչպէս բոլորի պարագային, — երբ կ'ողուորուիմ, իսկոյն քիչ մը թատերական բնոյթ կ'առնէ:

ԲԵՄԱԴՐԻՉԸ.— Հաւ. չպնդենք: Պէտք է հասկնաք սակայն, սիրելի պարոն, թէ առանց հեղինակի... Մտիկ ըրէք, կրնամ ձեզի յանձնարարել...

ՀԱՅՐԸ.— Ո՛չ, ո՛չ. պէտք է դո՛ւք ըլլաք:

ԲԵՄԱԴՐԻՉԸ.— Կատակ կ'ընէք:

ՀԱՅՐԸ.— Երբեք. դո՛ւք, դո՛ւք, ինչո՞ւ ոչ:

ԲԵՄԱԴՐԻՉԸ.— Կեանքիս մէջ փիւս դրամ չեմ:

ՀԱՅՐԸ.— Ինչո՞ւ ալսօր չսկսէք: Թատրոնին համար դրող այնքան շատ մարդիկ կան: Ասկէ աւելի դիւրին բան չկայ: Եւ ձեր դործը աւելի դիւրին է, քանի որ մենք բոլորս կենդանի, ապրող էակներ, ձեր դիմաց կը գտնուինք...

ԲԵՄԱԴՐԻՉԸ.— Ատիկա բաւարար չէ:

ՀԱՅՐԸ.— Ինչո՞ւ, դուք ձեր աչքերով իսկ պիտի տեսնէք ձեր տրամը ապրիլը:

ԲԵՄԱԴՐԻՉԸ.— Այո, սակայն հարկ պիտի ըլլայ դրել զայն:

ՀԱՅՐԸ.— Ո՛չ. կը բաւէ պարզապէս արտադրել ա՛յն, ինչ որ մենք պիտի ըտենք, տեսարան առ տեսարան: Պիտի բաւէ նոյնիսկ համառօտ սեմաքիօ մը պատրաստել ու փորձերուն սկսել:

ԲԵՄԱԴՐԻՉԸ.— Ա՛հ, գրեթէ փորձութեան կ'ենթարկէք զիս. Արթէ փորձել:

ՀԱՅՐԸ.— Այո, պարոն տնօրէն: Եւ պիտի տեսնէք, թէ ինչպիսի՞ տեսարաններ դուրս պիտի գան. այժմէն իսկ կրնամ մատնանշել զանոնք...

ԲԵՄԱԴՐԻՉԸ.— Իրապէս կը փորձուիմ: Փորձենք: Ինծի հետ եկէք դրասենեակս: (Դերակատարներուն): Կրնաք պահ մը հանգստանալ, բայց կը խնդրեմ, որ չհեռանաք: Քառորդ ժամէն, առաւելագոյնը քսան վայրկեանէն կը գերադառնանք...: (Հօրը): Ուրեմն, օ՛ն, փորձենք. կրնայ իրապէս արտակարգ բան մը դուրս գալ:

ՀԱՅՐԸ.— Այդ մասին ոչ մէկ կասկած: Ձե՞ք կարծեր, թէ աւելի լաւ պիտի ըլլայ (մտմանը շնորհիւ միւս անձնատրուքիւնները) եթէ զանոնք ալ միասին տանինք:

ԲԵՄԱԴՐԻՉԸ.— Անկասկած: (Կը պատրաստուի դուրս ելլելու. յետոյ կը դառնայ դերակատարներուն): Խնդրեմ, ճշդապահ եղէք...

(Բեմադրիչն ու վեց անձնատրուքիւնները կ'անցնին բեմէն ու կ'անհետանան: Դերակատարները, զարմացած, իրարու կը նային):

ԱՌԱՋԻՆ ՄԵԾ ԴԵՐԱՎԱՍՏԱՐԸ.— Հարցը լուրջի առած ըլլալ կը թուի: Ո՛ւր պիտի յանգի արդեօք:

- ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՌԱՋԻՆ ԴԵՐԱՍԱՆԸ.— Պարապ բան է:
- ԵՐՐՈՐԴ ԴԵՐԱԿԱՏԱՐ ՄԸ.— Կ'ուզէ՞ մեզ յանպատրաստից խաղալ տալ, ա յն-
պէս՝ ինչպէս կ'ընեն սինեմային մէջ: — — —
- ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՌԱՋԻՆ ԴԵՐԱԿԱՏԱՐԸ.— Ինչպէս «Քամեախա տէլ Արթէ»ին
մէջ:
- ՊԶՆԱՍԷՐ ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻՆ.— Օ՛հ, ես նման արտասոցութիւններու չեմ են-
թարկուիր:
- ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՌԱՋԻՆ ԴԵՐԱԿԱՏԱՐԸ.— Ես ալ...
- ԶՈՐՐՈՐԴ ԴԵՐԱԿԱՏԱՐ ՄԸ (ակնարկելով անձնաւորաւթիւններում) — Շատ
պիտի ուզէի գիտնալ, թէ ուրի՞նչ կ'ընեն են անոնք:
- ԵՐՐՈՐԴ ԴԵՐԱԿԱՏԱՐԸ.— Կամ խնթանոցէ մը ելած են, կամ ալ խարերս-
նեք են...
- ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՌԱՋԻՆ ԴԵՐԱԿԱՏԱՐԸ.— Եւ մեր տնօրէնն ալ գիտէնք լրջօրէն
մտիկ կ'ընէ...
- ՊԱՐԶԱՄԻՏ ԱՂԶԿԱՅ ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻՆ.— Կատարեալ ունայնամտութիւն...
կը կարծէ թատերադիր դարձած ըլլալ:
- ԱՌԱՋԻՆ ԴԵՐԱՍԱՆԸ.— Իրապէս շտուած բան է. մինչեւ մ'եր իջած է թառ-
բոնք:
- ՀԻՆԳԵՐՐՈՐԴ ԴԵՐԱԿԱՏԱՐԸ.— Ես այս բոլորը ծիծաղելի կը գտնեմ:
- ԵՐՐՈՐԴ ԴԵՐԱԿԱՏԱՐԸ.— Պա՛հ, ի վերջոյ պիտի տեսնենք, թէ ինչ դուրս
պիտի գայ այս բոլորէն:

(Նման բաներ խօսելով, դերակատարները կը հեռանան բեմէն. բմանք
խորքի դուռէն, միւսները՝ վերագրաւելով իրենց օքեակները: Վարագոյրը
բաց կը մնայ: Ներկայացումը կ'ընդմիջուի քսան վայրկեան)

ՀՈՒԻՃԻ ՓԻՐԱՆՏԵԼԼՈ

(Շար. 2)

Ս. Փ Ա Ն Ո Ս Ե Ա Ն

Մ Ա Ք Ս Ա Ն Ե Ն Գ Ո Ւ Ա Ծ

Ա Պ Ր Ա Ն Ք Ը . . .

(Հատուած՝

ԱՌԱՋԻ ՎՐԱՅ ԾԱՂԿԱԾ ԾԻՐԱՆԻ վէպէն)



Տատմէր Եղսան բարի, սրացաւ, տա-
րիքոտ կին էր. համակրելի՛ հակառակ
կռչա դիմադժեր եւ հալէ ինկած էրիկ ու-
նենալուն: Իր տարած պարտականութիւ-
նը, ջերմաշափի պէս կը բարձրացնէր կամ
կ'իջեցնէր ամէն անգամ, որ իրեն հանդի-

պէր ծոցուոր հարսնուկ մը, պզտիկներու
մայր կամ այնպէս՝ դժբախտացած այրի
կին մը: Բոլոր տեսակներն ալ կը դժգո-
հէին, որ ծոցուոր են մնացեր այս շոր ու
դժուարին ժամանակներուն մէջ:

— Ժամանակը չէր, ամժա եղաւ. ճար
մը գտիր, տատմէր, թափեմ, ազատիմ
այս պելայէն, — կը կրկնէին եւ սակայն
կը շարունակուէր ծոցուոր կիներուն շա-
բանը, պէսպէս դարգերով՝ տատմէր Եղ-
սայի վրանին գուռերը. . .

Եզսա գրուիք կը շարժէր. կը հաս-
կընար ամէնուն ցաւը: Ի՛նչ, մարդիկ
կ'ապրէին, կարծէք, պատերազմի դացող
զինուորի հոգեվիճակ մը. թագափեասյ
է, կ'երթայ կոխի. մահ կայ, հազար տե-
սակ անակնկալ. մէկ անգամ եւս պիտի
վայելէ իր փեսայութիւնը, որ հարսը ժա-
ռոնկ մը ունենայ իրմէ, իբրեւ յիշատակ:
Կամ նոր նշանուած՝ կը կանչուի բանակ
եւ բանակը կուռի մէջ է, ինչ կ'ըլլայ,
չ'ըլլար. կը պսակուի, իբրեւ թէ մէկ օր
ապրելու աղջկան հետ. . . : Յետոյ, որ-
քան մարդիկ, ամէնքն ալ պատերազմի
հոգեվիճակը ապրողի պէս, երեսուն հո-
գինոց խիտ բնակեցուած վրանին տակ՝
դիշերը, իրենց ցանկութիւնը գողցան,
չբռնուելու վախով աւելի բուռն փարու-
մով. . . : Եւ ահա, մուկը կ'իյնար կարտ-
սը: Հաճոյքը մէկ վայրկեանի համար էր
եւ յղութեան տազնայը՝ ամիսներու մը-
տալլիւմ, զարդ, վիշտ՝ ինչպէ՞ս ազա-
տիլ հետզհետէ ծանրացող բեռէն, բուռ-
ւած աչքերու տուած ամօթէն:

— Ամա՛ն, տատմէր. հասիր. ճիժ ու
պիժի տէր եմ. ասիկա աւելորդ էր: Զա-
րը գտիր, թափեմ, ազատիմ. . .

Եւ տակաւին կիներ, այս Աղուոր
Նուարդին պէս, որոնք մտածեցին ճիշդ
մաքսանենպութիւն ընող կարօտ մէկու մը
նման: Զրկուած են էրիկէ, զո՛հ՝ կոխնե-
րու կամ համաճարակին, դաղթի ճամ-
բուն կամ դաղթակայանի մէջ՝ մահուան
մանգաղին բռնուած. . . : Երիտասարդ են,
քաղցած, բնութեան մէկ պարտաւորու-
թենէն մարմինը եռքի մէջ ու կը պատու-
հի, որ ակամայ ինչան մաքսանենդու-
թեան մէջ, ու բունուին կատարուած իրո-

զուժեան յանցանքով: Վրայ տուած են
ամէն վաստակ, կորուստի մասնած ի-
րենց միակ հարստութիւնը՝ պատիւը:

— Ամա՛ն, աստձէր, զէ՛ մատաղ.
պատիւօ, անունս սոքի տակ կ'երթայ.
մեղք եմ, մարդս չկայ, յղի եմ մնացեր,
ճար-զարման. թափեմ աղտախմ անպատ-
ւութիւնէ...

Ի՞նչ կրնար ընկ տամէր Եղսան.
առջեւը կը ցցուին մեղք դործելու, են-
թական մահուան դուռը չմտնու խղճմը-
ասանքը, անդիւր սորձած օրէնքները. հայ
քրիստոնեան չհաւատուող մէկ աղախի-
նը, բժշկական տարբական միջոցներէ
զուրկ եւ ռամիկ տամէր մօրմէ սորձած,
փրաքիճայով անպարզէս կրին, ինչպէ՞ս
Համէէր դարդատէր խեղճ կրնորուն, Աղ-
ւար Նուարդին պէս՝ մաքսանենդուած
ապրանքով բռնուած դեռատի այրինե-
րուն...

Եղսան կը յիշէր իրեն համապիւղացի
կոտան Մկրտիչը: Կոտան գոմէջ կը կո-
չէին: Իր օրին, Մկրտիչ եղած էր կրօն
երիտասարդ. կնամուլ, որ միշտ կը դանէր
առիթը ասոր կնոջը վրայ բռնանալու: Ե-
նոր հարսը ճանկ անցնելու՝ աղբիւրի
ճամբան, դաշտի կորեկարտերու մէջ կամ
ճարի աճալութիւնէն օգտուելով: Անտակ
որդի էր, նպովուած թահառայէն, տանու-
տէրէն, ժողովուրդէն. չեռ ու ճոր թա-
փառող դազան, որ ունէր կոտոյնէր —
դաշտին ու ատրճանակը —: Զափ ու
սահման անցած դոմւացուլ մը, որ հտաը
տուած՝ կը վազէր կովերու ետեւէն...: Սաստ,
հետապնդում է դուր էին անցած: Ի
վերջոյ, բողոքը վնաս թուրք ստոկա-
նապետին: Իշխանութիւնը ձերբակալեց
զինք եւ նետեց բանա: Բանապետը դա-
ժան մարդ էր, իր հաճոյքին համար եւ
էրմէնի ցեղին անհաշտ թշնամի՝ կոտել
տուաւ Մկրտիչը, որ դուրս ելաւ բանտէն
եզան մը պէս խելօքցած: Աչքէ, պատիւէ
ինկած մարդ էր այլեւս. գլուխը առաւ
ու չքուեցաւ գիւղէն, շրջանէն: Գաղթին,
ան փրադարձած էր դիւղ եւ գօտիին մէջ
ունէր տարիներու վտտակ՝ դեղին ոսկի-
ներ...: Ի չզոյժէ զինք ճանչցողներու, ան
բարի մարդու համբաւով կը հասնէր Գա-
զուպա, Տիալայի ափին կայք հաստատած

դազթական ժողովուրդին մաս կազմե-
լով:

Այս Մկրտիչն էր, զոր ունէր միտքին
մէջ, երբ դեռատի Աղուար Նուարդ, որ-
բանոցէն եկաւ իր մօտ ազալանքի:

— «Անխղճութիւն է, Եղսա, բայց ու-
րիչ միջոց չկայ, կենը փրկել է պէտք ան-
պատուութիւնէն» — խորհեցաւ տամէրը
եւ էրիկը գրկեց Մկրտիչին ետեւէն, —
ըսա, Եղսան զէ կը կանչի վտաղ...

Յիշեց, որ զաղթի ճամբուն վրայ,
մայրի մը տակ ինք դրադած էր նոր աչ-
խարհ դալիք երկունքի ցաւերէ բռնուած
հարսի մը ծնունդի դործողութեամբ: Կի-
նը ծնաւ խերով. բարուրեց նորածինը
բուրջի կոտորներով. երբ հարկ եղաւ մայ-
րը կրել մինչեւ եզասայլը, Մկրտիչ եկաւ
օգնութեան:

— Աստուած մուրազը կատարէ, Մը-
կըրտիչ քեռի, — կը յիշէր ըսած ըլլալը
Եղսա:

— Ի՞մ ըրածը չէ՛լ, քու ըրածի մօտ,
— յարած էր համեստ՝ Մկրտիչ:

Մկրտիչ մէկ-մէկ կը հանդիպէր Եղ-
սային եւ Եղսա չէր մտնար աչքը խոթել
միշտ անցնալի մեղքերուն պատիժը:

— Դէ, դէ, կոտան եղ, քու ի՞նչը է
սաղ մնացեր...

Քիչ ետք, վրան մտաւ մէջքը երկու-
տակած, տեղոյն բանկոնակը ուտին, բար-
տի ծառի պէս երկայն, չոր ու ցածաք
տարիքստ մարդ մը: Թխամորթ մէկն էր,
տպեղ, անուրեղական, որ ըսաւ.

— Բարեւ, Եղսա քուրօ. ինձ տան-
ի՞ք ունես:

— Տղայ Մկրտիչ. հալը-զէ՞՞՞դ տե՛ղն
է...

— Մի բտեր, քուրօ, ես մինակ գը-
լուխ, տեխը ծոած մարդ, բոլոր ճիթպիթ,
կնիկ, սղջիկ երես կը դարձնեն, չեն ա-
զեր մնամ իրենց վրանի տակ:

— Դէ, դու ըլ խլուրդի պէս ապրիլը
դետնի տակ, հողը փորէ մտիք մէջը:

— Կ'ըսես, ամձա, ձեռ-տտ մնա՞ց.
վարժ չեմ...

— Ոսկիներովդ փորել կու տաւ:

— Ոսկի՞ կը մնայ, հատաւ-թմմաւ:

— Կեղծ ցաւի արտայայտութիւն տաւ
դէ՞՞քը:

— Դէ՛, դէ՛. սուտ մի՛ խօսա. քեզի հըրա կնիկ մը կը ճարենք. անոր օժիտ քու ճարիդ պարտք, — գայեակ Եղաս աչքին մէկը գոցեց. կը սպասէր ճշտն արձագանգի, — հը՛. . .

— Արա՞ս կը խնդաս, քուրօ :
— Աստուած վրադ խնդացիր է արդէն. ճիշդ կ'ըսեմ, Մկրտիչ. արի անունդ քաշենք մէկ կնիկի վրէն : Նստիր, նստիր խօսենք. ի՞նչ հոգի-հոգի վեր թռար, — կուրացա անդ ցուցուց իր քովը, մինաէրին վրայ :

— Չըլլե՞ս եւ աղաբեր ըլլեմ, հը՛, — ծիծաղեցաւ Մկրտիչ եւ Հազար խաղ դիպեց թորչոճած երեսին, բայց մտերմական գրաւչութիւն տուաւ ընդհանուր արգելաբան :

— Բալլի. էդպէս բան մը, — Մկրտիչին ծիծաղը անցաւ Եղասի դէմքին :

— Ձէ՛, քուրօ ջան. ես փուճ բան եմ. դու քէ նայէ. արիւն երեսներէդ կը թափի. ազրբի պէտ :

Կատակը կատակ էր. բայց Եղաս լըրջացաւ. ամուսինը՝ փրած ալիւրի պարկ, ինկած էր վրանին մէկ անկիւնը մուտքին մօտ եւ ապուշ-յիմար՝ կը ժպտէր. նոր մանկացած ծերուկ : Եղաս բարկացաւ վըրան, պոռաց .

— Դու, պատուած եզ. ի՞նչ դունչդ կը ջրոտես. ելի, դնա՛ քիչ մը արեւ Հաւաքէ ջանիդ, որ ես գիտեմ ընելիքս, փշնակոտ Ե՛րիփ . . .

Էրիկը անձայն դուրս գնաց : Մնացին առանձին, մինակ :

— Հը՞, Մկրտիչ. ի՞նչ ըսիր, որ քէ մէկ խորոտ կնիկ ճարեմ :

Տմբոյնից Մկրտիչ կատակ ընդունեց Եղասի առաջարկը, սաքի հլաւ .

— Չորս տարով պար կը դառնամ քու առաջ, քուրօ ջան : Խորոտ կնիկ ըլլի՛ . . . : Հայ-Հայ, հուճ-հուճ կ'ուտեմ . . .

— Դէ՛, քամբախտ խորոզ, գլուխդ թաղածս. ինչ ըլլ հուճ-հուճ ուտողն ես եղեր, — կը ծաղրէր Եղաս եւ միեւնոյն ատեն կ'որոճար իր ծրագիրը, — Թէ ուտող էիր, գլուխդ թաղեմ. նախանձ ունենայիր մեր անայէն Եգնիկին, փախըլնէիր ձեռքէն Եղասն . . .

— Մեղա՛յ, մեղա՛յ. քուրօ, դու

սուրբ կնիկ ես. քէ ձե՛ռք տամ, Աստած զի կը պատժէ, խի՛, խի՛, խի՛, — կը խրխիջար Տմբոյնից Մկրտիչ, մինչ Եղաս կը : այէր անոր կատուանման քիթին եւ ծուած բերին, ըսաւ .

— Կատակը՝ կատակ, Մկրտիչ : Մէջտեղ կենաց-մահու հարց կայ. մտածեցի, թէ դու կարաս փրկել անտէր կնիկ մը. լուսնկանի նման կը փայլի. ամձա, մուկը մէթի կարաս ինկեր՝ կը խլրտայ : Մարդ չունի, որ ասի՛ կարաս ինկած մուկը իմն է . . . : Դու կարաս ըսել՝ իմն է, անունդ վրան պցելով . . .

Տմբոյնից Մկրտիչին քիթը աւելի երկնցաւ, որձէ պոռչները կախուցան : Իր ինչի՛ն պէտքն էր խորոտ կնիկը. խորոտ կնիկը հազար շար ու շառ հտեւէն կը քաշէ, կը բերէ տուն. դէ՛, պարոն Մկրտիչ, դու անոր փորը կշտացուր, որ ան ալ ուրիշին քէ՛Քը կշտացնէ . . . : Եւ ծիծաղան, ըսեն՝ թէ կուտան եղի քով կապուած կովը իրեն լայնդ չէ . . . : Սակայն, Մկրտիչ, որ անցեալին մէջ ցաւ չէր զգացեր, երբ ուրիշին կնիկը կը բռնարարէր, հիմա կը հերտոտէր, թէ այդ ի՞նչ անպաւ մարդ է եղեր, որ լուսնկանի պէս աղուր կնիկի պատուին Հետ խաղցեր է, մուկը մէթի կարաս ձգեր է, չ'ուզեր հանի, նետի իր վրան . . .

— Եղա առաջարկ իմ քէ՛Քովը չի՛, Եղաս քուրօ : Այս պէ՛լ վախտին, ես չեմ կարայ կապը կարած կնիկ պահել. չուտնը դուրսը կը մնայ . . .

Տատմէր Եղասն կտրեց մարդուն ճըռճըռան խօսքը. կարծէք, իր պատուին ուղղուած ըլլային Մկրտիչին անկշիտ խօսքերը, պոռաց .

— Դէ՛. մէնդ քեզ քաշէ. կապը կըտրա՞ծս որն է. Հուրի-փիբի հըրչտակ է ես սատանան խաբեր է զինք. ո՞վ չէ խաբւած սատանայէն. բա՛հ, ամէն մարդ Յիսուս կ'ըլլայ, որ ասի՛ հախի՛ս դնա, սատանայ . . .

— Եանի, ըսա գործի մէջ իմ շահս ի՞նչ կ'ըլլի, հասկնամ : Դու կ'ըսես՝ խորոտ կնիկ է. խորոտ կնիկ սատանայ է. փորձով գիտեմ. ես փուճ մարդ, չոր փէտ, ինք՝ թոնրան կրակ, նայողին կը վատի, սատանի արժատ է . . .

— Տղա՛յ, խելքի կոտորած պտուկ-դու որ հնդու հաւի պէս փրուխս, ստ-ստ անես անոր շուրջ, ուրած-ուրած քարես իրեն հետ, իրա լաճ քու ձեռք բռնէ, զէ պապօ, պապօ ըտէ. մարդիկ տեսնան երանի տան քեզ, թէ մաշալլահ, խաս-արբըրչում կնիկ ունի, զօտիկ պոպղան ոսկի տղայ ունի. երնէկ տան քեզի, ի՞նչը պակաս կ'ըլլայ, հէ՛... Դու չոր արմատ, ինք ծաղկած ծիրան։ Ծահդ էն կ'ըլլի, որ թորան տաք մոխիր կը կապես ստան մէջքիդ, կ'ունակդ կը կէծոտի, քալի՛ եռ դաս...

— Եղա դեռ հարց ի. ինք կ'ուզէ՞ քսմակս տաքցնէ :

— Ծարը ի՞նչ. թող տաքցնէ :

— Հապա իր քամակ :

— Այն ալ թող ինք մտածէ, — երկիմաստ, Եղսան մէկ աչքը կկոցեց, թէ յիմար մի ըլլար, բնդունէ եղածը եւ՝ վերջ :

— Մոցու՞ր է, ըսիր :

— Հա. որ ծոցուր չընէր, զէ բաժին կ'ընէ՞ր, խելօքս Անմարդ կնիկ, որ ծոցուր եղաւ՝ ամօթ է. կ'երթայ գետ կը նետուի. մամա, որ չեիր կնիկ եղաւ, ամէն օր նոր անկողին կը փոտտի, ինձ եւ քեզ ալ քիթին չի առնի. մեր տեղ ան կը թքի մեր երեսին :

Տատէր Եղսան ըմբռնե՞ց, թէ հասած էր իր նպատակին։ Մկրտիչ կզակը առաւ ափին մէջ։ Եղսան իրաւունք ունի, կը խորհէր։ Ինչո՞ւ չոր կոնդի նման նետուէր մէկ անկիւն, արհամարհուէր բոլորէն, թէ ուխտը ծոցած մարդ է, հոս-հոն մանեղ կարելի չէ, փիսսա չունի։ Կնիկը իրեն համար անցաթուղթ կը նշանակէր. ու շնորհ անիծած, թէ որմէ՞ էր վաստակած լակոտը. թող ան իրեն ժառանգ կ'ընէր. մէկ չէ՞, ես ըլլամ, թէ ոչ, ան պիտի ապրեցնէ Տմրոյնց անունը... շահը ոչ է, որ կայ, Գլուխը ցցեց եւ նախցաւ տատմէրին,

— Եղա քուրօ. դուն բա՞ն ըսիր...

— Բան էր, ըսի. որո՞նցի՞ր լաւ մը :

— Արո՞նջը՝ որո՞նցի, մարտեցի. դու զի Աստածը. տեսնե՞ք էս մեր կնիկացուն. բարեւ տանք, բարեւ տանե՞ք, թէ ինչ է, մարդու կարգ անցանք :

— Ապրիս, Մկրտիչ. տես որ հում-հում շուտես, ախորժակդ ես կը սրեմ, հա. մարդս հոս չէ, — ու զուարթամայն խնայց, Մկրտիչի գէժքին ակօսանքը հաշուելու պէս, սուր-սուր նայելով նորափնասայի տեղ անցնելիքին :

— Մեղա՛յ, մեղա՛յ... Ա՛խ, որ է-նա ժամանակ ուստ դայիր, — ինչո՞ք եւ կրկին խնայցուց տատմէրը, որ վերջին պահուն կը մտածէր, թէ ինչպէս պիտի ընդունէր Աղուոր Նուարդ նորութիւնը։ Ին՞չք պիտի գործածէր, թէ սիրտին զոտ պիտի տար :



Երկու օր ետք, եկաւ Աղուոր Նուարդ։ Եղսան էր յանձնարարած, առաջին տեսակցութեան :

Դժուար էր համոզել տէր Մարտիթը։ Այդ ի՞նչ կարեւոր խնդիր էր, որ մէկ անգամէն չէր կրցած լուծել Երկ Կրանին աղուոր մայրիկը։ Նուարդ լաց եղաւ եւ օգնութեան կանչել տուած էր Մակարը։ Տղան զգաց, որ իրենց մայրիկը կը տառապէր ազալանքին մերժումէն, սուտ վրկայութիւն տուաւ եւ տէր Մարտիթ գիշեց :

— Բայց, դասերէդ կը դրկուիս, տըզաս :

— Ինչպէ՞ս, տէր Հայր, — զարմացաւ Մակար :

— Աէ՞ որ պիտի ընկերանա մեր աղուոր մայրիկին. իսկ դուն, Նուարդ. աշխատէ մէկ հարուածով լուծել խնդիրդ. Լա չեմ կրնար թոյլատրել քու բացակայութիւնդ վրանէն :

Աղուոր Նուարդ գլխով խոստացաւ եւ ահա ինք եւ Մակար եկած էին քէմբ :

— Մակար ջան. ինձ առանձին թող, զնա՛ պտըտիր, — ազալական էր շեշտը եւ Մակար ձգեց զինք հրապարակին վրայ եւ գնաց գէպի իր նախկին դպրոցին կողմը :

Եղսան կը սպասէր։ Երբ մտաւ ներս Նուարդ, ան յարեց.

— Դէ, որ եկեր ես, նստիր, աղջիկս :

Մկրտիչ ազան օտար չէ՝ կը ծանօթանաք. օր մը իրարու պէտք կ'ունենաք, ո՞վ իմանայ, — այս խօսքերով տատկէր Եղանան ըսել կ'ուզէր, Մկրտիչին նայելով, թէ ահա կ'ինը, որուն մասին խօսեցանք եւ համաձայնեցանք...

Նուարդ չհասկցաւ տատկէրին միտքը: Ի՞նչ գործ ունէր այս ծեր, խաբխուրած, մեծ հօք տեղը յիշեցնող Մկրտիչ ազան: Առհասարակ, ան ինչո՞ւ չէր ելլեր ու քաղեր, երբ ինք զաղտնիք ունէր տատկէրին հետ: Իսկ Եղանան զայն քշելու բընաւ մտադրութիւն չունէր, երբ ըսաւ.

— Մէկզմէկու գննեցէք, քննեցէք. իրարու եօթը պորտը հասնելու պէտք չունիք. ճասիրին աղէկ-զէջը չկայ...

— Հասկցայ, — համոձայնութիւնը յարգողի պէս, միջմտեց Մկրտիչ:

Աղուօր Նուարդ կը լռէր. ան կը նըկատէր Եղանան խօսքերը կողմնակի մարդու ուղղուած եւ անհամբեր կը սպասէր, թէ ահա այս Մկրտիչ ազան կ'ելլէր, կը քուլէր: Բայց, մարդը աւելի լաւ անդաւարուեցաւ միմտերին վրայ եւ զպալիրաւ մը փաթթել սկսաւ:

— Ես բան չեմ հասկնար, տատկէր Եղանա. դուն ինձ ժամադրութիւն տուիր. կեանք եմ. ժամանակս կարճ է, — եւ աչքով ցոյց տուաւ պապիրոս փաթթողը, ըսել ուզելով, թէ այս մարդը ինչո՞ւ կը տնտեսար, չէր երթար:

Մկրտիչ կը զգար, որ դեռատի կ'ինը միտքէն պիտի շանցընէր, որ իրեն պէս ունիւր ծոած մարդուն համար էր կարգադրութիւն ըրած: Զարդողեցաւ. կ'ինը իրաւունք ունէր: Բայց որ ինկած էր ջուրը, պիտի փաթթուէր օձին ալ, հոգին ազատելու փորձին մէջ: Անոր աղուօրութեան առջեւ, Մկրտիչ կրաւորական խըլքրտում կը զգար. աչքերով ջերմ դուրդուրանք մը, որ, ցանկութենէ աւելի՛ ցաւի զզացում մըն էր: Այդ ի՞նչ փայլուն ձակատ էր, փայլուն՝ այտեր եւ երկու վճիտ աչքեր, որ մէկ անգամ դարձան իր վրայ, նայեցան եւ խոնարհեցան զոչը դրած փափրիկ ձեռքերուն զոչը խնդրելու համար: Ա՛խ, կորած իմ էրիկմարդութիւն. ո՞ր ես, ինչո՞ւ անխոհեմ վատնուեցար...: Հիմա այս հասած խաղողի

ողկոյղին առջեւ նմանիս այն աղուէսին, որուն դունչը երբ չհասաւ խաղողին՝ խակ է, ըսաւ...

Տարբեր չէին Նուարդին սպրուձնորը այդ պահուն: Գողափարն իսկ ստեղծմ պիտի պատճառէր իրեն, եթէ առաջուրէն Եղանան իրեն յայտնած ըլլար, թէ խալխըլած գէժբով ծեր մարդը, շարաթ մը ետք, պիտի դառնար անուանական հայրը իր մէջ խլրտացող հակին...: Այժմ, Եղանայի խօսքերուն դեռ չթափանցած՝ Նուարդ կը կրկնէր ինքն իրեն, թէ մարդը ինչո՞ւ չէր երթար...: Լուսանցքէն ինկած արեւալույտին տակ հազար գիծ ու ակօս, սարդոստայնային երեւոյթ կու տային զէժքին: Սեւազէմ էր եւ վրանին կիսամութը աւելի կը շեշտէր զայն: Նուարդ կը նայէր իր զոգացող ձեռքերուն. ինչ հակադրութիւն էր մորթային գոյններու...

Տատկէր Եղանան ալ կը տեսնէր ահաւոր հակադրութիւնը երկուքին միջեւ. մեղանչա՞ծ էր միթէ իր ծրարածին մէջ: Երկինքի եւ երկրի չափ հեռաւորութիւն կար մէջերսին: Խիղճը կը տանջէր զինք. բայց, ստիպուած էր մօտ-մօտի գնել երկու հակադիր բեւեռները, դրական եւ բացասական: Երկուքն ալ զործեր էին ապօրինի նմանօրինակ մեղքեր, տարբեր ժամանակներու մէջ: Առաջինը զտեր էր իր պատիժը՝ ամորձիքները վրայ տալով. երկրորդին կը սպասէր ամօթի սեւ մուրը կամ խաբխուրած նաւակը, որ Մկրտիչն էր: Ուրիշ միջոց չկար. տոճմային բարքերը սուր եւ հասու էին տակաւին. ոչ ոք պիտի ընդունէր ուրիշ հարստուած կին մը իր անկողինին մէջ, իրբեւ զտակաղիբ կողմից...

— Դու, ազա Մկրտիչ. կ'իբր տես էն մարդը ո՞ր կորաւ. արեւէն չճաքի. շուշանաս: Ըսելիք ունիմ քեզի, — թելադրեց մարդուն, որ ահա երկտակած կ'ունակը կը սահեցնէր նեղ անցքէն դուրս:

— Այս ազա Մկրտիչը կարաւանճի՞ է:

— Աղջիկս, այնքան ալ գէշ մի տեսներ դիմացինդ: Ա՞ճէն մարդ պակասութիւն կ'ունենայ. իսկ քու վիճակիդ մէջ դտնուող կ'ինը շատ թող շտեմնայ ամէն պակասութիւն...

— Չեմ հասկնար :

— Ի՛նչ . ամէն մարդ իր պատմութիւնը ունի : Ասոր պատմութիւնը խելքի ծօտ բան չէր , բայց եղաւ : Փամանակին , Երկիրը , հանած—վարած երիտասարդ էր , քեզ պէս խորոտ կին—աղջիկ կը հալածէր , շատը ձեռք ձգեց . . . ու բանս մտաւ . . .

— Ի՞մ ինչի՞ս պէտք անոր պատմութիւնը . դուն ըսէ , տասմէր , ի՛նչ դարձան գտար անբախտիս , — կրկին անգամ պատմեց իր ցտաւը , տարբերով՝ տղուն պըղտիկ ըլլալը . կը սիրէին գիրտը . . . : Որո՞ւ մաքէն կ'անցնէր , թէ տղայէն պիտի բըռնուէր . . .

Կը լռէր Եղսան , գլուխը կը շարժէր եւ մէկէն ստուժ բրաւ .

— Նուարդ , աղջիկս , եկուր քեզ կապենք այս Մկրտիչ աղայի անունին , որ պէտքի ծնուածը օրինաւոր անուն անէ . թէ չէ՝ կը դառնայ փրձ . . .

— Ուրիշ էլք չգտա՞ր , Եղսա մայրիկ , — ճշաց Նուարդ սարսափէն :

— Չգտայ , այլ միայն այս լուծումը : Անցաւ անգամ , ըսի , թէ թափելը մեղք է Սասնու առաջ . թափեմ , ըսեմ , ամժա , զէ կու տամ մահու ճանկ . դեղ—դարման լուծիմ . արդիւնած է . կը թունաւորւիս , իմ վիզ թոկ կը յետեն , կը կախն : Իսկ այդ որբ վահրամ քեզ չի առնի . կ'երթայ դես կը նետուի ամօթէն : Քանի կը սիրես զինք , ուրեմն , կապէ գլուխդ ծեր , անկար մարդու . . . պղտիկը ճամբայ ելեր կու դայ , մտածիր . կողերդ հաստցեր են , տուն մարդ քեզ չի առնի . խելքդ գլուխդ հաւաքէ . . . : Որ առնի ըլ , թար—թարաֆ կը կատողեցնեն զինք քու դէմ . ա՛լ պրծած չունիս . . . : Մկրտիչը թար—թարաֆ մէկը չունի , քեզ կը նայի թաղուհի պէս . ինք պաղած , սառած ջանի տէր , փաած կոնդ . կրակ տուր վառիր : Քու լուսահողի մարդը կը զինջանայ զերեզմանին մէջ . . . չի բարկանայ վրայ :

— Ի՞մ մարդ , որ մարդ ըլլար , չէր մեռնի . ինչո՞ւ պիտի բարկանայ , — դիմադարձեց Նուարդ եւ սակայն , աչքերը լեցունեցան եւ ձայնը գողաց . մեղք չգործեց՝ այդպէս արտայայտուելով :

— Ըսիր , թէ զոհուեր է կոբի ծածանակ :

— Հա . ըսի , որ զոհուեր էր . Աստուած ինչո՞ւ թողեց , որ զոհուի . ես մեղք չէի . ինչո՞ւ առաւ ձեռքէս , — Նուարդ լեցունած կը թուէր երկինքին դէմ . սկըսաւ անձայն արտասուել : Այդ արտասուօր կը սիրտուէր տպուած պատկերով կտոր մը արձաւենիներու անտառէն , գետափի ջրաթուղիներ վրայ , երբ վահրամ կը խաղար իր փէշին հետ եւ մէկէն անտառը ազմկեց . դադարեցաւ իր շրթներուն «Ի՛րի՛ւ եաման»ը : Վահրամ ցատկեց ջրաթուղիին դադարէր եւ սարսափահար իր սիրտը հարստացաւ անոր արձանային կեցուածքէն . . . : Յետոյ , իջաւ ըովը , ըսաւ՝ դուն դեմ գետեղբէն , ես կը մտնեմ անտառ : Ինք ստիպուած՝ քակեց գետի ափէն , մինչ վահրամ կը վազէր՝ անտառի ծառերը ափ առնելէն : Ու շրթունքին վրայ էր իր կիսատ թողած «Ի՛րի՛ւ եաման»ը՝ «Ես պիտի չի գայ , շատ խորտա է՝ քողնել չի գայ . . . » : Յետոյ , Նուարդ կը պատկերացնէր իրենց կպած—փարած դէպքը եւ դէպքէն ծնունդ առած նոր կրդը , գոր կը կրկնէր տղան , մեծի պէս՝ «Ի՛մ կնիկն ես , ի՞մ կնիկն ես . . . » : Եւ հիմա , տասմէր Եղսան կ'ըսէր .

— Աս , նստէ այս փտած կոնդը . առ գլխուդ դիր այս ամբացած Մկրտիչ աղան , որ մարդիկ փրձ չկողնեն նոր աշխարհ մտնելիքը . . .

— Եղսա մէրիկ . դու ինձ ողջ—ողջ կը խորովես . ուրիշ ճար չմնա՞ց , ստիք հողը ըլլամ :

— Գլուխդ պատէ պատ մի տար . վահրամ կայ այսօր , վաղը՝ չկայ . իսկ դուն տէր պիտի ունենաս . տէր չըսեմ , ոյահակ ըսեմ : Աղուոր կնիկն ես , միմակ չես մնայ չոր փայտի հետ . . .

— Ասինք անունը առինք—դրինք նորածինի վրայ . ա՛յս է բոլորը . չէնք—ընորճք , պեղ , մարդավարութի՛ւնը , ուժ կարողութի՛ւնը . . .

— Այդ բաները կան ու չկան . մէկ պակասութիւն ունի . քու կողեր տաքընտող չէ . . .

— Կ'ըսես անպտո՞ւղ է :

— Մեր գեղական լեզուով ըսեմ՝ բաւ դա չէ . եզան պէս կովի հետ հաշտ կ'երթայ . չի կարա ցատկոտել . . .

Նուարդին մէջ ըմբոստացաւ մայրական բնագոյր: Մկրտիչ ըստածը քուրջի կտորի պէս էր... Թէ որ պլլուէր իրեն, իր աչքը կը մնար գուրսը, կը փնտռէր Վահրամը...: Սակայն, ի՞նչ կը ներկայացնէր որք Վահրամը, որ ազգին հացը կ'ուտէր. ցնդելիք աղուր երազ մը, որ հուաւ քունիդ մէջ. արթնցած, չկայ: Ոչ ոք գիտէ, թէ քանի՞ ամիս, քանի՞ տարի Կտի տեւէ իրենց կեանքը այս չոր անաստի երեսին: Տեսար մէկ ալ լուր ելաւ, թէ վաղը կը մեկնիք. ինչ կայ-չկայ, պըղտիկ ծրար կամ թեթեւ հակ մը...: Կը լեցնեն նսւը, կը դարձնեն զեկը զէպի ո՞ւր, Աստուած գիտէ...:

Եղսան կը սպասէր Նուարդի պատահանին: Եւ ահա պուխը հակեց դեռատի կինը եւ, արցունքը աչքին՝ տուաւ հաստատական նշան.

— Թող իմ նակատագիրս Աստուած տնօրինէ, պիտցածին պէս...:

Յաջորդ Կիրակի, նեղ շրջանակի մը մէջ, քէմբին քահանաներէն աղքատիկ տէր Մարտիկ պսակը կատարեց եւ Նը-

ւարդ գրուեցաւ Մկրտիչ Տմբոյնցի անունին վրայ: Համաձայնուած էր, որ Աղուոր Նուարդ մնար Որբանոց եւ շարունակէր Մայրիկի իր պաշտօնը եւ միայն, Կիրակիները դար մարդուն այցելութեան: Այս պայմանով Նուարդ ընունած էր Մկրտիչին փեսայութեանը...:

Սակայն, կ'ըսեն, ե՞րբ է տան հաշիւը շուկային յարմարեր: Որբանոցին կանանգրին մէջ, Նուարդ Մայրիկին հաշիւը խոտորնակ էր ծածօթ յօդուածին, որ կ'ըսէր.

— Որբուայրի կիներ կրնան միայն մայրիկութեան պաշտօնին կանչուիլ:

Այս յօդուածը տակնուվրայ պիտի ընէր Մկրտիչ Տմբոյնցին, երբ ան գնաց Որբանոց, Նուարդ Մայրիկը իր անունին անցընելու խնդրանքով:

— Եղսա քուրօ. դու ինձ ողջ-ողջ խորովեցիր, — թէեւ բարկացած էր, բայց կատակով ըսաւ իր խօսքը եւ տամէրը ծիծաղելով անիծեց զինք.

— Խորեմ հոտած զլուխդ...:

ՍՄԲԱՏ ՓԱՆՈՍԵԱՆ

Ա Ր Մ Ա Ն Տ

ԵՍ ԿԸ ԳԱՄ ՆՈՐԻՑ...

*Մայիսին և
Շահինին*

Եւ մի օր, մի օր,
Երբ չեմ լինի ես,
Եւ շունս տխուր,
 Մախմուր աչքերով,
 Գունը քաթերին՝
Տան շեմքին նստած,
Կըսպասի ի գուր իմ վերադարձին,
Եւ ծամանակը կը ճշի իր ճին,
Կը համի փռշի,
Ու ինձ չէ՛ք յիշի,
Ձէ՛ք յիշի էլ ինձ,
Եւ խոտը յամառ, իմ հագաթմբին
Հիմնած կը լինի իշխանութիւնն իր,
Եւ գրեքն իմ լուս կը մղկտան
Մասներիս ծանօթ շոյանքին կարօտ,
Ու քոսս սեւաչ, տեսնելով մի օր
Նկարս գունատ,
Աչքերը յառած աչքերին իր մօր՝
Հարց կը տայ յանկարծ՝
Ո՞վ է, ո՞վ է այդ,

Կը բացի գիրքս ու հօրը ձօնած
Իմ մի քերթուածը կը կարգայ խռնուն, —
Ո՛հ, ես կը յառնեմ,
Ես կը գամ նորից՝
Իրիկուայ կապոյտ բուշով
 պարուրուած. —
Ապտեցէ՛ք ինձ, այնտեղ՝ լճափին,
Նճիհների տակ,
Երբ իր երակն է բացում արեւը
Լերան տուր շեղբով,
Եւ կարծաւոյս է մաղում լուսինը
Ջրերի վրայ:
Փնտռեցէ՛ք դուք ինձ
Հովից փշափաղ լճի այեակում,
Եւ լուսաբացին՝
Աղանձների մընչոցում կրփատ,
Եւ ձագուկներին կեր տուող քաչմի
Դողդոջ թեւերի քփրտոցի մէջ,
Ու քիթիս որսող թռանս գուլալ
Աչքերում անուշ:
Ես կը գամ, կը գամ,
Ես կը գամ նորից,
Բայց, աւա՛ղ, աւա՛ղ,
Ձէ՛ք տեսնի դուք ինձ,
Դուք ինձ չէ՛ք տեսնի...

ԵՍ ՄԹՆԵԼ ԵՄ

Ես մթնե՛լ եմ, մթնե՛լ եմ
 Ինչպէս գիշեր այս գիշեր.
 Լոյսը մթնեզն է այս լոյս, —
 Գարձի՛ր արեւ այս գիշեր:

Վարդը փշազն է իր վարդ, —
 Թռչ փուշ լինեմ այս գիշեր,
 Ձապկի ճեղ ո՛չ մի մարդ
 Հոգուս թփիցն այս գիշեր:

Մէրը մեղեզն է իր սէր, —
 Թոզ մեղք գործեմ այս գիշեր,
 Որ շիկնես դու վարդի պէս,
 Ես գունատուեմ այս գիշեր:

Գունատուեմ ես ու հատուեմ
 Քո վարդաբայր շնչի տակ,
 Ու հատուելով ես յառնեմ
 Ինչպէս արեւ այս գիշեր:

Ու մա՛յր մտնեմ ես նարից,
 Իրիկնանամ քո գրկում,
 Որ մետաքսէ լոյսի պէս՝
 Բացուե՛ս, բացուե՛ս այս գիշեր...

Թեհրան, 1979

ՆՌՆԱԳՈՅՆ ԿԱՐՕՏ

Դու չեկա՛ր, չեկա՛ր, չեկա՛ր,
 Հսկումից երկար, անլոյս
 Կարօտից սիրոյդ անմար,
 Ճափել է նուրը հոգուս:

Բացել եմ դուռը սրտիս, —
 Մթան ճար, դու աչքի լոյս,
 Նոնազոյն քո կարօտից
 Ճափել է նուրը հոգուս:

Դարձել ես անգիւտ մի կոյս,
 Մի լոյս՝ անլուր, անտես,
 Մթնում է հոգին իմ լոյս,
 Արիւնում մի նռան պէս:

Նունել եմ ափիս մէջ հար՝
 Իմ հոգու մաքած նունից,
 Տե՛ս, բուս-բուս հատիկներ բիր,
 Որ մտնես սրտիս դունից

Ու մարեմ ծարար տաք
 Նոնաճաք քո շուրթերի,
 Եւ նունեմ կրծքերդ խակ,
 Նոնագեղ իմ նունեմի...

Բացել եմ դուռը սրտիս,
 Ո՛ւր եմ մութ աչքերդ լոյս,
 Նոնազոյն քո կարօտից
 Ճափել է նուրը հոգուս:

Թեհրան, 1980

Օ՛, ԿԻՆ...

— Լինել առանց քե՞զ, —
Ասա՛, այդ, սոսա՛,
Պատկերել ինչպե՞ս:

Եւ ինչպե՞ս ապա
Պիտ՛ կշռանշղել
Այս հողագումորը,
Հագին, մարմինն այս,
Եթէ շլինեն ձեռքդ ձեռքիս մէջ,
Աչքերդ՝ վրաս:

ՁԵՆՔԵՐԿ ԵՄ ՍԻՐՈՒՄ

Ա.ԻՆ

Տատրակների անուրի պէս տա՛ք
Քո ձեռքերն եմ սիրում անապակ:
Օ՛, ամէն կէտօր, ամէն իրիկում՝
Քո սիրոց փռոզ,
Սովի թշնամի,
Թուխ հացի պէս տա՛ք
Ձեռքերն եմ սիրում,
Ու՛ մատները քո՛
Շարժում ու ճկում,
Վարդ ու զարդ հիւսող՝
Մատնե՛րն եմ սիրում,
Մատնե՛րը մշխար,
Ու՛ աշխարհի չափ
Հանրերուքի՛նդ՝
Ա՛խ, մանկութեան դէմ իմ այս
Անխուսափ...

Եւ ո՞վ կը բացի
Սփռոցը հացի.
Ո՞ւմից կը հայցի
Սիրուս անմիւթ սէր:
Ուռնց հայեացքիդ
Մեղրին արեւկայ,
Լեզի կը դառնայ
Համն այս կեանքի,
Ստոնամանիքի կը փոխուի յանկարծ
Այս տուն ու տեղը
Ու կը սարսռայ կարմիր արեւը,
Կանգ կ'առնի մէկէն
Սլաքը սիրոյ, սլաքը մոփի:

Առանց երկմտաւ
Քո կողակցութեան,
Հոգու ցերմութեան
Ու մտերմութեան,
Ինչպե՞ս իմանալ դէպ՛ Աստուած
Տանող ապստով հավքան:
— Ապրել առանց քե՞զ, —
Օ՛, կին անճիւն,
Դա մա՛հ է ինճիւն:

Թե՛հրան, 1981

ԱՐՄԱՆՏ

— Բացել եմ ան սիրոցը սրտիս
Ն, դրել վրան գաւաթը հոգուս՝
Իր իսկ արիւնով ու հրով լեցում,
Եւ սպասում եմ,
Որ գաս դու, շուտ գաս,
Կեանքդ խմեմ ես այս իրիկում,
Ու ձեռքերի քո բարիքով լցնես
Իմ սեղանը այս:

Թե՛հրան, 1980

Բ. Ք Է Պ Ա Պ Ճ Ե Ա Ն

Պ Ի Լ Լ Ի Տ Ը Բ Ի Տ

Գիտէ՞ք, թէ ով է Պիլի տը Քիտը: Դժուար հարցում: Ես ատենին գիտէի: Գիտէի նաև, թէ ով է Փէքոս Պիլը, Թոմ Միքսը, Տէյվիտ Քրոքըթը եւ շատ մը ուրիշ հերոսներ: Ձմռանը ըսեմ, որ անձանք էին Սատուեցի Դաւիթի, Մհերի նման անձերու, որոնք ծնողքիս ըսածին համաձայն, անպայման պէտք է ճանչնայի: Բնականաբար ծանօթ էի Հնդիկներուն, գիտէի, թէ ինչ տեսակ «հրէշներ եւ վայրենիներ» են անոնք, որոնց դըլխաւոր դրաղումը «անմեղ» սպիտակամորթներու վրայ յարձակիլ էր՝ թայանել, մեռցնել, առեւանդել: Երբեք միտքէս չէր անցած, թէ ինչո՞ւ կ'ընէին այս բոլորը: Իրականութեան մէջ, այդ հարցումը անտեղի էր, քանի որ անոնք պարզապէս չար էին եւ կը վարուէին այնպէս՝ ինչպէս սովոր էին ընել շարժարդիկ եւ վայրենիներ: Ստիպուած՝ անհրաժեշտ կը նշկականէի անմեղ սպիտակամորթները պաշտպանել՝ իմ գիտցած ձեւովս, որ շատ չէր տարբերեր Թոմ Միքսի եւ միւս հերոսներու դորձադրած հղանակներէն, այսինքն՝ կրակելով: Թաղամարտը ընդհանրապէս մեր տան միակ ձեւիչն էր: Բախումները ընդհանրապէս շատ երկար չէին տևեր: Ընտանիքին միւս անդամները, որոնք ո՛չ մտէն եւ ո՛չ ալ հետուէն որեւէ նմանութիւն ունէին Հնդիկներուն եւ անմեղ սպիտակամորթներուն հետ, հասկացողութիւն ցոյց չէին տար եւ կը պահանջէին, որ խկոյն տիրէ խաղաղութիւն: Քիչ վերջ լսելի կը դառնային խաղաղութեան դրական արդիւնքները:

Գալով Պիլի տը Քիտին, լաւագոյնը պիտի ըլլայ պատմել, թէ ինչ պայմաններու տակ ծանօթացայ իրեն: Պո'ւմ, պո'ւմ, պոռաց Արամ՝ խոհանոցին դու-

ռը յանկարծ բանալով, ձեռքերդ վեր հանէ: Պիլի տը Քիտ, հառաչեցի ու հնազանդեցայ, պատառաքաղը եւ դանակն ալ բարձրացնելով: Ճաշի ատենն էր: Ես չար մարդ եմ, ըսաւ Արամ: Ձայնը փոխուած էր, թաւ եւ խոպոտ էր անիկա: Թերեւս երեք տարեկան այս Պիլի տը Քիտը եւ կամ անոր հայկական տարբերակը կը կարծէր, որ շարժարդ մը այդպիսի ձայն մը պէտք է ունենայ: Պո'ւմ, պո'ւմ, պոռաց վերստին: Իր երկու ատրճանակներէն բարձրացաւ մուխը: Դուքս վազեց՝ դուռը ետուէն քաշելով եւ կորսուեցաւ եկածին պէս: Անիմաստ նկատեցի յիշեցնել, թէ պնակին մէջ իրեն կը սպասէր իր ամենասիրած ճաշը: Պիտի չղար եւ չեկաւ: Փոխարէնը՝ լսեցի իր թաւ եւ խոպոտ ձայնը, որ կը շարունակէր հրամայել՝ «Յս շարժարդ եմ»: Մենախոսութիւնը միտ կը վերջանար իր նշանաւոր «պում-պումով»: Բախումները ժամեր կը տեւէին: Ձեմ գիտեր, թէ ինչու: Իր անտեսանելի հակառակորդները հաւանաբար շատ կարեւորութիւն չէին տար իր ատրճանակներուն, քանի որ անոնք իր աջ եւ ձախ ձեռքերու բթամատէն եւ ցուցամատէն կազմուած էին: Ենթադրութիւնս պէտք չէ որ շատ սխալ ըլլար: Քանի մը օր հտք, եկաւ եւ իր սովորական, մանկական ձայնով խնդրեց, որ իրեն ատրճանակ մը շինեմ: Երկնցի: Պոտիկ դտաւ, աղաչեց, որ աւելի մեծը շինեմ: Գոհացողութիւն պէտք է ըլլար արդիւնքը, քանի որ իր թաւ եւ խոպոտ ձայնով վազեց-դընաց նրբանցքն ի վար, արշաւեց սենետիկ սենետիկ եւ ոչ մէկ ճանճի խնայեց: Քանի մը շարաթ ետք տեսայ, որ կը հալածէր իր լաւագոյն ընկերը՝ Յովհաննէսը, աւելի երկար կոթով: Ըստ սովորութեան,

«Պո'ւմ-պո'ւմ» կը պոռար: Ձեռ ուրտնար, որ այդ վայրկեանին քիչ մը հպարտ էի Արամով: Գիւտ մը ըրած էր եւ դատած հրացանը:

Պէտք է խոստովանիմ, որ ես եղայ նաեւ անոր մեղաակիցը: Բաղկաթոռներու վրայ նստած — անոնք մեր ձիերն էին — ձեռքերնիս հրացաններ — սովորական մահկանացուներ փայտի հասարակ կտորներ տեսնէին թերեւս — կը կրակէինք աջ ու ձախ, մե'րթ հնդիկներուն, մե'րթ ալ-ւէսներուն եւ մերթ ալ ալ կենդանիի մը վրայ: Նոյն ատեն ձեռու ձայներ կը հանէինք: Մեր ձիերը համր էին: Կը պոռայինք քարձրածայն: «Մենք չար մարդ ենք», եւ կը խնդայինք առաջին կարգի չար մարդու վայել ձայնով:

Մտային հասունութեան լուրջ ապացոյց նկատեցի, երբ օր մը իր փայտալէն ատրճանակները եւ հրացանները, որոնք մեր երկար կրթով աւելներն էին, բերաւ առջեւս նետեց եւ, արհամարհանքով հետեւեալը ըսաւ. «Ասոնք ո'չ ատրճանակ են, ոչ ալ հրացան: Ասոնք փայտի կտորներ են»: Պէտք եղաւ քաղաք երթալ հետք: Հանրախանութի խաղալիքի բաժինը գրեթէ կէսով լեցուն էր զանազան տեսակի ատրճանակներով եւ հրացաններով: Հակառակ անոր, որ բոլոր զէնքերը դնած էինք — ճարած էի օգնականներ, որոնք տասնեակ մը խոշոր ծրարներ կը կրէին — Արամ կը պոռար արիւնը ստոեցնող ձայնով մը. «Աւելի' կ'ուզեմ, աւելի' կ'ուզեմ»: Տունին մէջ լուրջ փոփոխութիւններ ընել պէտք եղաւ: Ես հրաժարեցայ իմ բոլոր սննեակներէս, զանոնք տրամադրեցի ծրարներուն եւ անոնց մէջէններուն, ու քաշուեցայ վերնայարկի խուցս:

Օրերը ռազմափորձով կ'անցնէին հիմա: Ես երբեմն կ'ապաւինէի զանակնկալ» հիւանդութեան մը՝ չմասնակցելու համար պարագամուտներուն: Արամ առանձինը կ'ընէր այս բոլորը, յիշեալ դէպքէն

ետք ո'չ Յովհաննէսը եւ ոչ ալ ուրիշ ընկեր մը կ'այցելէր իրեն:

Գիշեր մը արթնցայ: Ահռելի ազմուկ մը կար: Մէկը զնդացիբով կը կրակէր: Մօտէն կու պար աղմուկը: Այնքան մօտէն, որ չհամարձակեցայ ոտքի ելլելու եւ նայելու, թէ ով է կրակողը: Իրականոթեան մէջ՝ այդքան ալ մեծ զաղանթք մը չէր: Յաջորդ օր, երբ վար իջայ, տեսայ սաղաւարտով գլուխը ծածկած Արամը: Երեսը մրոտ՝ կը կրակէր իրական զնդացիբով: Երբեմն կը կենար, ձեռնապոս մը ընտելու համար թշնամիին վերայ: Ձվիրաւորուելու համար, կը կրճկուէր աւագի պարկերու հոսեւ: Նայեցայ այն կողմը, ուր ատենին տան դուռը կար: Հիմա խոշոր ծակ մը կար հոն, ուրկէ դրացիները սարսափահար հայեացքներով կը նայէին մեզի: Ատենին, անոնք ժպտով մը շայած էին Արամին գլուխը, երբ ան կը կրակէր երկար կրթով աւելով:

Ամէնուրեք կար վառօդի հոտ: Անտանելի ըլլալու աստիճան: Իր չուպածած մէկ պահուն՝ բոնեցի զինք: Ձգէ ինծի, ճշտց, կրակել կ'ուզեմ: Գիթո պառտցուցի իր երկու այտերուն վրայ, որոնք պարքարելէ կասկարմիր եղած էին: Հոստուրտացի եւ փնտոցի վառօդի հոտը: Փոխարէնը՝ գոտայ խաղաչող տղու մը ունեցած բալոր հոտերը: Ուրիշ ոչինչ: Ձկրցայ զսպել ինքզինքս եւ համարեցի իր անուշիկ այտերը: Ան դեռ կը շարունակէր ճշտլ:

Ո՞վ էր յանցաւորը, ովքե՞ր կը կրակէին անընդհատ: Իսկապէ՞ս հոս էր սազմաղաչուը, թէ ուրիշ տեղ: Ձկրցայ պոտասխան մը զանել այս հարցումներուն:

Երկինքէն բաներ մը ինկան: Ոմանք ըսին, թէ խնձորներ են անոնք: Ձեռ գիտոր, թէ որուն գլխուն ինկան: Նոյնիսկ յատակօրէն չեմ գիտեր, թէ անոնք իսկապէ՞ս երկինքէն ինկան: Թերեւս դուք գիտէք այս բոլորին պատասխանը:

ՐԱՅՅԻՒ ՔԼՊԱՊՃԵԱՆ

Յ. Օ Շ Ա Կ Ա Ն

ՍԱՀԱԿ ՊԱՐԳԵՒԵԱՆ

..Երբ բացաւ աչքերը — անիկա դրած էր գլուխը ափերուն քանի մը վայրկեան, ու սպրած՝ եօթը երկար տարիներ — հովանոցին բացօթը կանգնած էր, կէս կողմին հակած, մէկ ոտքը կարճ էր ծնած, համբաւաւոր Իշխան Պօզոս Արծրունին:

— Կ'երեւի կը քնէիք, Օրիորդ Սոնա:

Մուտումուտ այդ ձա՛յնը, որ ներսերէն հիւժած ժարմիներն հեծփէրը կը խողովակէ ու հարադատ է հոգիին կամարներուն, բայց կը հնչէ կեղծ, պաշտօնական, երբ կը զարնուի իր շրջապատին: Մնաց որ, սեռին դուրին մէջ էակները կ'ապրին անխնայ: Կը տարուին կիները, է՛ն անտանելիները, եթէ պահուին մունջ:

— Ո՛չ:

— Բայց փակ էին ձեր աչքերը:

Ժպիտ մը, ժանգոտ ու փրթուկ, կը ջանար կռկել անկրելի պատկերը անոր դէմքին ու կու տար հակառակ արդիւնք, շեշտումի հանելով հոգեկան միազման, որ կ'ներսնորուն ժօրուաքին մէջ կը հիւսուի: Աղտոտ այս պոյնին մէջ Իշխանը կը թուէր ուրիշ ազգութեան վիժուկ մը: Ու ակօսուած մորթը մտալլ զզուանք մը կ'արտահոսէր, զգեստին անթերի ճերմակէն կրկնապէս ուժաւոր: Անիկա մանր աչքերն ալ խառնեց իր ժպիտին:

— Այո՞:

— Այսինքն:

— Գնած էիք. կ'երեւի դիշերները պրազած էք ըստ բաւականի, որպէսզի ցերեկները...

— Փակ աչքերը քուն չեն նշանակեր: Իսկ իմ պրազումները կը պատկանին ինծի:

— Ի հարկէ, Օրիորդ, ի հարկէ: Ատ չէի ուզեր ըսել, ոչ, ոչ:

Բայց նեղութիւն կար անոր ձայնին ալ մէջ, բացի խոր տղեղութենէ: Ոչ ոք այնքան կը նեղէ ազջիկ մը, որքան մարդը, որուն արտաբայտութիւնը յայտնապէս ազդեցութիւնը կը մատնէ սեռին, բայց կը մնայ առանձին, առանց դիմաւորուելու, ջերմանալու դէմի հոսումէն: Գրամի ասպետները չեն մշակած իրենց հրապոյրները, մեկուդին վտաահելով որսահանութեան պաշտօնը: Իշխան Արծրունիի

դրարար հասկնալը ու քիչ մըն ալ խօսիլը նկատեր էր առաջին զինանշանը իր ծագումին: Մնացեալը անարժան էր անոր վաստակին ու ջանքին:

Սղաւ անոնց մէջանդ լռութիւն, դուք տուէք պատշաճ վերագիրք մը: Միակ շարժումը այդ նեղիկուկ հողամասին մէջ, կու գար սեւա-մորթէ մը, դէմքին վրայ մասնաձեւ սպիներով, որ կը ջրէր անուները, կարմիր Ֆէսին դլանը ճօճելով խաւարակոյտ դլխուն վերեւ, մինչեւ միանասպիտակ կելլելէն, որ կը կազմէր սուր հակադարձ մը: Այդպէս դիտուած՝ պատկերը կը շինէր մէկ պահը արեւելեան հեքիաթներուն: Այդ տարազներուն տակ ծպտուած էին, այդ երեւակալութեանց ցուցմունքով, երբեմն արքայազուններ, կախարդի մը խշուժովը հագած սեւ այդ կաշին, որոնք եօթը լեռ հետուններէն կու դային, ի խնդիր իրենց սիրեկանին, ու յանձն կ'առնէին աւելի համեստ գրադումներ, հերթէ է, որ մնային ոչորտին մէջը այդ սիրեկանին, մինչեւ որ ուրիշ կախարդ մը յուռութքը կ'ապրէր ու ճաթըտան այդ խորիւնը բունէր մատաղ երիտասարդը՝ ծնունդով արքայ ու սիրտով իշխան: Սոնան նոր էր կարգացեր արարական նման հեքիաթի մը թարգմանութիւնը: Իշխան Պօղոս Արծրունի՛ն: Այդ պատկերին տակ՝ մատա՛ղ երիտասարդ մը: Միծաղեցաւ ինքն իրեն:

— Իմացած էք անշուշտ, դիւթահանդէսի մասին:

— Այո՛:

— Լահցի՛ք, այդ խաղին առիթով, թելադրութիւնները Անգա Միրովնային:

— Այո:

— Շատ իմաստուն կին է նա ու առանձնապէս շահագրգռուած դէպի հայերը:

— Կ'երեւի. վասնդի մեզմէ ժամադրութիւն է խնդրած:

— Այո՛, այո՛: Պէտք է շահագործել օտարները, երբ մեր դատը այսքան դանդաղ ու փորձանաւոր կ'ընթանայ: Նա առաջին կարգի նկարչուհի է: Ինքս արդէն Բովնսոն պիտի տամ մի լաւ portrait համար: «Ախր, ինչ արած», ինչպէս կը խօսի պարոն ձիվահաստէ, ազդին առաջաւոր տարբերը պէտք է զգան մովնստին պատմական նըշանակութիւնը: Վերջին զղջումը օգուտ չունի:

Պատերազմի հաշտեցարդարը աւարտած էր ու մեր ժողովուրդը կը դառնուէր Մեւրի դաշնագրին առջեւ:

— Տեսա՛ք Արման Միրովնան, որ նոր ժամանեց:

— Տեսայ:

Օրինորդ Գոհարեան կը պատասխանէր պարզ, նոյնիսկ անարամադիր: Ոչ մէկ ժպիտ, որ կը ծեկնուի այրերուն կողմէ իրր առաջին ծուէն: Այս անպզածութիւնը տղաւորեց արդէն անճարակ Իշխանը, որ պարտաւորուեցաւ թափառել: Վայրկեան մը իրեն այցելեց կատակերգական յիմարութիւնը, ուր միւրճած էին զինքը, իր բնազդներուն շափ, իր քարեկամները: Արիւնքէ՛: Անշուշտ, բայց խաւարակուտը, ուր արդիական մեծ պանդուկը, ուր ամէն ազգի առաջաւոր տարբեր կը ներկայացնէին հսկայ քաղաքակրթութիւններ: Յետոյ խորհեցաւ լորտին, որ վարձած էր իր դէմի յարկաբաժինը, ու հոն մտնող տիկիններուն յարափոփոխ տեսարանին: Անոր այցելեց, դարձեալ, կիսաշխարհիկ օրիորդը, որ կը հոգացուէր դորձէ քաշուած հայ վաճառատունի մը կողմէ ու զիտէր ընկերանալ իրեն, նաւային պը-

տոյտներու մէջ, շարաթը անգամ մը ինքզինքը ծպտելով կատարելութեամբ Այս վայրկեանին, օրիորդին մտապատկերը կը շահէր սա պաղ, վանող ձեւին մօտիկ, որ Սոնան էր: Յետո՛յ, յիշեց, որ սպասեր էր անձկութեամբ ու վախով այդ ազնիւին, իր յարկարածինն մէջ: Ու յապագումէն սրտնեղած՝ իջեր դիւան, հարցուցեր պատէ պատ ճարտարութեամբ մը: Տուած էին անոր, պարտէզին ուղղութիւնը:

Ամէջա՛ւ, վասնզի վճռականութեան հրաւեր մը լսեց իր ներսէն, որ դինքը կը դօրացնէր իր միլիոններով ու տիտղոսներով: Բայց աչքին տակ շատ հանդարտ այդ պատկերը, իր պարզութեամբը, օտարութեամբը բաւ էր զինքը տարհամոզելու իրմէն: Անիկա շփեց տկար աչքերը: Լոյսը կը նեղէր: Վայրկեան մը վերակազմեց երէկուան տեսակցութիւնը: Ու դուաւ, որ հակառակ իր խռովքին, իրաւունքը քիչ էր տւելին սպասելու: Ի՞նչ էր կարգադրուածը: — Մի առանձին տեսակցութիւն, որ ճարտար խաղարկութեամբ մը պիտի երկարէր մինչեւ ճաշ: Ըմպելի՛: Մնացեալը պանդոկապետը կը վըրտահէր իր փորձառութիւններուն, դիւանագիրքին պատգամներուն: Անիկա հաստատ համոզուած ունէր այն ճշմարտութեան, որուն համեմատ, բոլոր տարասնու միմակութիւնները, երբ մշուշուած են ըմպելիքով ու առանձին սենեակի մը փակ լուսութեամբ են լրջանակուած, կը յանդին սեռին: Թաքթ, հոտառութիւն, զաջողակութիւն, աղամանդ ու դրամ: Յետոյ, ամէնէն ապահովիչը, — իր ամուրիութիւնը: Ամէն ամուրի իրաւունք չունի՞ աղջիկ մը քիչ մը մօտէն ուսումնասիրելու: Ի՛նչպանին համբա՛ւը, պաշտպանուած իր բարեգործութիւններով: Այդ ամէնը լաւ: ...Գործնականի՞ն մէջ: Անիկա տուաւ հարցումը ու տուաւ պատասխանը կրկին, մտովի.

- Ձգուչ: — Արեւելահայ հնչումով:
- Ձեր մտնակցութիւնը:
- Ի՞նչ բանի:
- Դիւթախաղին:
- Ձեմ մտածած ատոր:

— Ինչպէս թէ չէք մտածած: Պարոն պանդոկապետը ձեզ նրկատի ունի արդէն իբր կարելոր, նոյնիսկ առաջին նիւմբրան, հայ հասարակութեան կողմից:

Թօսակցութիւնը ստացաւ քիչիկ մը արձակ դնացք: Գոնէ նիւթ կար մէջտեղը: Ատկէ՛՛ դէպի սե՛՛ռը: Ամէն ճամբայ Հոովմ կը տանի: Բարեբով յոգնեցնելը համարժէք է հետապնդումով, շամշնալով յոգնեցնելուն: Ամէնէն ամուր օրէնքներէն էին ասոնք, մարանեան դիւանագիրտութեան մէջ, սեռային յարձակողականին:

- Ինչպէս կարելի է ատիկա, երբ ես դեռ այսօր զբաղուելու եմ այդ խնդրով:
- Բայց, Օրիորդ, երեւի ձեր խմբագրութիւն է կղեր:
- Գուցէ պարոն պանդոկապետը խօսեր է ձեզի ուրիշ օրիորդի մը մասին: Դուք դիտնալու էք արդէն, որ անիկա շատ պաշտպանեալ օրիորդներ ունի:
- Լուսութիւն:
- Կարելի է անունը սխալ էք լսած: Չըլլայ օրիորդ Մելինին:
- Ձիտ աղա՛յ կը կարծէք: Պարոն պանդոկապետը վճռապէս կը մերժէ օրիորդը բեմ հանել:

— Ինչո՞ւ :

— Նրեւի այդպէս անսխորժ բան է դա . հասարակութեան մէջ, օրերորդի մը առաքայի տեսակէտէն : Մնաց որ, օրերորդը մերժած է խոսիւ : Դուք զիտէք էլի — իր լայն շփումները արեւելահայ թա- տերազրին հետ կտակած էին բարբառի այս հետքերը — որ մեզմեծ լաւ աչքով չեն դիտում բեմ ելլող օրերորդ մը :

— Ի՞նչ զիտ :

— Դուք ուրիշ : Դուք . . .

Ինչո՞ւ չլարունակեց :

— Ե՞ս :

— Դո՞ւք : Դո՞ւք :

Անիկա ծուռ իր վիզը քերելու համար փակեր էր աչքերը :

— Դո՞ւք արդէն կ'արհամարհէք այդ նախապաշարումները :

— Կը կարծէ՞ք :

— Դուք արդէն բեմն էք :

Թեթեւ կարմրութիւն մը, որ Սոնային մէջ վերածուեցաւ կար- ծըր բանի մը .

— Չեմ հասկնար ձեզ :

— Վախնալիք ոչինչ ունիք :

— Կրկին չեմ հասկնար :

— Այդ մասին աւելորդ է վիճել : Արդէն վճռուած իրողութիւն է : Խաղը, իր միջազգային նկարագրովը, վարկաբեկիչ ըլլալէ աւելի՞ պատուարեք բան է ամէն օրերորդի : Մի խորհեցէք . նախարարներ, թերեւս թաղաւորը, դիւանագիտական մարմին, իշխաններ . . . : Լաւ կարգադրութիւն է, Օրերորդ Սոնա : Պարոն Պարզեւեանը երբեք չի հակառակիք ձեր որեւէ քայլին, ինչպէս ինքն է յայտարարած ինծի- չերիք է, որ ձեր սիրտովը ըլլայ այդ քայլը : Աւելի՛ն . ինծի վիճակ- ւած է արդէն ձեր արդուզարդին ամբողջ պատրաստութիւնը : Ու ճիշդ այդ մասին պիտի ուզէի ձեզի հետ առանձին տեսակցութիւն : Գոյնի եւ շղարշի ընտրութիւնը վերջապէս դործն է փափուկ սեռին : Մեր խելքը կը հասնի մէկ բանի, — նման հարցերու մէջ մտիկ ընելու : Այդ արդուզարդը . . .

— Բայց ո՞ր արդուզարդը :

— Այն՝ զոր կրելու էք դիւ թախադին մէջ : Ես, այդ առիթով, անգամ մը այցելեցի հնդիկ վաճառականին մակաղինը, ուր Արեւելքի ամենազգի կերպասները, թանկ ու էփան, չինն ու նորը, ուղղակի կաշկաթայիցն են դալիս :

— Բայց դուք բեմայարդա՞ր էք :

— Դա առանձին տաղա՞նք է արդեօք :

— Չեմ հասկնար, թէ ինչո՞ւ փութկոտ էք եղած հարցի մը մէջ, որ ձեզի հետ կապ չի ներկայացներ :

— Պարզ է իմ փութկոտութիւնը, Օրերորդ Սոնա : Մենք բաւա- կանին կը ճաննանք այդ սուտերը, որոնք թուղթէ զգեստներով իշ- խանուհիներ կը սազեն ու կը հաւատան : Մենք կ'ուզենք, որ մեր ներ- կայացուցիչը փայլի, բայց արդար փայլով, արդար գոյնի մէջ, ար- ղար, հարազատ բեհեզով :

— Յետո՞յ :

— Յետոյ, էդպէս : Ազգային շրջանակները խնդրեցին ատիկա ու ես իմ ազգին ոչինչ չեմ կարող մերժել :

— Ու գուք ընդունած էք այդ կարգադրութիւնը:

Թերահաւատ, Հեզնո՛ղ: Մենք որքան շուտ կը ժողովեմք մեզ ու կը մտնենք մեր բառերուն շարիկին մէջ: Իշխան Պօղոս Արծրունին, եօթը դիմումով տեղի տուող բարերար, ինքնաբերաբար կը ստանձնէր մեծածախս ձեռնարկ մը, զամենայն հպարտութեամբ, ի նպատակ զմեր ազգային վարկին:

Հանդիսաւոր, իշխան, միլիոնատէր, Նոյնիակ խորտուրտողէ՛մքին անկրկի ժանգին մէջ զամենայն հպարտութիւնը կը ստաւանէր մեծաթոյն: Կոտորած ու ծուռ տնօր քիթն անգամ կը թուէր ազդուած ըլլալ ազգային վարկէն:

Իշխան Պօղոս Արծրունին, անպղալարար, ըրեր էր ճիշդ ինքզինքը շտկելու, հասցնելու համար իր ճմուռը իր բանաձեւերուն «փողփողումին»: Բայց անվերադարձ խախտած անոր օսկորները չեղան հնազանդ: Ու ծուռ էր անիկա իր ուղղութեան մէջ իսկ: Իր հըպարտութիւնը: Թեթեւաոյիկ բանաստեղծ մը պիտի գրադէ՛ր իր պաշտամո՛ւնքը:

— Նոյնիակ գնուած է մեր ազամանդը:

— Ո՛ր ազամանդը:

— Ան՝ զոր կրելու էք խազի ընթացքին: Չէ՞ք փափաքիր տեսնել անգամ մը:

Ինչ ծիծաղելի են մարդիկ իրենց կոպտութեան, ինչպէս յիմարութեան մէջ, երբ կը ծեծուին սեռին սաքիռէն:

— Ի՞նչ հարկ, երբ ես չեմ ուզեր:

— Ինչո՞ւ: Կացէք մի քիչ. ես հիմա կը գնամ ու կը բերեմ: Բայց չէր շարժեր:

— Լաւ չէ՞, որ զնանք իմ յարկարածինը: Հոն կը տեսնէք նաեւ վերջին սուրհանդակով ժամանած իմ սուրը եւ իշխանական համադրեստը: Արդէն չէ՞ որ ցերեկը իմ մօտ էք ճաշելու:

— Ո՞վ ըսաւ:

— Ինքը, պարոն պանդոկատէտը, մեր փափաքին համաձայն:

Տհաճ ու մռայլ բան մը, յանկարծակի, համակեց աղկան դէմքը: Հեռուներէն, առիկա, աչքի շրջումով, գէպի ներս խորացումով, կասկած, որ ուրուացաւ այդ անձուկով: Իր մեղքին կնիքին տակն էր անիկա, այսինքն արդիլուած՝ բոլոր ազնիւ հպարտութիւններէն: Իր հողին, մեծապէս նկուն, անընդունակ սողալու եւ ցիխով սաստափուելու, ինչպէս է պարսպան մարդոց մեծ մասին, իր լուռ գանգատովը, զինքը կ'ընէր իր մէջ թշուառ: Անշուշտ միտքէն շանցաւ արդարացնել Մարանը: Բայց իր գայրոյթը թեւաբեկ բան մըն էր միշտ. ամէն տեղ, ինչպէս եւ հոս: Պինդ, հայեացքը սեւեռ, թարկաշեշտ, բայց գուազ:

— Ինչպէ՞ս: Կարելի՞ բան է, երբ ես ոչինչ գիտեմ:

Անիկա փակած էր աչքերը՝ խորհելով Մարանին լրբութեան ու աաղանդին:

— Դուք ոչինչ գիտէք:

— Ի հարկէ:

Թո՛ղ, անտիրտ:

Թթու ու ձախող զարմանք մը աւելի ծռեց Իշխանին արդէն տեսաբար արտայայտութիւնը: Հաստ իր ստորաշրթունքը կը ճմուռէր ու կը մասնէր, զեթովը՝ ճիտը ըրած կիսով վեր, ցուռի ցոյղ աղ-

ւէտի մը պէս: Չայն տեսնող մը պիտի խորհէր խորունկ ու տրտուճ յուսախարութեանց:

— Նշեցրուաքաղ մը, այս ամէնը:

Չէր բաւժաբար ներքին մենախօսութիւնը թեթեւակի կ'արտացոլար անոր մանր աչքերէն: Իշխանը հոգեբանօրէն ճիշտ մը չէր: Ազգականած, բայց այն չափով, որքան կը հասնի գրամին անիւր: Արդէն իր պայծերուն վաճառումովը ապրիլ՝ ինքզինքը արժէքի տանիլ կը նշանակէ: Մեղքն իսկ քաջութիւն է, անգործութեան, փառամին, հոտուսին հետ բազդատուած: Ու կը մտածէր եղկելի Արծրունին ճշմարտութիւններու, որոնք յայտարարեք էր որբուհիներու հարսնէքներուն: Տառապանքն է, որ մարդը կ'ընէ հարուստ կամ աղքատ: Ու պզտիկ է երկանաբարը, որ կ'անցնի մեղաւոր մօր մը ճիւղէն, որպէսզի անոր աղջիկն ալ քրտինք չընդունի: Մարդկային զգացումները ուրանալը գիրքերու հերոսութիւն է: Կան անոնք, ամէնէն խոր ուժեղութիւնն ալ մէջը, երբ իրենց խղճտանքին հետ ձգուին մինակ:

— Յամենայնդէպս, Օրիորդ, ձեր կամքն է լինելու: Նոր չէ, որ պատիւը կ'ընէք ինձի ճաշակից ըլլալու: Իմ սեղանը, ինչպէս սիրաբար միշտ բաց է եղել ձեր ընտանիքին: Ու պարտն Պարզեւեանը կ'ընդունիմ իբր մէկը մեր մեծադոյն գրականագէտներէց:

Այն նահանջը, ճարտար, որքան իրական, չըսելու համար անկեղծ, գոսցէ փրկէր Մարանով ծրագրուած «գաւազարութիւնը», եթէ անակնկալը, որուն բաժինը վէպերուն մէջ չէ, որ մեծ է ժինակ, չիւլամտէր ու չիտրտակէր թշուառ աղջկան սրտին խարխուլ ոտտը: Այդ անակնկալը, անզուգական թատերադրիին շնորհալի աղջիկը, օրիորդ Ռիթա ձէնանն էր: Իբր հայ գրագէտի աղջիկ, անիկա իր անձովը կը պատուէր Սփլանտիտ փալատը ու իր հովովը կ'արծարծէր բաւական սուր հետաքրքրութիւն, ազգային հարցին բարուք լուծումին նպաստող, փալատ այցելող ամենազգի դիւանագէտներու իր տուած ժամագրութիւններով: Այդ տեսակ օրեր էին, երբ հայկական հարցը կ'իներու սեւ աչքերուն ալ կարօտ էր մնացած: Փալատին շփոցած եզնորթը:

Կը դառնար շուկայէն, պոստոս հովահար մը ճօճելով ու բարձրաձայն խնդալով: Իրեն կը հետեւէին երկու երիտասարդներ, օտարակա՛ն, իրենց հազուածքին ու մոյնքին շէշտ դարաուղութեամբ: Մարան կապոյտով անոնց աչքը, չէկ մազերը, բաց մորթը կը խօսէին ի նպաստ այսուներուն: Հաւանաբար նոր ժամանած դիւթախուճքին արուեստագէտներէն: Իր ետանդին մէջ, չէր զգար աչքերուն կրակը: Չազդուեցաւ պարտէպին խոնաւ զովութենէն ու չէր տեսած Իշխան Պօղոս Արծրունին, որ հովանոցէն դուրս, ծուռ իր հասակովը ուղղաճիւղ, թթուած՝ կը դիտէր լուքսարեան երեկոներու նաճիւղ ձէնանը, այն ատեն գլխիկը իր կուրծքին, թուշունի նման կրծոտելով կոճակները անոր միլիւնին, հիմա անտեսող: Վասնզի իր նորութիւնն էր, արեւելեան ոճէ բաւական սիրուն «մի նորութիւն», ամէն տեղ ճակատ ճակատի դալ իշխանին ու զայն չտեսնել: Այդպէս յղացուած ու անմիջեպ գործադրուած վրէժխնդրութեան եղանակը օրիորդին համար օրիմիմալ էր չափազանց, ու Իշխանին համար՝ նոյն չափով նըլատապոցութիւն: Գոհելի այլ պատմութիւնը, զոր ամուսնութեան արհեստական մշուշ մը ի զուր ջանաց պարտկել, քանի որ Իշխանը զայն յղանալու օրն իսկ հերքեց, իր ընդոծին սարսափովը ու թատերադրերը

երկար ատեն պաշտպանեց իր սոցիալական յայտը, մինչև որ երկուստեք լուսինային համաձայնութեամբ դարձրեցան իրարմէ։ Գրադէտը վէպով մը սպառնաց ու ոչինչ փրցուց։ Ազդիւրը ամէն տեղ երգում կ'ընէր, իր հօրը սրբազան տաղանդին վրայ, ապասկել խոզածնունդ Իշխանը, էթէ երբեք նորին վսեմութիւն շոտեցած խոզութիւնը» համարձակէր քարել ուղղել զիրանս։ Երբ հարցում ըլլար պատմաբան, օրինո՞ղ Ռիթան կ'առնէր սրբազան զայրոյթի պատմուճան, հանելով իր մազերն իսկ սարսուռի ու կ'ընէր քանի մը խորախորհուրդ նշաններ, անխոստովանելի բաներու համեմատութիւններն ալ զեղեցիկ բնակչի մը շարունակով իր տեսլութեան ու կը տպաւորէր։ Հնարովի՞ր։ Այլ ինչ գիտնար, թէ ինչպէս կ'անցնէին Լուստր երեկոնները, երբ անապատը կը սեւնար դանդաղ ու Իշխան Արծրունին ու զարեւելեան եղնորթը՝ Նեղոսի ափին իրենց օտերը զիր լուսնայինս։ Առանց իրականութեան այս ճնշող փաստերուն, որոնց հօրը պատմութեան սպրդած էին, երբ զգեկոյց կ'առնէր իր տպաւորութեանց մասին։ Կինները, ասոնց կարգին օրինո՞ղ Ռիթա ձէնանը չեղածէն ստեղծեն պիտի, երբ խնդիրը կը դառնայ բնական անոնցքին շարժը։ Հարկ չկայ, ոչ առիթով չըջող լուսերը վերստին տողելու հոս։ Կընով մը մասին բաժնեբուն մէջ, խենթ է ան, որ ստուգութիւնը կ'ուզէ ջնկել սուտէն։ Օրինո՞ղ Ռիթան, ամէնէն հաւանական վարկածին համեմատ լարուած էր Իշխանին դէմ, իսկանի զնորին խոզութիւնը պատուոյ խօսք էր տուել իրան հայրիկին մի սոցիալ յատկացնել ու չէր արած»։ Աւելի հարազատ, բայց զիչ տարածուած ուրիշ վարկածի մը համեմատ, օրինո՞ղը չէր կրցած իրեն հետ միասին պարտադրել իր Աշուն օրաքերով պալիկը, քանսամենի, որուն հետ մէկ մանկութիւն էին ունեցեր, գրադէտին կնոջը մահէն յետոյ, մինչև հիմա շարունակուող մտերմութեամբ մը, սակամանէն անյայտ ու չարախօսած։ Ամէնը ոտ։ Ի հարկէ, կար աւելին ալ, բոլորովին արեւելեան, պարսկական ակօսով, որ կը պտրտէր բացառիկ վայելախոյզներու ակումբին մէջը։ Մարտ'նը, անխուսափելի'ն։ Օրինո՞ղ Ռիթա տեղեակ էր ըստածներուն։ Ու սպականած ամէն ազդկան ժօտ բնական վատութեամբ մը անիկա նախընտրած էր յարձակումը տկարին արահետէն։ Որքան ատեն որ ձիովանգատէ-Պարզեւեան աջլորամարտը կը շարունակուէր, անիկա առիթ չէր փախցնէր վատ ու ազտոտ սլաքներ սահեցնել գրադէտին շոտուած մեղքին։ Այդ պատեհութեամբ անիկա, մեր մէջ մշտապատրաստ մտնետիկներու շարունակով, ուսումնասիրած էր Պարզեւեանը, որուն պատմութիւնը վէպէ մը աւելի շահեկան կ'ընծայէր, տեղի, թուականի, տիպարներու, խարուած աղջիկներու ու անորակելի անկումներու ցնցող դրուագութեամբ։ Ու անոր հայրը, ժպտուն, խորապէս համ, կ'աւելցնէր՝ գլուխը ճօճելով։

— Կծուի էդ քո լեզուն, շան աղջիկ։

Ու կը լրջանար, պարտկելու համար անազնիւ յուզումը, ծընունդ՝ աւելի անազնիւ զգացումի մը, — նախանձին։

Այս պայմաններուն մէջ ձգտումը տարուած էր ծայրայեղ շարժում, ա'յնքան՝ որ երկու օրինո՞ղները անկարող էին իրարու ներկայութիւնը հանդուրժել զիլ-շատ հանրային բնոյթով որեւէ հաւատքով մէջ։ «Հայրեր»ու գօտեմարտը զաղջիկներուն փոխանցուած, կը ստանար եղերա-կատակերգական սրութիւն մը։ Չարախօսութիւնը

բամբասանքէն կը տարբերի սրու երանգով մը: Օրիորդ Ռիթան ոեւէ էրիկ մարդէ վար չէր մնար, երբ կը պատմէր «անպատմելին»:

Վերջին ձեռնա՛րկը: Անիկա երգում էր ըրած, վստահած էր ուսեբէնին, ու հօրը «համառուական» տաղանդին, վտարել երկդէմի կիսակոյսը դիւթաւանդէսէն, սարքելով «գապալ», ուրանալով բնական տարրական շնորհ Օրիորդ Գոհարեանին:

— Ախր, բեմը մազաճառի խոնութ չի:

Անիկա կը կրկնէր հօրը այս մեծ նախադասութիւնը, հերքել չկրնալով Սոնային մարմնական կատարելութիւնը:

Արհամարհող, պշտտ, թացիկ, կատակող անիկա առաջնորդեց երիտասարդները դէպի պարտէզ ու մնաց սառած: Աչքը ինկած էր հովանոցին:

Շփացումը մեցի կը դառնայ նկարագիր, տարիներու հուզողութէ մը յետոյ, երբ ա՛լ անյարմար ենք ատոր: Ու պիտի չազատուինք մեր վարժութիւններէն, ծանր փաստերու լախտին ալ դիմաց: Գեղբրու մէջ հարսնութիւնը կը շարունակուի, առանց կետուրի տուններէն ներս: Քաղքենիները մինչև պատաւութիւն չեն հրաժարիք իրենց:

— Հա, հա, հա, հա:

Տասնամեայ աղջկան վալլող շեշտով մը: Օրիորդ Ռիթան ծառայութիւնը կրկնողային այս «ժեսթով»:

Երիտասարդները դարձան դէպի հովանոց: Ոչի՛նչ՝ արտասովոր, անոնց համար, պատկերին մէջ: Ձէին հասկցած

— Թիւ, թիւ, թիւ...

Անուն իրենց պարմանքին մէջ՝ երիտասարդները փնտնեցին մէկը, որուն կրնային ուղղուած ըլլալ այս արհամարհական փշուրները:

Անիկա կը խնդար, ձեռքերը զարնելով կողերուն, ու դարձելով ուսական բառեր, որոնք ըլլալու էին բաւական ծիծաղաշարժ, քանի որ արուեստագէտները, հակառակ դիմադրի իրենց լրջութեան, վարակուեցան ծիծաղէն, կարմրելու աստիճան: Երբութիւնը չի վայելեր, երբ կ'անուրի փոխ: Տղաքը զգացի՞ն ասիկա, լսելու համար ինքնաբեր թափով մը, մինչ օրիորդը իր բարակ մարմինը կը ջանար հանել իր կատաղութեան կոնին, բազմապատկելով ինքզինքը ձեռքէն, ոտքերէն, մա՛նաւանդ «կծուելիք» լեզուէն:

Երկու պէրպէրի(*), ձայնէն ազդուած, ձգեցին թաւաւոր, որուն հետեի մասը կը ջրէին մորթեայ խողովակով, ու եկան առաջ: Անոնց ղեկնորակ նախաձեռքը կը ճամբորդէր խումբէն դէպի զօյգը, թեթեւ մը փոթելով անոնց շրթները:

Յոգնած, օրիորդ Ռիթան:

Անիկա դադրած էր խնդալէ: Բայց կը դողային շրթները: Մարմինը քիչ մը առաջ հակած, երկու թեւերը անկղի ձեւով մը դետեղած կողերուն պարագլութեան՝ անիկա պոռաց.

— O ! Quel beau couple.

— Լի՛րբ:

Նետուած էր ոտքի Սոնան, շարութեանէն պատի պէս ճերմակ:

(*) Պերպէրի = զուգահեռ բառակազմակերպումով A.R.A.R. @

— Դու ինքդ ես լիբրը. միասին՝ անպատիւը, միասին՝ վաճառուածը. միասին՝ պիղծը...

Հաստատ, պիրկ այս յարձակողականը, շփացած աղջկան մը վայել ջլթիկութեան հետ, կը բերէր մէջտեղ արագ ու ստոր դասնութիւն մը: Տողի մը մէջ կրբեմն կրնանք ամբողջ կեանք մը խորտակել:

— Էն էլ է խողը, քաւթառը, մարդազէլը:

Իշխանը որակող այս վերագիրները իրենց ուժգին արհամարհանքին մէջ հաւատար կու գային Սոնան կործանող տողին:

Անիկա թեւերը առու վար: Ընելի՞ք: Ձէր մնացած:

Հովազարը մէկ մատէն կախ, մանկով այն ծիծաղին մէջ, որով հկած էր պարտէզ, առտերը ետին, հեռացաւ բեմէն: Տեղի ունեցածը այնքան թաւեղական էր, որ անոր մեկնումէն յետոյ միայն անդրադարձաւ դժբախտ աղջիկը եղելութեան իմաստին, Բուսաւ տնոր մտքին առտուան պարտէզին Արտակ Գասպարեանը ու անոր շքամած աւելին:

Անոնց մինակութիւնը: Իշխանը՝ պերճարարաւ վկայութիւն մը: Գոնէ գիտնար լուի:

Եղաւ անիկա իշու չափ օրամիտ ու խողի չափ ազատ՝ յաղթական հեռացող աղջիկը հարուածելուն մէջ: Ու Լոնտոնի մէջ իր կրթութիւնը զգասկաւորած՝ Իշխանէն այս դոկտորութիւնը տիրական ցաւի մը պէս մխուեցաւ Սոնայի սրտին: Կործանելը տխուր բան է անշուշտ: Ու տխուր ցեղերը եթէ գերի չեն, կործանողներ միայն եղան: Բայց ստոր մէջ վատնուած մոլուցքը յատկանշական է անհատի մասին: Մէկը դատել է, պիտակել է առաջ, անզամ մը բարկացուցէք: Սոնան, վարժուած գրադէտին փարթամ ու պանուճազեղ պարսաւին, պղտորեցաւ խորապէս ու ընդմիջեց:

— Բայց շաբաթներով ձեր թանկագին հիւրը եղաւ ան:

— Անարգար է այդ մեղադրանքը: Ինձմէ առաջ ու ինձմէ վերջ անոնք ազգին թանկագին հիւրերն են: Միս՛լ կ'ըսեմ:

Լուսութիւն:

— Նա արգէն Երբեք իմ հիւրը չէ եղած:

Դժուարութիւն:

— Վճարուած, վաճառուած աղջիկ է միայն:

Դիւրութիւնը, որով կը սահինք դատութեանը:

— Այդպէ՞ս, — հարցուց Սոնան ու անոր ձայնին մէջ կար խորունկ բեկում:

— Ի հարկէ: Ուրիշ ի՞նչ:

Վիրաւոր իր արժանապատուութիւնը Իշխանը ըրած էր կոյր, շտեմնելու չափ նուազկոտ հսկիծը, զոր իր բառերը կը ստեղծէին աղջկան երեսին: Ասանկ: Անշու՛շտ: Հայոց ազգին պատկանելի իշխանները, որոնք աղջիկներ կը գնէին: Ու ան միւսները, Հայոց ազգին պատկանելի գլուխները, որոնք...

— Որքան դառն է իմ գոյնը:

Չարունակեց Իշխան Արծրունին, վասնպի Սոնան ձեռքերը տարած էր կրկին իր աչքերուն: Այդ դիւրքը անոր գլուխը կ'ընէր արձանային յօրինում մը, նայուածքին անփոխարինելի իրականութիւնը տարագրելով անոր դէմքէն ու տանելով զայն անունին, մարմարեղէն արտայայտութեան:

Կրկին լռութիւն :

Նրբանցքին կիսարաց դուռնէն, ժամացոյց մը, Հեծկլտուն, առաւ ասանքմէկ հարուած : Օրը մօտ կէսին ու ոչինչ ունէր սկսած :

Մտայ մը մտտեցաւ անոնց, ձեռքին՝ այցաքարտ, զոր երկարեց Սոնային : Հիւրերը, շուկայէն դարձող, քրտնաթոր, որոնք վայրկեան մը կը շեղէին պարտէզ, հովանալու : Ձորս աւազանիկներու տասներկու շատրուանները անկարող էին մեղմելու արեւին ծանրութիւնը, որ դեղին ու բարակ փոշիի կը նմանէր, բայց ճնշող՝ ինչպէս սուկին :

Սոնան հաւաքեց ինքզինք :

— Ո՛ւր :

— Մէկը կ'ուզէ դեռ :

— Ո՛վ :

Հարցականը՝ հետու էր շեշտէն, որով իրենք զիրենք կը մատնեն կարգ մը մարդեր, Իշխանին պայմաններով, երբ «կ'արդիւտին» : Պարզապէս զգացումները լաստեր են մեզի համար, մեղքի ջուրերուն վրայ :

— Ձէք ճանչնար :

— Նո՞ր է ժամանած :

— Այո :

— Կարեւո՞ր :

— Այո :

— Անունը :

— Տիրան Տիրանեան :

Աղջիկը կը նեղուէր այս անիմաստ հարցականներէն :

— Մանօթ կը թուի :

— Հանրային մարդ է. բանաստեղծ ալ :

— Նորէ՞ն «մեծապատիւ»ներէն :

Այս որակականը Իշխանը անյազ կը գործածէր, ու տեղն է ըսել՝ «արժանաւորարար», վասնզի Գահիրէ, Աղեքսանդրիա անիկա տառապէս պաշարուած էր եղերերգակ, դիցազներգակ տաղաչափներու գումարտակով մը, որոնք մեր Աղէտը կ'երգէին մեծաթիւ տողերու մէջ ու մեկենաս կը փնտռէին, իրենց «երկունքը» ներկայելու ազգին : Անչափելին այս յարձակողականին մէջ, պաշտօնական, տօնաւած, «ազաչուած» մեծապատուութիւնն էր անպուզական թատերադիր ձիվանդատէին, որ սրամիտ մեկնաբանութեամբ Իշխանին կը կարգար Պարոնեանին Փարսը ու կ'ողջունէր անոր մէջ մեր մեծագոյն հանճարը, որ կրցեր էր այսքան կենդանի, կատարեալ սեւեռել իր տիպերը : Ու չէր անդրադառնար, որ Պարոնեանին տուածը որքան տարրական, ճղճիմ բան էր բաղդատուած իր «Մեծապատուութեան» : Հոսհոսեմբը : Ու նկատի ունէր Պարոնեանին ռազմավարութիւնը, որով կը փորձէին չսխլուաներ ստուեր անել ա՛յ նուիրապարծուած իր փառքին : Անպատիւնե՛րը, այդ մեծատաղանդ արձակագիր որակուած մարդէրը, որոնք չէին խղճահարեր իրենց բարեկամներուն, զիրենք հիւրասիրողներուն կիներն իսկ զգլխելու ու . . . կ'երթար առաջ ըսելու ինչ որ փափուք էր, բայց «անհերքելի ստուգութիւն», ինչպէս կը վկայէր թափանցող, հոգեբան վիպողի իր «խղճմտանքը» :

Սոնան ոչինչ գիտէր այս ամէնէն : Անիկա ունեցաւ շեղ նայ-

լածք մը, վերաւորուած ու վերաւորիչ, բայց չբացաւ բերանը: Ի՞նչն էր, որ զինքը ըրաւ զգոյշ: Անցած էր քալելու:

— Աղամա՞նդը:

— Մնայ քեզի:

— Բայց, Օրիորդ Սոնա, այս գիշեր ժողով ունենք: «Ազգային վարկ է» ու ես ի վիճակի չեմ վճռական բան մը ըսելու:

— Իշխանները լռեն իսկ, վճռական խօսած կ'ըլլան: Ինչո՞ւ կը մտահոգուիք, Իշխան:

Ան չլսեց Իշխանին պատասխանը, վասնզի բացուած էր անկէ նրբանցքին դուռովը:

Կիսամուտ այդ երկարութեան վրայ անիկա ծանր օձի մը նման կը քաշէր նախատինքն օրիորդ Ռիթային: Ոչ մէկ ատեն, անիկա ինքզինքը դտած էր այսքան միևսկ, այսքան խեղճ ու անպաշտպան: Հսկայ յէնքին մէջ Մարդկային Մեղքը տեղաւորուած, փնարակուած, սակեզօծուած, աշխարհի շորս ծագերէն, իր պաշտամունքը կ'ընէր սա դեղազարդ սենեակներէն ներս: Ու կ'ընէր ատիկա հաճութեամբ ու վառքով: Քսան տարեկան աղջիկ մը շունչնար զրունք մը զլիխիկ դնելու: «Շինողին կուրանան աշխարհ», քանի անգամ անիկա ըսեր էր այս դասական անէ՛ծքը, ուզողուած աշխարհը յօրինողին, որ չէր կրնար ըլլալ անոր մանկութեան ու անդրանիկ պարմանութեան գեղեցիկ ծերունին:

Հասած էր դիւան:

Անոր ներկայացուցին քառսունչն քիչ մը վեր մարդ մը, դարկոտ, բայց բաց, պայծառ արտայայտութեամբ: Առաջին ապաւորութիւնը քիչ անգամ կը խաբէ: Սոնան զգաց, թէ կը գտնուէր մէկու մը առջեւ:

— Տիրան Տիրանեան:

Տուաւ ձեռքը ու սպասեց:

Երիտասարդները հաճոյքով դիտեցին վերապահ ազնուութիւնը այս շարժումին: Տիրան Տիրանեանը չէր ծոած՝ ձեռքը համբուրելու Օրիորդին:

— Սոնա Գոհարեան:

Հանդարտ ու խոր մեղամաղձութիւն մը կը ծորէր ազնուական անոր աչքերէն, զորս անկարող էր աւրելու աննոցներուն պիտի նըստուածքը:

— Կրնայի՞ քանի մը վայրկեան խօսիլ ձեզի, Օրիորդ:

— Շատ բարի, պարոն Տիրանեան: Երթանք սրահ:

Փայտախն մեծ ընդունարանը, աւելի ճիւղը՝ խօսարանը: Արդիական ռճով յարդարուած մեծ քաղինօ մըն էր ատիկա: Անստգիւտ մաքրութիւն ու ելեկտրական հովաճարներ:

Գրաւեցին սեղան մը:

Մարդէր, քիչ:

— Նո՞ր էք ժամանած:

— Քանի մը օր կայ:

— Կը սպասէինք ձեզի:

— Յոգնած եմ. ճամբորդութիւնը եղաւ բաւական փոթորկոտ:

Յուսամ, Հանդիստ է պարոն Պարզեւեանը:

— Անհանգի՞ստ: Այն իսկապէս: Բայց այս ձմեռը անցուց

սրտնեղ ու անտրամադիր :

— Նէօրասթենի չուենեայ :

— Բժիշկ մը ըսաւ ասիկա :

— Բաներ մը կը զգամ :

— Անչուշտ որոշ բաներ չեն այդ զգացածները : Բայց կը յոգ-
նի չափազանց արագ, նոյնիսկ քալելէն, շարժելէն, խօսելէն : Ու աս-
տիկա կը զրզռէ զինքը :

— Քաղաք կ'իջնամ :

— Առանց ատոր «կը մեռնէր», ինչպէս կը հառաչէ յաճախ :

Ձիւ երկար է փնտռած :

— Ես չուզեցի հոս իջնել :

— Ինչո՞ւ :

— Այդպէս : Ձի՞ գրեթէ :

— Օ, ոչ : Իր նամակներն իսկ ինծի կը թելադրէ : Գրելու այս
անկարողութիւնն ալ մեծ դեր ունի իր ըզմայնոտութեան մէջ :

— Կարելի է : Բայց կանուխէն ալ անիկա քմահաճ բան մըն էր
գրելու ատենը :

— Ձիւքը կը ճանչնաք շատ հինէն, այնպէս չէ՞ :

— Այո՛, շատ հինէն :

Տիրանեանի լեզուն թեթեւակի կը ստիպէր զինքը խօսքի պո-
հուն քիչ մը ընկրկելու բառերուն վրայ, որոնք այս նիւթով զորացած
կը հնչէին հասուն ու խոր բաներու պէս սպաւորիչ :

— Միակ մարդն էք, պարոն Տիրանեան, որուն մասին գէշ բան
չէ ունեցած :

— Պատանութեան զգացումները, Օրիորդ... : Յետոյ արտա-
սահմանի մէջ մեր տառապանքները կեանքին դժուարութեանց դէմ :

— Բայց... :

Մէկը կեցած էր իրենց մօտ, Չտեսան, թէ չուզեցին :

— Պարոն բանաստեղծ, աշխատեցէք, որ Օրիորդը բարեհաճի
մնալ ճաշի ու փորձել ողամանողը :

Տիրանեան վեր տաւ աչքերը :

— Իշխան Պօղոս Արծրունի, — ներկայացուց ինքզինք նորեկը :

— Պարոն Իշխան Պօղոս Արծրունի, կը խնդրեմ, որ ըլլաք քիչ
մը... բարեկերթ ու շխանկարէք մեզ :

— Բայց, Օրիորդ, ճաշը :

— Կը մերժեմ բոլոր իշխանական ճաշերը :

— Աղամանդը :

— Գետինն անցնին բոլոր աղամանները :

— «Ազգային վա՛րկը» :

— Ձեզի ըլլայ այդ վարկը ու այդ փաստը : Վճարպէս կը մեր-
ժեմ ամէն բան, խաղ, ներկայացում, խօսք ու երգ, ուր մուտք են
ունենալու ձեր իշխանազարդ հաշիւները : Կը հասկնամք :

— Բայց, Օրիորդ... :

— Ձեր իշխանազարդ հաշիւները : Ու մի ստիպէք, որ խօսիմ
աւելի : Հեռացէ՛ք : Ի՞նչ կ'ուզէք մէկէ մը, որ ոչինչ ունի ձեզի հետ
բաժնելիք :

— Ոչինչ :

— Բայց ինչ պնդերեսութիւն է ասիկա :

Ձայնին բարձրացումը իջուար ու յարաբար : Անկիւնտ դէմքով
digitised by A.R.A.R.©

ամերիկացիներ, մոնոֆլիներով դիտելու ելան: Սպասաւորներ բռնուած էին, դուռներու բացուածքին: Պատուհանին առատ լոյսը կը նուաճէր Սոնային պատկերը, զայն աղօտելով իր պայծառութեան մէջ: Ամէն կին ձեւ է ոմէն բանէ առաջ:

Տիրանեան կուտ ոտքի:

— Պարոն Իշխան Արծրունի, նախ, ուրախ է ձեզ ճանչնալու Տիրան Տիրանեանը: Երկրորդ, կը խնդրէ ձեզմէ, որ ըլլաք բարի, քիչ մը առանձին ձգելու Օրիորդը, որ ունի կարելոր ըսելիքներ կառուար Հարցի մը շուրջ:

— Կարեւոր:

Տիրանեանը լռեց:

Սոնան կը դողար զայրոյթէն: Ընթացիկ կիներուն դժբախտութիւնն է այսպէս իրենց մորթէն մատնուիլը:

Օրը գէշ էր ապահովարար: Արշալոյսէն, զրեթէ տունէն սկիզբ էր առած այս բախումին հովը: Անիկա մօրը Հետ բաւական բուն բանակութեւ էր ունեցած, Իշխանին հանդիպելու կամ չհանդիպելու Հարցին շուրջ: Ձէր ընդունած Պարզեւեանին հրաւերը, քանի մը վայրկեան իր սենեակը ըլլալու: Մտադրած էր Մարանը ապաստելու, էթէ Իշխանին մօտ իր դերը զարգեւորելն աշխատէր:

Երբ Արծրունին, Իշխանը, անձանսթ մէկէ մը կանչուած, Հեռացաւ, քաղինոն ոգեւորուած էր խանդալուր խօսակցութեամբ: Մեծ մասը ուսուեր, դիւթախաղին personnelը, ինչպէս կը գուշակուէր իրենց գէժքերուն ընտրուած շնորհէն: Ծալի պահը կը մօտենար:

— Գիտէ՞ք, թէ ինչու կ'ուզեմ ձեզ տեսնել:

— Որոշապէս ոչ: Ինչպէս պարոն Պարզեւեանը քանի օր է կը սպասէ ձեզի:

— Առած չէ՞ իմ երկտողը:

— Առած է ու այսօր ժամադրուած ալ է արդէն ձեզի, ինչպէս նաեւ Անգա Միրզայանին: Եթէ ինք չէ կրցած ձեզ գտնել, պատճառը իր յոգնութիւնն է: Քանի մը քալլ քալիլը տանջանք է իրեն ու սանդուխներէ անկարող՝ բարձրանալու: Ի գէպ, կը ճանչնա՞ք Անգա Միրզայանին:

— Անչուշտ: Միտսին եկանք Ֆրանսայէն: Դուք կը ճանչնա՞ք:

— Այո: Կէս թէ ժամ մը չկայ, որ ներկայացուցանք:

— Ո՞ւր:

— Հոս:

— Յետո՞յ:

— Այդքան:

— Ձեզի Հետ ունեցա՞ւ առանձին տեսակցութիւն:

— Ոչ, չկրցաւ, վասնզի տղան, պարոն Արմանը, որքան կրցայ անունը միտքս պահել — կարճեցաւ թեթեւակի, ապահովարար ոչ իր սուտին համար — այդ րոպէին կը ժամանէր պանդոկ:

— Հա, ըսել է տեսաք նաեւ տղան:

— Այո:

Կեցան երկուքն ալ: Ո՞՞սքը կը դժուարանար, թէ կը պակսէր ըսուելիքը:

— Որքան կը նմանի Պարզեւեանին:

— Այո՛: Ես ալ դիտեցի ատիկա: Նմանութիւնը ակնբախ է չափ, վասնզի ուրիշներ ալ խոստովանեցան իրենց տպաւորութիւնը

այդ ուղղութեամբ:

Կրկին շուրջից:

— Կը ճանչնա՞ք մայրը

— Այո՛:

— Մօտէ՞ն:

— Մօտէն ու հինէն:

Սոնան սարսուաց թեթեւակի:

— Շա՛տ մօտէն:

— Այո:

Աղջկան ոգեւոր ու հաճ արտայայտութեան վրայ, ինչպէս տեսակ մը շուար ծանրութիւն: Անոր ծիտքը կը շափէր ժամանակը գործակնային արագութեամբ: Մարդիկ շատցեր էին ու սեղանները կը զբաւուէին հետզհետէ: Ճաշէն առաջ զովացուցիչ առնելու պահն էր ատիկա: Խօսելը դրեթէ անկարելի ու անսպասով մանաւանդ: Մըտաւ ներս ճարտարապետ Աղուարիկեանը, բարեւեց երկուքն ալ ու կեցու վարանոտ: Մօտեակ փափաքող — շատոնց է չէր տեսած Տիրանեանը — բայց խօսակցութեան նկարագրէն վրդովուն: Յսած ու ծանր, առանց խմբիչքի: Ժամանակը չէր, որ կը վատնուէր անոնց կողմէ: Տիրանեան վաղածանօթ Եգիպտոսի, հանրային դրօժիչ, թերթեր վարած, Ազգային Պատուիրակութեան անդամ, ունէր բազմաթիւ բարեկամներ:

— Օրերով Սոնա, ճաշի ստեն է հիմա ու մեր խօսակցութիւնը հոս կը դառնայ անսպասով:

— Շատ կարեւոր են ձեր հաղորդելիքները:

— Ոչ անշուշտ: Ինչպէս կ'ըլլան առհասարակ իշխաններունը, բայց ամէն պարագայի, Հոգեկան delicatessen մը կայ, որ զժողովրդը հանրապահանքու այս աղմուկին:

— Կը զգամ ատիկա: Ինչ ընել սակայն:

Տիրանեան մտածեց:

Անիկա կը ճանչնար Գահիրէն, Պարզեւեանին շափ: Անոր սերունդին աւագ ներկայացուցիչներուն բախտն էր ատիկա, — իրենց տաղանդը շաղկած պալատի ու... դիտել, փոխանակ ապրելու: Խորապէս պարկէշտ, անիկա «դիտելու համար» աչք իսկ չէր ծախած:

— Ձե՞նք կրնար բացուիլ թի՛չ մը:

— Պտո՞յտ, այս տաքին:

— Ոչ պտոյտ, ատիկա պիտի նեղէր արդէն: Թրամվայ մը ու դուրս քաղաքէն:

— Ո՞րք մինչեւ:

— Շատ—շատ քառորդ մը հեռուն: Տեսա՞ծ էք արդեօք, Բուրքերու պողոտան, երրորդ կամուրջէն քիչ վերօք, փոքր պարտէզը, նեղոսի ափին:

Սոնան մտածեց:

— Հոն՝ ուր տնակ մը կայ:

— Այո:

— Ու եղէգներով մարդեր կը մրափեն հաստ շուքերու սակ:

— Ճիշդ ան:

Գահիրէն իր փաշիտով ու տաքին աղջուրով ամէնէն յոյնեցուցիչ քաղաքն է մեծ մայրաքաղաքներէն: Պիտի ըլլար անտանելին, հ-

Թէ այդ պարտէզները չընծայէին մենութեան ու խաղաղութեան ապահով խոստում մը, ամէնէն բուն տաքերուն տնդամ: Սոնան կը սիրէր այդ խորշիկը, Պարզեւեանէն յաճախակի հոն առաջնորդուած ըլլալուն: Հին, հին ծառեր, որոնք չհիննային: Քանի մը անփոփոխ պատկերներ, որոնք դրուած ըլլային յաւիտենութեան պատին: Տէրը, ո՛չ Փելլաս, ոչ ալ քաղօքներ, այլ՝ չոր աշխատաւոր մը, մորթէն բաւական բաց: Յայտնի է, որ օտարական էր, բայց արդէն աւրուած ծագումին բոլոր գիծերէն: Տեղորին մշտանոյն պարզութիւնը աչքերուն կու տար անպատանելի մութկալութիւն մը, որուն կարօտը ունին տափաստաններու ընկրկումէն պարտասող նայուածքները: Դաշտերը այսպէս կը նեղեն մեզ: Հոն կ'երթար հանգչելու, երբ քաղաքին գեհնին մէջ, մէջը մասնաւանդ անտանելի կնիկի մը հոտառատ սրահին, դաշնակը ճուարեանի ջրագրգիտ՝ նետուէր դուրս քրտինքին ու տափակութեան բուրումներէն, շունչը առնելու համար սա շուքերուն տակ: Մարդ երբ գտնախ է, գտնախ է իր հաճոյքին ինչ համար: Դաշնակը սիրահարի մը չափ ուժ ունի կարգ մը աղջիկներու վրայ: Բայց երբ սէրը փտած պտուղ է մեր մարմինին խորը: Քաղաքին աղմուկը ու ազմուկը իր հոգիին կը լռէին այդ ամայութեան մէջ ու շուքը, եւալիւրթիւտի ջնարակուած ու վերնադիր շուքը կը գրկէր անոր յոգնութիւնը, մեծ, բարի շրթունքով, այնքան զգալի երբեմն՝ մեր յուզուած, կարօտ մորթին վրայ:


Թրամ: Բուրգերու պողոտայ: Եգիպտական դաշտանկարը: Տընա՛կը: Իջան: Ու մտան, թեթեւ ոտքով, բայց Սոնային սիրտը ծանր էր պատահարէն վեր ծանրութեամբ:

Այդ պահուն ամայի էր պարտէզը: Տէրը սարսափաւ տնակին դուռէն ու քաշուեցաւ ներս: Աղօ՛թք կ'ընէր, թէ հացը կ'ուտէր: Ետտ ալ չէր զբաղեր օտարականներով, որոնց համար սուրճը շատ կը տեսնէր: Բայց կը ձգէր զանոնք հանգիստ, մինչև ուշատեան, երբ էտինքին տղան կու գար ու կ'անցնէր դործի:

Նստան:
 Ընդդէմ դիրք ունէին: Քանի մը մեթր վար, շուքը, սփռոյն գրեթէ, բայց տղեղ, ցեխ չըլլալու հիդին մէջ քիչ մը կանչըցած:
 Պարզ տախտակ մը իրենց նստարանին:
 Թոսակցութիւնը եկաւ ինքնարբարար իր առանցքին:

ՅԱԿՈՒ ԾՇԱԿԱՆ

(Շար. 17)



Ս. Պ. Տ Ա Տ Ո Յ Ե Ա Ն

Ջ Ա Ն Գ ՈՒ Ա Մ Ե Ի Ա Ր ՈՒ Ե Ս

ԱՆՅՐՋԱՆՑԵԼԻ ՀԱԿԱՍԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Մտածումին ազնուականութեան եւ զանգուածին ուսմականութեան համադրումը գեղագիտութեան ամէնէն անշարժանի կազմականութիւններէն կամ ճշմարտագանցութիւններէն (paradox) մէկն է: Որովհետեւ կարելի չէ նոյնացնել իրարմէ էաբանօրէն ստորեկ իրողութիւններ երրորդ եւ միակ փեճակի մը մէջ:

Գրքունակին համար երկուքին միջեւ վտանգոյ տարածութիւնը զատարարականութեան մարզն է:

Գոյապաշտին համար հողերանական-բնականցական այս «պարապը» ունիւնով կարելի է լեցնել կամ պարզապէս վերացնել:

Մինիք-իրողապաշտին համար յիշեալ իրաւորութիւնը միայն բնական է, զուցէ նաեւ՝ անհրաժեշտ:

Վերացապաշտին եւ իտէալիստին համար բաժնոյ պատուարը ընտրանիին պաշտպանութիւնն է՝ զանդուածին ուսմականութեան զէմ:

Միջակ-մատուորականին համար առկայ երկակիութեան պատճառած շեփոթը փրկարար ապաստան է:

Միամիտ-իրապաշտին համար ալը անդունդը գոյութիւն չունի, կամ արդէն՝ պէտք չէ գոյութիւն ունենար: Ուրեմն, կազութիւնը սրբադրելու համար անհրաժեշտ է պաշարիլ բոլոր կարելի միջոցներով:

Յը մնայ սակայն Հակասահմանութիւնը մեր, երբորդ աշխարհին եւ զարգացած ընկերութիւններուն յատուկ արուեստներուն մէջ:

Որովհետեւ, ինչպիսի աշխարհահայացքի լոյսին տակ ալ բերուի արուեստի եւ իրականութեան յարաբերութեան հարցը, արուեստը կը նշէ մարդկային գործունէութեան ինքնուրոյն մակարդակ մը՝ սեփական Համակարգով մը: Ճիշդ է, որ անիկա իր գոյութեան եւ գոյատեւման պատճառները կը ստանայ ապրուած ժամանակէն, սակայն իր վերջնական արտադրութեան մէջ կը ներկայացնէ իրականութեան ի՛ր հասկացողութիւնը, կը պարտադրէ ի՛ր ճշմարտութիւնները, փորձելով կանխել անոր զարգացումին հետագայ հանգրուանները:

Ճիշդքական ամէն երեւոյթ արուեստագիտականօրէն շէղք է, «անտարբեր» արուեստագէտին եւ, առհասարակ, մասժողին անոր ընկալումն է, որ զայն կը ծանրաբեռնէ հոգեբանական տուեալներով: Այս նոր տարրերը կը կազմեն արուեստի գործին մտաւորական-զրացական ենթահողը:

Հասարակութեան կամ զգանկուածին ընկալումը իրականութեան՝ իրողական եւ պարզապական է. հետեւաբար, հակազդեցութեան Համապատասխան կերպերն ալ, իրենց կարգին, կը մնան իրողական մակարդակի վերայ, պայմանաւորուած՝ նիւթական անմիջական ազդակներով, հիմնովին տարբեր արուեստի մարզէն:

Ուրեմն, ճշմարտութեան եւ գեղեցկութեան իմացքները, ինչպէս նաեւ սովորական իրականութեան բոլոր երեւոյթները բացատրող ընդհանուր սկզբունքներ տարազելու փորձերը կ'առաջնորդեն անելի:

Ինտութիւնը ինքնին անտարբեր է ամէն կարգի արժէքներու եւ, մասնաւորաբար՝ գեղագիտական արժէքներուն: Նոյնիսկ բնականօրէն գեղեցիկ նրկատուածը՝ իբրեւ երեւոյթ, իրին նկատմամբ ենթակային դատողութիւնը կը նշէ եւ, իր կարգին, տարբեր իմաստով գեղեցիկ է արուեստագիտականօրէն գեղեցիկէն. անցնելով բարդ հոլովոյթի մը, վերջինը վերածուած է նոր եւ առանձին գոյութեան մը:

Իր նիւթին հետ արուեստագէտին յարաբերութիւնը գերազանցապէս ներքին-հոգեկան է՝ իր անշահախնդրութեան մէջ, այդ պատճառով՝ ազնուական:

Այս չի նշանակեր, որ գեղեցիկին զգացումը զանգուածին մօտ բամբակական է. այդ զգայարանքը՝ բարոյական մակարդակին վրայ գործող խիղճին նման, ներկայ է բոլոր մարդոց մէջ՝ իբրեւ անհրաժեշտ մասնիկը դատողութեան:

Հոս պիտի շուրջինք ներառեն իրականութեան գործին ճշմարտական արժէքին հարցը. արուեստի գործերը, իրենց ճշմարտացիութեան եւ մտաւորական ուժին տեսակէտէն՝ իրարմէ քանակականօրէն կը տարբերին. այդ շափը, տարբեր ազդակներու կողքին, կ'որոշէ իրենց տիեզերականութիւնը: Թէեւ արուեստի գործին իմացարանական արժէքը իրեն ծնունդ տուող հոգեբանական վիճակին բնոյթին եւ ուժգնութեան հետ կենսականօրէն առնչուած է, սակայն մեզ հետաքրքրողը այդ վիճակին էքրանական տարբերութեան մասանշումն է իրերու հանդէպ առարկայական կեցուածքներէն:

Արուեստի միջոցաւ առարկային վերածումը արուեստագիտական նիւթի մը, իրականին մէջ անոր պարզումն է օգտապաշտական-յարաբերական արժէքներէն, եւ փոխարէնը՝ ընդունումը հոգեկան-Համամարդկային արժէքներու:

Ուրեմն, արուեստագիտական փորձը ինքնին անցում մըն է որոշ վի-

ճակէ՛ մը ուրիշի՛ մը. այս փորձառութեան ընթացքին է, որ կը պատահի յարակարծական համադրումը արուեստի եւ աւօրեայ կեանքի մակարդակներուն:

Սակայն այս հանդիպումները արուեստագիտական եւ իրողական մակարդակներուն միջեւ յաճախ ոչ-ամբողջական եւ ժամանակաւոր առիթներ են. իրականութիւնը կը զարգանայ, իրեն զուգահեռ եւ օրգանականորէն առնչուած կ'ընթանայ մարդուն մտաւորական-արուեստագիտական պատկերացումը այդ յառաջիկայի:

Պորժնականապէս, այս իրավիճակը հոգեբանական լուրջ հետեւանքներ չի կրնար ունենալ հասարակութեան վրայ, անհատապէս եւ հաւաքաբար: Բայց արուեստագէտին պարադային այս երկակիութիւնը կը ստեղծէ, եթէ ոչ ներքին պատակառում մը, զսնէ հոգեկան ճնշւածութիւն: Երբեմն երկու մակարդակներուն միջեւ տարբերութիւնը կը շեշտուի ա՛յնքան՝ որ ստեղծած յարակարծութիւնը անհեթեթ կը դարձնէ ամբողջ կեանքը:

Այսպէս, անհեթեթ է կարծէք զբաղիլ զբանաստեղծական, պատմագիտական, իմաստասիրական, գեղագիտական, բարոյագիտական եւ ուրիշ տեսարանական «մանրուքներով», երբ արտաքին իրականութիւնը կը թուի ամբողջովին անտարբեր ըլլալ այդ գիտութիւններուն հայթայթած ազնիւ չափանիշներուն:

Նոեւ, յուսահատական կերպով անհեթեթ է պատերու ետին քաշուած՝ էջեր լէցնել կամ պատտաններ ներկել, երբ զուրը այնքան քառո ու ժխոր կայ, երբ ամէն երեւոյթ հակադիր է բոլոր մարդկային արժէքներուն:

Որքերգականորէն ապարդիւն աշխատանք է փորձը՝ արտայայտելու ներքնապէս զգացումներ, երբ անոր իսկական ծաւալին փոքրագոյն մասնիկը միայն կը ծփայ հոգիին փոթորկոտ ջուրերուն երեսին:

Տակաւին, անկարելի է հաշտուիլ եւ խաղաղաբար սպրիլ այն սարսափին հետ, թէ մինչեւ մեր օրերուն վախճանը՝ պիտի չկարենանք իսկապէս եւ լիովին հաղորդակցիլ ուրիշի՛ մը հետ:

Մարդուն կողմէ՛ յարատեւ ու դանդաղ ինքնասպանութիւն է կարծէք ծուէն-ծուէն եւ փշուր-փշուր հոգին վատնել աւօրեային տաղտուկին մէջ սփռուած բանաստեղծութիւններու, մեղեդիներու, պատաններու, յօդուածներու, խօսքերու, ժեսթերու, նոյնիսկ բանավէճերու մէջ:

Կարելի չէ, փիլիսոփայական որեւէ փաստարկումով հերքել այն իրողութիւնը, թէ անհատը բացարձակապէս առանձին է իր ստեղծագործութեան հետ, եւ թէ՛ այդ մտերիմ տիպաբանական ստեղծագործութեան հետ ազդեւր է անդարմանելի անձկութեան:

Սակայն, փաստօրէն, այս անձկագին յարաբերութեան մէջ կը կայանայ արուեստի մղիչ ուժը եւ, անշուշտ, զործերուն մեծութեան պատճառը: Ո՛րքան տկարանայ այս յարաբերութեան ուժղնութիւնը, ա՛յնքան կը հեռանայ արուեստի զործը իր ստեղծիչին. օտարանալով անոր՝ կը կորսնցնէ ադնըականութիւնը, մօտենալով ոչ-արուեստագիտական մակարդակներու: Արուեստը կ'աշխատէր, երբ կ'իյնայ իրողապաշտական-օգտապաշտական մաս-ծողութեան հակակշիռին առկ, այսինքն՝ զանգուածին ճոճականութեան համար հանելի ձեւերու մէջ (տե՛ս Երաբիւ, զգայապաշտական եւ վաճառական նացած այլ ոճերը օրինակներ են այս ուղղութեամբ):

Կը պատահի նաեւ հակառակը. երբ արուեստագէտը կամ մտածողը նիւթը կը ներկայացնէ այնպիսի ձեւով մը, որ սովորական անհատը իրեն ներկայացուած պատկերներուն ու գաղափարներուն ընդմէջէն կը յաջողի տես-

նեկ իրականութիւնը՝ նոր, արուեստագիտական հեռաւորութիւններով, ճշմարտութեան եւ գեղեցկութեան տարբեր չափանիշներով: Այս գաղափարին ծայրայեղ չափին Ֆատագոյները կ'ըսեն, թէ արուեստը իրականութեան փոխկուտայ գեղեցկութիւնները, այլապէս իրականութիւնը զուրկ է անոնցմէ: Իսկանը այն է, թէ գեղարուեստական (ստեղծագործական եւ ընկալական) փորձառութեան մէջ միայն կը լուծուի հակասականութիւնը, անուան զարագայականօրէն եւ անշուշտ ըստ անհատին ընկալումին մակարդակին:

Այս փորձառութեան ընթացքին, եւ անոր պատճառով, արուեստագիտականօրէն գեղեցիկը, թէ՛ իբրեւ մարդուն ստեղծագործութիւնը եւ թէ՛ իբրեւ վայելքի բիւրեղային առարկայ, կը ստանայ տեսակ մը բարոյական արժէք, գառնալով ձուլող ազդակ՝ մտածումին ազնուականութեան եւ զանգուածին ուսմականութեան:

Գեղարուեստական արժէքը կը շրջանցէ բարիի եւ չարի, հիշքի եւ սքիսալի չափանիշները, որովհետեւ անոնց բնոյթը կը պարունակէ յարաբերական տարբեր, որոնցմէ զուրկ է արուեստի մարզը. գեղեցիկին յղացումը, նաեւ գործառութիւնը՝ բացարձակ գործունէութիւններ են: Այս փորձառութեան վերացնող եւ մաքրողական զերն է, որ գեղեցիկին կը փոխանցէ ինքնուրոյն բարոյական արժէք մը, տեսակ մը՝ բարիի նոր ստորոգութիւն, եւ իբրեւ այդպիսին՝ ամէն կեղծիքէ գերծ հշմարտութիւն:

ՍԵՒԱ ՊԱՐՍՈՒՄԵԱՆ-ՏԱՏՈՅԵԱՆ

Լ. Մ Կ Ր Տ Ձ Ե Ա Ն

Մ Ի Դ Ր ՈՒ Ա Գ Զ Ո Ր Ր Ո Ր Դ Դ Ա Ր Ի Յ

Ժամանակին պատրաստուած եւ ապա սոյն հանդէսի էջերում հրատարակուած ուսումնասիրութեան մէջ, Պարոյր Հայկազնի ու նրա ականաւոր ժամանակակիցների դործունէութեան վերաբերեալ, արդէն առիթ է հղել նշելու, որ այդ ականաւոր ժամանակակիցներից մէկը՝ Լիբանիս Անտիոքցին (314-մօտ 303) իր երկրի շարքով ժառանգութիւն է թողել նաեւ ոչ պակաս քան 1544 նամակներ: Այդ նամակների ամբողջական հաւաքածոն, դոնէ քանակական առումով, առհասարակ մեծագոյնն է, ինչ որ մտցել է հետազոտողներու սեւէ հեղինակից:

Արդ, Լիբանիսի նամակներում կան այլևայլ ուղղակի եւ անուղղակի վկայութիւններ, որոնք անպայման հետաքրքրական են նաեւ Հայոց պատմութեան այս կամ այն կողմը հասկանալու կամ լուսաբանելու ստպարէզում: Ուստի՝ աւելորդ չէ այդ նամակային ժառանգութիւնը ինչ-որ չափով ներկայացնելը:

Լիբանիսի պահպանուած նամակները վերաբերում են նրա կեանքի իրարից կտրուած երկու ժամանակաշրջանի. առաջին խումբը՝ 355ից 365 թուականներին, իսկ երկրորդը՝ 387ից 393 թուականներին: Դրանց արանքում գտնուող մօտ 21 տարիներին անպայման գրուած նամակները կորած են համարուած: Հինց անձամբ Լիբանիսի վկայութեամբ, բոլոր նամակները հասցէատէրերին ուղարկուելուց առաջ պատճենագրուել ու ամփոփուել են մայր մատենանում՝ որոշակի յաջորդականութեամբ: Այդ հիման վրայ էլ դրանք հրատարակուել են հետագայում, այլպէս իր ժամանակ գործնականում անկարելի կը լինէր աշխարհում, թէկուզ եւ նրա որոշակի սահմանափակ դօտում գրուած բոլոր նամակները որեւէ մեւոյ թ մի բերել, չհաշուած որոշ սակուաթիւ ինքնահրատարակչական բա-

ցատութիւնները: Հաշուումները թոյլ են տալիս պնդելու, որ Լիբանիսը միջին հաշուով շաբաթը երկու նամակ է գրել, ուրեմն՝ 21 տարում գրուած եւ ապա կորածների թիւը հասնում է երկու հարարի: Ենթադրում է նաեւ, որ 355ից առաջ եւս Լիբանիսը նամակներ է գրել, առանց սակայն մայր մատենան մտցնելու: Պատճենագրելն ու մայր մատենան մտցրելը սկսել է միայն այն ժամանակ, երբ նամակներ է ուղղել աւելի կամ պակաս նշանաւոր անձանց:

Եւ ահա, քանի որ Լիբանիսի գրչի տակից ելած դրուածքներում որոշակի վկայութիւններ կան ժամանակի հայ անձանց ու դրանով իսկ հայ իրականութեան մասին, նրա անունը եւ վաստակը անձանց չէ նաեւ մերօրեայ հայ տպագիր հրատարակութիւններին: Չանազան առիթներով յիշատակուած է եւ այդ անունը: Բայց, դատելով նման յիշատակումների ցանցառ ու կիսակատար բնութից, կարելի է ասել, որ մինչեւ հիմա էլ բուսական աղօտ պատկերացումներ կան շրջապատում դարձնելու հասարակական ու մշակութային իրականութեան որոշակի բնագաւառներին վերաբերեալ եւ փաստօրէն բացակայում են հայկական լուրջ ու հիմնաւոր հետազոտութիւնները: Մասամբ կարելի է հասկանալ, թէ ինչու, իսկ մասամբ էլ՝ ոչ: Յամենայնդէպս, պատմական շատ ու շատ իրողութիւններ մինչեւ օրս էլ մնում են մշուշապատ վիճակում: Այսպէս, օրինակ, հայաստանեան հանրագիտարանի ճրդ հատորի «Հնդկ-Ռիտալիան մշակութային վերնագրով ըստ ամենայնի բնագաւառի յօդուածում» (էջ 339) Պարոյր Հայկազնի աշակերտ է համարուած նաեւ Լիբանիսը, ինչ որ ակնյայտ թիւրիմացութեան արդիւնք է, որը համարեալ համազօր է սխալի: Դրա կողքին՝ միանգամայն հաւանական է յօդ-

աածի յաջորդ այն պնդումը, թէ Լիբանոսն ունեցել է մօտ 20 հայ աշակերտներ: Ի հարկէ, մասնադիտական յօդուածի զոյգ չեղինակները այդ տուեալներն իրենց զլիւից չեն յօրինել, այլ յնուեւ են ինչ-ինչ, թերեւս չնացած ու թերի գրաւոր աղբիւրներէ վրայ: Բայց օգտագործուած զրականութեան ցանկում այդ կէտին վերաբերող որեւէ հայերէն տպագիր աղբիւր չի նշուում, թէ եւ անպակաս ևն անխուսափելի Մարքան ու Էնզելը եւ ուսուերէն գրքերը, ինչ որ նշանակում է, թէ թերացումը միայն տեղի ուղութեան հետեւանք չէ:

Լիբանոսի համապատասխան ինքնակենսագրական երկում ամենայն մանրամասնութեամբ նկարագրուած է նաեւ նրա առաջին ճանապարհորդութիւնը Անտիօքէց Աթէնք, երբ 22 տարեկան երիտասարդը, ի վերջոյ, իր նպատակին հասած էր զգում ու բարձրագոյն ուսումնառութեան մեկնում, մօր արցունքների ուղեկցութեամբ եւ կրտսեր ու սիրելի մօրեղբայր Փազանիոսի հովանաւորիչ թոյլտուութեամբ: Նկարագրուած է ճանապարհին ծանր հիւանդանալն ու Աթէնք ընկնելը, այնտեղ իրերի ճնշման տակ յուսախաբութիւն կրելը եւ չսիրած շրջանակ մտնելը, առանց մարդկանց անունները տալու: Բայց Եւնայիտի նշանաւոր զբոսից երևում է, որ Լիբանոսն Աթէնքում աշակերտել է Դիոփանտոս Արաբին, թէ եւ նա մեծ ցանկութիւն ունէր ուսանելու իր համաքաղաքացի Ծպիփանիոսի կամ Պրոյերեսիոսի մօտ:

Իս պատահեց այսպէս, Աթէնքում կատարի մրցութիւն կար ուսուցիչներէ միջեւ, որին մեծ եռանդով նպաստում էին նրանց աշակերտները: Նրանք խմբեր կազմած առեւանգում էին հեռու վայրերից նաւահանգիստ հասած նորեկներին ու պարտադրում միանալ իրենց: Այդ ձեւով էլ Դիոփանտոսի աշակերտները վարուեցին հիւանդ ու նեղութեան մատնուած Լիբանոսի հետ, նրան արգելափակեցին եւ միայն, ընդունուած ծիսական արարողութիւններէ յետոյ, այն ժամանակ պատարձակեցին, երբ նա երդումով պարտաւորուեց մասնակցել բացառապէս

Դիոփանտոսի դասերին, իսկ ուրիշներէ իրաւունք ունէր լսել միայն քաղաքից դուրս՝ Արիստոտելի օրերից գործող Լիկկոնում (Ճեմարանում) կաղմակերպուող հասարակական հրապարակային գասախօսութիւններէ ընթացքում, որոնք մօտաւորապէս կարելի է համեմատել մեթօրեայ «Ժողովրդական համալսարաններ» հետ: Այնպէս որ՝ Լիբանոսը, ըստ առկայ վկայութիւնների, ուղղակի չի աշակերտել Պարոյր Հայկազինին, թէ եւ, անշուշտ, զգացել է նրա ներկայութիւնն Աթէնքում ու անպայման հաղորդակցուել նրա արուեստին, այս կամ այն առիթով, աւելի կամ պակաս չափով:

Այդ կացութիւնը մեծ տհաճութիւն պատճառեց Լիբանոսին: Նա մեծ համարում չունէր իր «օրինաւոր» ուսուցիչ հանդէպ, ուստի՝ ուշադրութիւն չէր դարձնում նրա դասերին: Խուսափում էր նաեւ դասընկերներից, որոնք ուսումնառութեան փոխարէն աւելի շատ զբաղւում էին փողոցային տուրուդփոցներով եւ այլնով: Իր ամբողջ ուշադրութիւնը նա առաւելագոյն նուիրումով կենտրոնացրեց ընթերցանութեան վրայ, այդպիսով մի քանի տարում անհամար գիրքերէ կուտակելով: Աթէնական ուսումնառութեան տարիների այրումները անջնջելի հեռք թողեցին Լիբանոսի յիշողութեան մէջ, որոնք եւ արտացոլում են գտնում նրա երկերում ու, առաջին հերթին՝ նամակներում:

Այսպէս, մի առիթով, երբ Լիբանոսն իմանում է, որ իր բարեկամներից մէկն ուզում է որդուն Աթէնք ուղարկել ուսումը շարունակելու համար, հաշուի առնելով այդ քաղաքի հանրաճանաչ համբաւը, մի այլ ընդհանուր բարեկամի յղած նամակում խորհուրդ է տալիս միջամտել ու յետ կանդնեցնել այդ ծրարագրից, ինչ որ ճշդութեամբ կատարւում է: Արդ՝ ՅՅԶին Քեյլոսոսին գրած նամակում Լիբանոսը հաստատելով հանդերձ, թէ «Ջարմամայի չէ, երբ մեկուսմէ կը սիրահարուած է Ատտիլային», քանի որ դրա համար իրական հիմքեր կան, պարտականութիւն է համարում, ստակայն, բարեկամին թելադրել, որ իր որ-

զուե յանտեղ շուշարկի: Որովհետեւ, — ասում է նա, — «այնտեղի ուսուցիչներից ամառք ծեր եմ եւ լաւ շտեպուց յետոյ քաղցր թի կարիք ունեմ» (Հաւանաբար նկատել տեսելով նաեւ Գրոյանստոսին ու Պրոյերեստոսին), իսկ «սարիշմերն էլ քեռնու հեմք իրեմք այնպիսի ուսուցիչների կարիք ունեմ, որոնք իրեմք անաշիմ հերթին սովորեցնելու լինեն՝ խօսքով մըրցել, գեմբի փոխարէն» (Հաւանաբար ներկատի տեսելով նաեւ Հիմերիոսին ու Սուպրիսին): Այս կարգի տրամադրութիւնները յաճախ են արտայայտուում, ուղղակի կամ անուղղակի առիթներով, Լիբանոսի նամակներում:

Ասուածից երեւում է, որ Լիբանոսը Պրոյերեստոսին չի աշակերտել ուղղակի իմաստով, եթէ վտտահելու լինենք մասնաւորապէս զբաղմունքի ներքին ու Համապատասխան եզրակացութիւններին: Բայց ըստ ամենայնի անվիճելի է թուում, որ Լիբանոսը իր կեանքի ընթացքում շփուել է հայերի հետ եւ ունեցել զգալի թուով հայ աշակերտներ: Նման պարագաների մի մասը վաստագրուած է զբաղմունքի մէջ. մնում է միայն գոնէ դրանք ի մի հաւաքել եւ սլաւաբանական իրականութեան ամբողջական պատկերը պարզել, ինչ որ, ի հարկէ, Հետեւողական ու Հմտալի աշխատանք է պահանջում:

Այս յօդուածում ներկայացուում է շորթորդ դարի մեզ հետաքրքրող դժուարաներից միայն մէկը, Լիբանոսի մեծաքանակ նամակներից մէկի հիման վերայ: Այդ նամակի իմաստային բաղադրատարրերը ըստ Հարաւորին լուսարանից ատաղ՝ արժէ նախ թարգմանաբար ներկայացնել բուն նամակի բնագիրը: Ինչպէս թեմք եւ ամբողջութեամբ:

Մաքսիմոս անունով մի բարեկամի յղուած նամակի բովանդակութիւնն այս է.

«Հայաստանցի երիտասարդ Լիտոյանի մայրը իր միակ գաւակիմ բերել է այստեղ ու իմն յամնել: Նրանով եւ ուրախացայ, քանզի մա ընդունակ է՝ գտնար բնկայելու: Մի աշխոյժ մտրուկ: Իսկ մօր համողէպ հիացում գրացի, քանզի մա երկ-

րորդ ամուսնութիւն չի որոնում, քէնու միայն մէկ հասիկ գաւակ է ծնել, եւ՝ որովհետեւ մա այմքամ երկար ճամաւորն է կտրել ուտքով այն համագումով, քէ անէն ինչ աւելի լաւ կ'ընթանայ որդու համար, եթէ իմէր սկզբից եւեթ մերկայ գտնուի ու գործերով գրադուի: Թէ արդեօք նրանից մի հելլէն դուրս կը գայ՝ դակը լինի Աստուայ հագը աւ մառն իմ: Իսկ քէ մրա տունը իրեն կը մնայ՝ դրա հագը պէտք է մայրը քաշի, քայց մառն մասնաբաժնուր՝ այդ ազմի մարդը՝ պէտք է հոգ տամի դրա համար, որն իր խոր քարնապաշտութեամ մէջ մառն այդ մարդկանց խնամքն է ստաննելու, այն համագումով, որ իրաքանիւր արդարամիտ մարդու պարտքն է օգնել որքին ու քոյլ չտալ, որ տեղից նլնողը կոզոպտի մրամ: Նրա մտադրութիւնը լաւ է, եւ դա կարող է իսկապէս լաւ արդիւնք տալ, եթէ նրան քն աշակցութիւնը հասցուի, իսկ այդ աշակցութիւնը, սրանում եւ վստան եմ, կը հասցուի նրան, քանզի իմն հովանաւորելը քն ցանկութիւնն է»:

Այս նամակը եւս, միւս բոլոր նամակների նման, շատ պարզ է գրուած, բայց առանց վերծանուելու եւ բացատրուելու՝ դեռ ոչինչ չի նշանակում: Ուստի՝ անցնենք յարակից բացատրութիւններին:

Մ'ով է հասցէատէր Մաքսիմոսը: Նա Պաղեստինից էր, Հեթանոս: Նամակը գրուելու պահին՝ 359/360ի ձմրան սկզբին, վարում էր «praeses Armeniae» պաշտօնը Հայաստանում (խօսքը վերաբերում է, բնականաբար, Արեւելեան Հռոմէական (Բիւզանդական) կայսրութեան մէջ մտնող Հայաստանեան Հատուածին), իսկ 362ին Յուլիանոս կայսեր կողմից նշանակուեց «consularis Caesariae»: Լիբանոսը նրան ճանաչում էր Անտիոքից: Անտիոքում նա ունէր մի տուն, որտեղ բնակուում էին բնիկ անտիոքցի կիներ եւ գաւակները:

Իսկ մասնաւորապէս, որի ինքնակալական նախաձեռնութիւնը այնքան զնահատուած է նամակում, Լիբանոսի երբեմնի դասընկերներից է, թուեղ Հեթանոս: Նա այդ ժամանակ Հայկական հայ-

րենի քաղաքի համայնքային, այսօրուայ բառերով ասած՝ վարչութեան ազդեցիկ անդամներից մէկն էր:

Ի Հարկէ, նախ ուշադրութիւն է գրաւում պատանու «Լեւոյս» անունը, որը չի յիշեցնում մեզ ծանօթ հայկական անուններից որեւէ մէկը: Բայց զա ոչ մի հայկան նշանակութիւն չունի տուեալ պարագայում, որովհետեւ Հայոց պատմութեան ընթացքում առհասարակ օտար անունները աւելի շատ ենք հանդիպում, քան թէ բուն առճմիկ հայկական անունները: Իսկ յունաստա զրականութեան մէջ, իբրեւ կանոն, նոյնիսկ Հենց բուն հայկական ցայտուն անունները այլափոխուած են՝ յարմարցուելով յունարէնի ու յունական կոկորդի տօրեայ պահանջներին: Օրինակ, քաղածանօթ «Արլակը» յունարէնում դառնում է «Արասկէս», Պարոյր Հայկազնի հօր «Պանկրատիոս» անունը լիովին համապատասխանում է նոյնպէս քաղածանօթ «Բարատին», եւայլն: (Այնպէս որ՝ «Պարոյր Հայկազն» կիսովին արհեստական անունան փոխարէն իրականում աւելի ճիշդ կը լինէր «Պարոյր Բարատիան» հաւատարմ անուանմամբ: Մի կողմ դրած, որ Հենց «Պարոյրն» ինքը դարձել է «Պրոյրերիոս»): Ինչդէր այդ կողմէ, ակնյայտօրէն, տակաւին սպասում է իր բազմակողմանի հետազօտութեանը՝ մասնագիտական մակարդակով: Կարելի է ենթադրել, որ Լեւոյսի հայրը որոշ ունեցումներ ժառանգութիւն է թողել կնոջն ու որդուն, այլապէս՝ ուար էր մտածել հետաւոր քաղաքում հասառ կրթութիւն ստանալու մասին: Բայց, ըստ երեւոյթին, ո՛չ այնքան շատ, որովհետեւ մայր ու որդի, վերջին հաշուով, ինչպէս տեսնուած է, ոտքով են հասնում հետաւոր քաղաք: Նշանակում է՝ ակնյայտ է նաեւ իսկական զոհողութիւնների բաժինը: Ուշ հնազարում ճարտասանութիւն սովորելը առհասարակ նըշանակալի ծախսերի հետ էր կապուած: Մտոյնները կամ խնամակալները պէտք է հոգային ուսանողի ուղեւորութեան, աւորեայ պարուտի, քաղաքային լրացուցիչ ժամանցների, կրթութեան համար վճարուող ծախսերը (երբեմն էլ՝ ուղեկ-

ցող արուկների (ծառաների) ապրուստը): Այդ զոհողութիւններն արուում էին սովորաբար այն յոյսով, թէ կրթուած զաւակը կամ ազգականը հետագայում ընկերային կամ այլ կարգի աչքի ընկնող դիրքերի կը հասնի, ի վերջոյ արդարացրելով արուած ծախսերը:

Ի Հարկէ, յայտնի են նաեւ շատ ուսա ղէպքեր, երբ չունեւոր ընտանիքներ զաւակներն են կրթութիւն ձեռք բերել՝ իրենց արտակարգ յամտո ջանքերի շնով, կամ էլ՝ որեւէ մեկնաստութեան հարուին: Օրինակ, առենք, Սահակ Պարթևի եւ Մեթոյ Մաշտոցի ընտրած ուշիմ պատանիները հետաւոր վայրերում շունական կրթութիւն ստացան, որքան յայտնի է, եկեղեցական ու պետական վերին հովանաւորութեան շնորհիւ, այլ ոչ թէ անպայման իրենց ծնողներէ ճշտակի ուժով:

Չորրորդ դարում ընդունուած էր նաեւ, իբրեւ կանոն, որ ծնողները իրենց որդուն անձամբ ուղեկցեն ու ներկայացնեն ճարտասանական (կամ այլ տեսակի) դպրոցի ուսուցչին (թէեւ այդ կանոնին հետաւոր չէր հետեւել բոլոր ղէպքերում): Թեթեւ զննութիւնից յետոյ ապագայ ուսանողները գրանցուած էին դպրոցի մատենում: Հայաստանից Անտիոք հասած երիտասարդ հայուհին եւս հետեւել է այդ կանոնին, միաժամանակ մտածել հայրենի քաղաքի իրենց ունեցումները այն մարդկանցից ապահովելու մասին, որոնք այս կամ այն պատճառով աչք ունէին այդ ունեցումներ վրայ, ընդամին ապակիներով ազդեցիկ անձանց բարեացակամ հովանաւորութեանը:

Եթէ Լեւոյսը անմիջապէս դիմել է Լիբանիոսին՝ նրա դպրոցում ընդունուելու համար, ապա դա նշանակում է, որ նա տրդէն իսկ ունէր նախնական որեւէ չափի կրթութիւն: Ահա թէ ինչու: Ուշ հնազարում կրթական համակարգը երեք աստիճան ունէր, ինչ որ մօտաւարապէս համապատասխանում է մերօրեայ տարրական, միջնակարգ եւ բարձրագոյն կրթական համակարգերին: Երեխաները տարրական կրթութեան ուսուցիչներից սովորում էին կարգաւարել եւ հաշ-

անլ) Գերականներին (գրամատիկոսներին) վստահուած միջին աստիճանում լեզուական գիտելիքներ էին հրամցում, դասական, մա՛նաւանդ բանաստեղծական երկերի տրամադրած նիւթերի հիման վերայ: Իսկ բարձրագոյն կրթութեան համար իրաւասու էին սոփեստները, որոնց դպրոցներում, դասական ճարտասանութեան վարպետների օրինակով, հետաքրքիր արուեստ էր ուսուցւում: Մինչդեռ իրաւարանութիւն, բժշկութիւն, փիլիսոփայութիւն, մաթիմատիկա, աստղաբաշխութիւն եւ այլն կարելի էր սովորել ասանձին յատուկ դպրոցներում:

Արդ, Լիբանոսի դպրոցում ներկայացուած էին կրթական այդ համակարգի միայն երկրորդ եւ երրորդ աստիճանները, առանց առաջինի: Լիբանոսն էր բնութեան կրթութիւնը իմբով բուն ճարտասանական պարագմունքներ էր վարում երիտասարդներէ համար: Յաւելեալ դասընթացներ կային նաեւ չափահաս մարդկանց, այսինքն՝ նրանց համար, ովքեր կամեցում էին խորացնել իրենց ունեցած ճարտասանական գիտելիքները կամ է՛լ աւելի բարձր դիրքի հասնելու էին ձեռնարկում: Միջին կարգի բանաստեղծ երիտասարդներով զբաղւում էին քերականները, որոնց աշխատանքը իսկապէս բարձր էր գնահատուած Լիբանոսը, յիշելով իր իսկ պատանեկան տարիները եւ իր սիրելի ուսուցչին, որին այնքա՛ն շատ բան էր պարտական՝ դասական գրականութեան հետ սերտօրէն հաղորդակցուելու համար: Այսպիսով, Լիբանոսի դպրոց ասելով՝ մի բազմամարդ հաստատութիւն սէտք է հասկնալ — Հոռոմէական կայսրութեան մէջ՝ իր բնակչութեան թուով երրորդ քաղաք հանդիսացող Անտիոքում — ինչպիսիք որ էին նաեւ Աթէնքի եւ միւս բոլոր աշէի ընկնող դպրոցները, թէեւ ներքին բուն մրցակցութիւն գոյութիւն ունէր երեւի ամէնուրեք:

Վերադառնալով Լեռնոսի թանձրացեալ պարագային, թոււմ է, սխալ չի լինի ենթադրել, որ նա տարրական կըր-

թութիւն է ստացել հինց հոյաստանեան հայրենի քաղաքում, թէկուզ եւ նամակում յիշատակուող Եւսեբիոսի մօտ: Բարձրագոյն կրթութիւն ունեցող մարդը էլ ինչո՞վ կարող էր գրադուել այդ քաղաքում, եթէ ոչ այս կամ այն շարժով ուսում տարածելով կամ հովանաւորելով, իր ուժերը լիովին կենտրոնացնելով այդ ասպարէզում, կամ էլ, որոշ գէպերում, ուրիշ գրադմունքների հետ զուգահեռաբար իր տեսակի ուսուցչութիւն անելով: Անկարելի չէ նաեւ, որ նկատելով պատանի Լեռնոսի ակնյայտ ուշիմութիւնն ու արտակարգ ընդունակութիւնը, նրա մօրը խորհուրդ տուած լինի կանգ չառնել հետաւոր զուսուցչութիւնների առջեւ եւ որդուն անպայման Անտիոքի նման կրթական կենտրոն տանել, միաժամանակ յոյս դնելով նաեւ իր երբեմնի դասընկեր Լիբանոսի բարեկամական համակողմանի օժանդակութեան վրայ: Մրանք, ի հարկէ, մերօրեայ յետադարձ զուտ ենթադրութիւններ են, որոնք, սակայն, չեն հսկատուած դրաւոր վկայութիւններին ու նրանց ոգուն, այլ, ընդհակառակն, իրենց հերթին նոր լոյս են սփռում պատմական իրականութիւնը վերականգնելու ջանքերի ճանապարհին: Եւ յիշուի, մի՞թէ բոլոր վաւերական ճշմարտութիւնները ձեռք չեն բերուել զանազան կուսակա՞նների, ենթադրութիւնների, տարակուսանքների, համեմատութիւնների եւ այլնի ու այլնի ճանապարհով: Թող նման ենթադրութիւնները կէտքի դրուեն նաեւ մեզ հետաքրքրող այս համեստ պարագայում: Բայց այսպիսի պատկերացումները, պարզ է, կարող են հաշուի առնուել ու արդիւնք տալ միայն ա՛յն դէպքում, երբ ի վերջոյ մասնապէս յունարէնագէտները անմիջապէս շփուեն պատմութեան թողած դրաւոր փաստաթղթերին, հաւաքին Հայաստանին ու Հայութեանը մօտիկէց ու հետուից վերաբերող վկայութիւնները եւ դրանք ըննութեան առնեն ու արժեւորեն՝ համախարհային պատմութեան լոյսին ներքոյ:

ԼԵՒՈՆ ՄԿՐՏՁԵԱՆ

23. 1. 1983 թ.
Միւմիւէմ

ԳԱՍՊԱՐ ԻՓԷԿԵԱՆ

(1883 — 1952)



Անապի բերու մեր թղթամբարէն հանուած Հանգուցեալ Մկրտիչ Պարսմանի այս էջը, խմբագրութեանս հոգիէ կատարուած կենսագրական դիմերուն ամփոփումը եւ նրկու տարրեր հարցերու անդադարձող խորհրդանութիւնները մէկահիշցիկնք, թարմացնելու համար յիշատակը ծանօթ մտաւորական եւ հանրային ու մշակութային վաստակաւոր գործիչ Գասպար Իփէկեանի:

Յիշցնենք, որ այս տարի Գասպար Իփէկեանի ծննդեան 100ամեակն էր եւ մեր մամուլն ու մշակութային բլթիկերը վճարելիք պարտքեր ունին այդ առիթով:

Գասպար Իփէկեան ծնած է Յունուար 1883ին, Պոլիս: Եղած է շարժող եւ վերջին դասակը քնիկ պրուսացի ընտանիքի մը, որ առեւտրական գործերու բերումով փոխադրուած էր Վոսփոքի ափերը: Հայրը՝ Նուբիլան Իփէկեան, եղած է Երեսօրհանի յայտնի վաճառական, իսկ մայրը՝ Սոֆիա՝ գուտարը արուեստի միջոցով անուան դերասանուհի մը:

1895ին, ծնողները կը փոխադրուին Մասսոն, ուր Իփէկեան կը ստանայ իր նախադիմութիւնը: Նոյն տարին, Մասսոնի ազգային վարժարանէն լրջանաւարտ՝ ան կ'անցնի Պոլիս, Թուրքիոյ գաղթէն մէջ շարունակելու համար իր երկրորդական ուսումը: Հաջիւ տարին բոլորած՝ Օգոստոս 14ին տեղի կ'ունենայ Պանք Օթոմանի դիպլոմը: Նախըզուրութեան համար Իփէկեան ընտանիքը կը փոխադրուի Ալեքսանդրիա, ուր արդէն հաստատուած էր ընտանիքին անդրանիկ որդին՝ Գէորգ Իփէկեան: Ալեքսանդրիոյ մէջ, Գ. Իփէկեան կը ծանօթանայ իր մտակէն եւ Պանքայի ղէպերն մասնակցած Հրաչին ու Միհրանին: Այս կապերը վճար-

կան դեր կ'ունենան Գասպար Իփէկեանի հոգեկան կազմաւորման մէջ:

1897ին կը վերադառնայ Պոլիս, շարունակելու համար իր ընդհատուած ուսումը: Այդ օրերուն մուսջ կը գործէ Հ. Յ. Գաշնակցութեան շարքերէն ներս եւ կը կատարէ իր անդրանիկ գրնութիւնը, փոխադրելով զազանի գործեր, թուցիկներ եւ նոյնաթոյթ թուղթեր: 1899ին, կը հեռանայ Թուրքիոյ գաղթէն, հաստատական գործերու համար: Ենթոհի յամա ընթացածութեան՝ կը ծանօթանայ անգլիական եւ հայ գրականութեան:

Նոյն տարին, հօրը կարգադրութեամբ կը մեկնի Ալեքսանդրիա, ուր կը մնայ հինգ տարի, աշխատելով եղբորը հետ, Երեսօրհանի վաճառականութեամբ զրաջող հաստատութեան մէջ: Հակառակ եղբորը պնդումներուն, կը վերադառնայ Մասսոն հօրենական առևը: Բանի մը ամիս ետք, հայրը զինք կը լրկէ Գերմանիա, Երեսօրհանի առևտրով զբաղելու համար: Այդ լրջանին, ա-

ուսարական գործերու կողքին՝ մեծ նշանակող կը հետևել շրջանի թատերական և երաժշտական շարժումներուն: Գուստի մասերէ վահներին, Կրիկի, Իփսիի գործերը: Գերման ժողովուրդին ծառայողներու համար հայ ֆուլգուրը, կը կազմակերպէ հայկական պարերու և սոնետիկ երաժշտութեան ներկայ մը, որ կը պահուի մեծ յաջողութեամբ, արժանանալով ասարներու գնահատանքին:

1907ին, Պոլսի վերադարձի ճամբուն վրայ, կ'այցելէ ժընեւ, ուր Վերջակցի խմբագրատան մէջ առաջին անգամ ըլլալով կը հանդիպի Սիւսան Սթիւարթի և զանազան կողմէ պաշտօնաւորու: Պոլսէն կ'անցնի Ստամբուլ, կարճ ժամանակ մը ետք՝ Թիֆլիս, իր հեղքով՝ դերասան Արմէն Արմէնեանի մաս: Հոն կը մնայ ամբողջ տարի մը և մանրակ կապեր կը հաստատէ Սիմոն Զուարեանի, Աւետիս Աւարեանի, Լեւոն Եանթի, Նիկոլ Աղբալեանի, Համո Յանջեանի, զերասանուհիներ՝ Պարսիսի և Սիրանոյշի հետ ու կը գումայ Յովհաննէս Թումանեանի Վերջնական նշին մասունցայնուներէն մէկը: Կը գրադի սուսանցութեամբ և կ'աշխատակցի Վլադիմիր Կանկան թերթին՝ ստորագրելով բանաստեղծութիւններ և արեւմտի գրողներէ:

1908ին, Օսմանեան Մահապարտութեան յաջորդած խեղճալու օրերուն, իրեն կուսակցական գործիչ կը շրջի Երզնաս, Տրապիզոն, Պոլս և շրջակայքը: Ետեւ տարին կ'անցնի Փարիզ ու Մոսկովն մէջ կը հետևի զաղաքական անտեսագիտութեան և իրաւաբանութեան: Կ'աւարտէ 1912ին, իրեն աստուտանքն իր ներկայացնելով Վլադիկան անտեսութեամբ և անտեսալուծման օրէնքները պատմութեան ընթացքին անուն աստուտագրութեանը: Ետեւ տարին կը վերադառնայ Արեւմտահայաստանի և շրջան մը կը ծառայէ Ծառնոթ փաստարանի մը գրասենեակին մէջ:

1913ին, կ'այցելէ Գոլիաս, ապա կը վերադառնայ Ստամբուլ և կ'անցնի Պոլս, ուր կը գործակցի Վաղարշապատի շուրջ քաղաքացիական պատերազմին ընթացքին:

1914ին, երբ Առաջին Աշխարհամարտը կը պայթէր, Գասպար Իփէկեան կը գնուէր Սամսոն: Հրաշքով կը յաջողի անցնի Եսֆ Գաթուս, ապա՝ Թիֆլիս և կը միանայ զօրավար Անդրանիկի համապարտական գրասենեակին:

1916ին, Գասպար Իփէկեան կ'անցնի Թեհրան ու երեք տարի կը զբաղէ ուսուցչութեամբ: Այդ ժամանակամիջոցին, կը կազմակերպէ անգլո-թատերախումբը ուսմանը, բնի կը հանդիսանայ անգլո-թատերախումբի և մամուլին կ'աշխատակցի շահեկան յօդուածներով: Պարսկաստանի մէջ, անոր հասարակական գործունէութիւնը չի սահմանափակուիր միայն հայկական ծրարներու, այլ կը ծառայի նաև անգլո-թատերախումբի ասպարէզներուն մէջ: 1917ին, կը ծանօթանայ Ալա Սէիմ Զիւն Խոսեանի թոշակ անուն պարսիկ առաջնակարգ լրագրողին և անոր հրահրելով կ'աշխատակցի իր հրատարակած Վերջնական Վերջնական թերթին: Հետագային

գային, Իփէկեան կը Նշանակուի յիշեալ թերթի վարիչ ու պատասխանատու խմբագրի՝ արտաքին զաղաքակրթութեան վերաբերող հարցերուն մէջ: 1919ին, կը Նշանակուի ընդհանուր գնեիլ՝ Գորակաստանի կրթական նորարարութեան մաս: Կը կազմակերպէ կրթական ասպարէզը, կը վերանորոգէ ուսուցչական անձնակազմը և պաշտօնի կը հրահրէ շարժապաշտի ուսման վկայական անցուցիչը: Պարսկաստանի մատուցած կրթական իր ծառայութեան առ ի գնահատութեան՝ կ'արժանանայ առաջին կարգի պատուանշանի: 1921ին, պարսիկ պետութիւնը իրեն կը յանձնէ Թեհրանի զաղաքագիտութիւնը վերակազմելու գործը: Գուսպար Իփէկեանի արդի է, որ մարտաքաղաք կ'օժտուի և կ'անցնի Թեհրան: Գուսպար Իփէկեանի մասունցայնուներէն կ'անցնի Պարսիս, ապա՝ Հնդկաստան, ուր կը մնայ երկու ամիս և կը ծանօթանայ Կանտի և պետական այլ գէմբերու: Հնդկաստանէն կ'անցնի Արեւմտահայաստան, ուր մեծ հղալքը կրկին կը հրատարակէ իր գործին մէջ պաշտօն մը վարելու:

1921-ի Մայիսին, պետական հարուածի մը հետևանքով, Գասպար Իփէկեան Թեհրանէն կ'անցնի Պարսիս, ապա՝ Հնդկաստան, ուր կը մնայ երկու ամիս և կը ծանօթանայ Կանտի և պետական այլ գէմբերու: Հնդկաստանէն կ'անցնի Արեւմտահայաստան, ուր մեծ հղալքը կրկին կը հրատարակէ իր գործին մէջ պաշտօն մը վարելու:

1921-1930 տարիներուն, Իփէկեան կը մնայ Երզնաս, ուր կը գրադի թէ՛ անտեսական և թէ՛ հանրային գործերով: Իփէկեան, Արեւմտահայաստանի մէջ, կը բնակուի Լեւոն Եանթիի Վլադիկան անտեսութեանը:

28 Մայիս 1928ին, Գահերէի մէջ, Համո Յանջեանի, Նիկոլ Աղբալեանի, Լեւոն Եանթիի և Ստեփան Եսայանի հետ կը հիմնէ Համազգային Մշակութային և Հրատարակչական Ընկերութիւնը: Ետեւ տարին, Իփէկեաններու ժամանակ յարկին սակձ, ծնունդ կ'անէ Հայ Զեմասանը Հիմնուող զաղաքացի, որ երկու տարի ետք իրականութիւն կը դառնայ:

1930ին, կը հաստատուի Պէյրուս, ուր, անձնական զբաղումներու կողքին, կը նուիրուի ազգային և մշակութային գործերու և կարեւոր մասնակցութիւն կը ընէ Համազգայինը բոլոր ձեռնարկներուն: 1931ին, Պէյրուսի մէջ առաջին անգամ ըլլալով կը ներկայացնէ Լեւոն Եանթիի Վերջնական Վերջնական թերթին: 1934ին, Ետեւ անտեսութեանը, կը բնակուի իր հեղինակութիւնը՝ Վերջնական Եանթիանց:

Այս շրջանին, Եր. Բապտիստ Կ'օմանդակէ Զեմասանի յարաբերութիւն և կ'ապահովէ որոշ վարկեր, հայալուստ զանազան կեդրոններէ:

1931ին, Լիբանանի մատուցած իր ծառայութեան համար, Եսայան Էմիլ Կոստէ կ'օգտէ կը պարգևատրուի Mérite Libanais avec Palme շքանշանով:

Իր գրական գործերուն առեւթեր՝ Գասպար Իփէկեան կատարած է թարգմանութիւններ ու վարած խմբագրական և հրատարակչական կարեւոր գործեր:

Ճիշդեալէն զաշխատանք՝ Գասպար Իփէկեան կը մահանայ 27 Մարտ 1952ին, Պէյրուս:

Մ. Պ Ա Ր Ս Ա Մ Ե Ա Ն

Գ Ա Ս Պ Ա Ր Ի Փ Է Կ Ե Ա Ն Ի

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ե Ա Ն Ն Կ Ա Ր Ա Գ Ի Ր Ը

Գասպար Իփէկեանը ճանչցայ առաջին անգամ Կարնոյ մէջ, Օսմանեան Սահմանադրութեան յայտարարութեան յաջորդող տարին, երբ Բարձր Հայքի կեդրոնը եռուղեով եւ խանդավառութեան օրեր կ'ապրէր: Առաջին անգամն էր, որ բազմամարդ հաւաքոյթի մը առջեւ խօսելու կը հրաւիրուէր այդ քաղաքին մէջ: Հրատարակային հանդիսութեան կը նախապահէր փրօֆ. Աստուածատուր Խաչատուրեան, Սանասարեան վարժարանի հայերէնի եւ դրակահանութեան ուսուցիչը: Գասպար Իփէկեանի նիւթն էր հայ ժողովրդական բանաստեղծութիւնը ընդհանրապէս եւ Յովհաննէս Թումանեանի «Անայշ»ը մասնաւորապէս: Հազիւ երեսուն տարեկան կար, իանդամառ, կրակոտ ու պերճախօս: Ա՛դ թուականին արդէն գինուորացրուած էր հայ գրականութեան եւ դաղափարական գործունէութեան: Իր մէջ կը յայտնուէին նաեւ ապագայ դէրասանը եւ թատերագիրը:

Այն ատեն, ինչպէս տարիներ վերջը, երբ Համազգային ձեւարանին բերաւ իր բոլորանուէր գործակցութիւնը, եւ ես առիթը ունեցայ յամախակի թղթակցելու հետը, ինծի համար յստակ չէր իր գրականութեան նկարագրիչը:

Գասպար Իփէկեանի «Ճշմարտութիւն եւ վեպ»ը կարդայեր էի 1950ին, «Ակօս» երկամսեային մէջ: Խորհեցայ անգամ մըն ալ թերթատել այդ ընդարձակ վէպ-յուշադրութիւնը: Վստահ էի, որ այս վէպը ինքնակենսագրութիւն մըն էր միեւնոյն ատեն, ինչպէս եւ կը խտացնէր նկարագրի մը գիծերը, որոնք պատանեկան տարիներէն կը գրոշմուէին մեր մէջ եւ կը շարունակուէին, շատ քիչ բացառութեամբ, մեր բովանդակ կեանքին մէջ:

Սխալած չէի: Գասպար Իփէկեանի կեանքին, գրականութեան եւ տրամադրութիւններուն բանալին դտայ, ամփոփուած հետեւեալ պարբերութեան մէջ.

— «Կը սկսէր հիմնգերբոյ տարին (ակնարկութիւնը 1904 տարուան) եղբորս ֆապրիքին մէջ անցնեցած դառն ու տաժանագին տարիներու: Պատանեկան ամէնէն յաւ շրջանը կեանքիս, քունուարուեր էր այն անիմաստ գոհադուքիւնով (հիմա միայն կ'անդրադառնամ), որ ինքս ինձ պարտադրեր էի, մըդուած իօրս իանդէպ տածած սերէս ու մուխումէս: Այդ էր պարտադրեր ինծի խառնուածքս, ուր տիրապետող տարրը եղեր էր՝ մանուկ օրերէս՝ գզացումը, ոչ թէ սառն ու եսասէր դատողութիւնը: Որո՞ւնն էր մեղքը, ի՞նչ, թէ հայրիկիս՝ իմ շրջապատիս մէջ ամենարանիմացը...: Պէ՛տէ էր, որ ան մղէր զիս դէպի այդ ուրացումը իմ բոլոր նախասիրութիւններուս, որոնք իրն ալ եղած

էին անցնային մէջ եւ ժառանգաբար փոխանցուած ինծի, իր քեմիամինին» :

Առաջին օրէն, ուրեմն, երկրնարանքի մը առջեւ կը դռնուէր Գ. Իփէկեան, առեւտրական տուարէզը մէկ կողմէ, գրական, մտաւորական, դաղափարականը՝ միւս կողմէ: Այս վերջինն էր, որ կը յաղթանակէր: Բայց նրկարագրի այդ գիծերը հետզհետէ կը շեշտուին իր մէջ, ճակատագրական համակերպութեան մղելով զինքը, որպէսզի սիրէր կեանքի ճախորդ օրերն ալ, լուսաւոր անկիւններ ստեղծելով իր յոռետես եւ ընկճուած, դժուօ արտամագրութեան եւ Հոգեբանութեան մէջ: Ասիկա ալ իր խոստովանութիւնն էր, երկրորդ բանալին՝ իր կեանքի եւ գրական խոստովանութեան:

Ուրեմն գրական վաստակը իր սնունդը եւ ներշնչումը պիտի առնէր զգացական տարրերէն, որոնք պիտի գրոյմուէին յոռետես, ընկճուած ու դըժուօ արամադրութեամբ ու Հոգեբանութեամբ:

Բայց աշխատանքը, որուն կը լծուէր ան, լաւատեսութեան կը մղէր զինքը: Ի՞նչ գեղեցիկ ու մարդկային նշանաբան Միքէլ Անճելլոյի հետեւեալ խօսքը.— «Աշխատանքի մէջ պիտի ունենաս կեանքի լոյսը»: Դասուար Իփէկեան յամառ ու անգագրում աշխատող մը եւ արտագրող մը կը դառնար: Որովհետեւ դիտակցութիւնն ունէր, թէ աշխատանքն է, որ իմաստ ու տրօհէք կու տայ կեանքին: Ամէնէն համեստ աշխատանքներէն սկսեալ մինչեւ պատասխանատու բոլոր գործերը սիրով կը տանէր:

Շնորհիւ այդ նշանաբանին էր, որ Գ. Իփէկեան իր տուրքը կու տար մեր գրականութեան, իրրեւ թարգմանել, իրրեւ վիպագիր, իրրեւ թատերագիր եւ իրրեւ գրական քննադատ:

Իրրեւ թարգմանիչ՝ մեզի տուաւ Հեղին մեծ իմաստասէր բանաստեղծին՝ Բապիտարանաթ Թակորի «Պարտիզայան»ին թարգմանութիւնը: Իրրեւ վիպագիր՝ «Ճշմարտութիւնը եւ վէպը» ընդարձակ արձակը, որ լոյս տեսաւ «Ակոս» երկամասային մէջ: Այս վէպը իր խորագրովն իսկ շատ յատակ դաղափար մը կը կու տար Հեղինակին գրական եւ գեղարուեստական ըմբռումներուն մասին: Վէպը պէտք է ճշմարտութեան եւ իրականութեան հարազատ պատկերացումը տայ եւ, փոխադարձաբար, ճշմարտութիւն եւ իրականութիւն պէտք է ներկայացուին վիպական դարձուած քննրով ու արուեստով, հասնելու համար գեղարուեստական շնորհի: Այս էր պատճառը, որ Գ. Իփէկեան լուսանկարչական իրականութեանէն անկախաբար, գեղարուեստական որոնումներու հետամուտ էր եւ այս գործը, միւսինս ատեն ինքնակենսագրութիւն եւ յուշագրութիւն, համով-հոտով պատմուած ու գրի առնուած էր: Իր պատմելու ձեւը եւ ոճը, լեզուական շնորհն ու գեղեցկութիւնը կը փայլին հոն՝ կարելի բծախնդրութեամբ: Ժողովուրդին, ինչպէս մտաւորականին հաւասարակէս գոհացում կու տար: Հետեւեցէք ամբողջ գրուածքին եւ դուք հաւասար զգացումով ու համակրութեամբ նկարուած պիտի գտնէք հայուհին, հեյլէնուհին ու թրքուհին, որոնց ստուերները կը սահին ամէն մէկ էջին վրայ, միշտ վառ պահելով ձեր հետաքրքրութիւնը: Գ. Իփէկեան կատարեալ Հոգեբան մըն էր, երբ կը վերլուծէր կնոջական Հոգիները: Հոգեբանի այդ ճարտարութիւնը իր լրումին կը հասնէ, երբ «Արս եւ Շամիրամ» թատերախաղին մէջ կը ներկայացնէր մեզի Շամիրամը, իր կնոջական բարդ ու զգացական բոլոր խորհուրդներով:

Գրական քննադատական կարեւոր գործեր ալ տուաւ մեզի, դարձեալ «Ակոս»ներուն մէջ: Թատերական, գրական քննադատական ուսումնասիրութիւն մըն էր Լեւոն Շանթի «Հին ասուածներ»ուն մասին գրի առած սպառիչ ուսումնասիրութիւնը: Նիկոլ Աղբալեանի անձին ու գործին նուիրուած մեծագրութիւնը, արուեստը եւ խորհրդային բանասիրութիւնը եւ խորհրդային

բանաստեղծութիւնը, ինչպէս նաեւ գրախօսականներ այս շարքին կը պատկանին: Ամէնէն տակի ուշադրութիւնս գրաւած են իր սէրն ու պաշտամունքը, որոնցմով կը շրջապատէր ուսումնասիրութիւնք ենթակային անձը: Այսպիսի գրութիւն մըն էր Ն. Աղբալեանին նուիրուած ընդարձակ ուսումնասիրութիւնը: Կը գրաք, որ մեկնող մեծերուն հանդէպ սէր եւ գուրգուրանք ունէր: Կը մտնէր մանրամասնութիւններու մէջ, սրունք պիտի վրիպէին սովորական կենսագրողի մը ուշադրութենէն: Այս կալուածին մէջ ալ փնտաւոր մշակութաբանութիւնն էր, առանց ենթակային անձը փրկականացնելու կեղծ արուեստէն տարուելու: Միշտ զդայուն, միշտ բարութեամբ լեցուն են իր խորհրդածուութիւնները, եւ երբ Ն. Աղբալեանին նուիրուած գրութեան վերջակէտը պիտի գնէր, կը գիմէր հնդիկ մեծ իմաստասէր, բանաստեղծ Քակոբին.

«Համդարտ, սի'րտ իմ, քոզ այս սյանը բաժանմամ
 Լիցի քաղցր,
 ...Քոզ թոնչմ այս վերբամայ,
 Բոյնիմ վերբու գերթ ամիսփում քեւերի...»:

Գ. Իփէկեանի գրական վաստակը կ'ամբողջանայ քանի մը թատերական գործերով: Միշտ «Ալիու» երկամսեային մէջ լոյս տեսած են, տաղաշափուած ու յանդաւոր «Փառամանիմ իշխաֆուհիմ», «Փառամանիմ դիւցազմուհիմ», առաջինը չորս, իսկ երկրորդը՝ երեք արարով: Եւ «Արա եւ Եամիրամը» երեք արարով, այս վերջինը՝ գրքով:

Ինքն իր անձնական վաստակը կ'ամբողջանայ քանի մը թատերական գործերով: Միշտ «Ալիու» երկամսեային մէջ լոյս տեսած են, տաղաշափուած ու յանդաւոր «Փառամանիմ իշխաֆուհիմ», «Փառամանիմ դիւցազմուհիմ», առաջինը չորս, իսկ երկրորդը՝ երեք արարով: Եւ «Արա եւ Եամիրամը» երեք արարով, այս վերջինը՝ գրքով:

Ինքն իր անձնական վաստակը կ'ամբողջանայ քանի մը թատերական գործերով: Միշտ «Ալիու» երկամսեային մէջ լոյս տեսած են, տաղաշափուած ու յանդաւոր «Փառամանիմ իշխաֆուհիմ», «Փառամանիմ դիւցազմուհիմ», առաջինը չորս, իսկ երկրորդը՝ երեք արարով: Եւ «Արա եւ Եամիրամը» երեք արարով, այս վերջինը՝ գրքով:

Ինքն իր անձնական վաստակը կ'ամբողջանայ քանի մը թատերական գործերով: Միշտ «Ալիու» երկամսեային մէջ լոյս տեսած են, տաղաշափուած ու յանդաւոր «Փառամանիմ իշխաֆուհիմ», «Փառամանիմ դիւցազմուհիմ», առաջինը չորս, իսկ երկրորդը՝ երեք արարով: Եւ «Արա եւ Եամիրամը» երեք արարով, այս վերջինը՝ գրքով:

Սրա Գեղեցիկ եւ Եամիրամի աւանդութիւնը, որ մեր քերթողահայր Մոյսէս Խորենացին տուած է, բոլորիդ ծանօթ է: Այս առասպելին կապուած ընդարձակ գրականութիւն մը ունինք: Գր. Ղափանցեան «Արա Գեղեցիկի պաշտամունքը» անուն աշխատութիւն մը ունի, որ լոյս տեսած է Երեւանի մէջ, 1945ին: Ն. Աղբալեան «Հիմն Հայոց աշխարհապետութեան վերնագրով ուսումնասիրութիւն մը ունի իր «Պատմական աւսումնասիրութիւններ»-ու շարքին մէջ: Ա. Մատիկեան «Արա Գեղեցիկ»ը խորագրով բաւական ընդարձակ գործ մը ունի, տպուած Վիեննայի մէջ, 1930ին: Ն. Չարեան, «Արա Գեղեցիկ» վերնագրով ողբերգութիւն մը ունի, հինգ արարով, որ լոյս տեսած է Երեւանի մէջ, 1946ին: Վերջինը՝ Գ. Իփէկեանինն է, «Արա եւ Եամիրամ» տիւղոսով, գրուած է Քիֆլիս, 1916ին եւ վերհրատարակուած Պէրուսի 1948ին: Թեքեա կան տակաւին մեղի անծանօթ ուրիշ աշխատութիւններ նոյն աւանդութեան նուիրուած: Քննադատական վերլուծման եւ բանասիրական աշխատութիւններու ընդարձակ հորիզոններ բացած է այս նիւթը մեր գրականութեան մէջ:

Ներկայ ընկալատութիւնը եւ բանաստեղծութիւնը պատմական անձնա-

ւորութիւն մը շին քնդունիր «Արա Գեղեցիկ»ը, բոլոր առասպելը կայ եւ գեղարուեստական գրականութեան նիւթ հայթայթած է :

Ասորեստանի Շամիրամ թագուհին, Հգոր բռնակալ ու տիրակալ աշխարհներու, հեշտանքի եւ վայելքներու գերի, երբ կ'իմանայ Հայոց Նահապետ Արայի գեղեցկութեան համբաւը, քանի մը անգամ դեպքաններ կը զրկէ, զինքը կը հրաւիրէ Նինուէ, իր մայրաքաղաքը, խոստանալով ամէն փառք եւ իշխանութիւն :

«Ես ազգում եմ, ե՛ս ցանկանում եմ նրան,
Ո՛հ ես, կը տամ Նեղոս, Գաւգէս, Ասիրամ,
Ողջ աշխարհը, միայն տուէք ինձ նրան» :

Իւ սակայն Արա կը մերժէ օտար այդ կնոջ սէրը, կ'արհամարհէ զայն, որովհետեւ հպարտ է Հայկի եւ Արամի ողին կրելուն համար :

Երբ Շամիրամ կը մերժուի, կնոջական հողատութիւնը եւ արհամարհւած ըլլալու դիտակցութիւնը, ատելութեան կրակը կը վառին իր մէջ : Շամիրամի բանակները դէպի Հայաստան կ'արշաւեն : Կոռուի միջոցին, սակայն, Արա կը սպաննուի եւ յարաւէյ աստուածները ի զուր կը փորձեն կենդանացնել անոր անշունչ եւ անկենդան մարմինը :

Ահաւաստիկ այս առասպելն է, զոր մշակած եւ երեք արարով թատերգութեան փերածած է Գ. Իփէկիան, տաղաշարուած ու յանդաւոր :

Մէկէ աւելի նկարագրիներ կը յայտնուին այս թատերախաղին մէջ : Աւարմակ, Գողթան զուտուի տէրն է, հեռատես, զգոյշ եւ խոհեմ արիւղար մը : Կողմնակից է, որ Արա քնդունի Ասորեստանի Շամիրամ թագուհին առաջարկած գահը, դառնալով անոր թաղաւոր ամուսինը : Կը տրամաբանէ .

«Որքան էլ արի,
Գեղեցիկիմ հանդէպ սիրում է միշտ գերի» :

Երկրորդ գերակատարը Արգամն է, Արայի բանակին հրամանատարը, հին փառքերը, բանակի յողթանակները ողկոչող զօրական մը, Հայրենասէր մը նաեւ, որ նախանձախնդիր է հայրենիքի ազատութեան եւ ընտանեկան պատուին :

Արան ընտանեկան սրբութեան եւ հաւատարմութեան ներկայացուցիչն է եւ կը խորհրդածէ .

«Ի՞նչ, իննի գերի մի կնոջ կամքին,
Նայմիսի թէ լինի չճնաչ թագաւի՛,
Ողջ արեգեբքն իսկ իր օծիւ բերի» :

Արա կը սիրէ իր կնոջ՝ Նուարդի հոգիին գեղեցկութիւնը : Հայոց թագուհին, Նուարդ եւ ջերմօրէն կը սիրէ Արան ու կը սիրէ նաեւ հայրենիքը, խորհրդածելու համար, թէ՛

«Ի՞նչ փոյք, մի այլ կիմ սեզմէ քեզ կրծքին,
Բաւ է չմարի քո արեւն անգիմ...» :

Արա կրնայ Շամիրամի ամուսինը դառնալ, հետոնալ երկրէն, կը բաւէ, որ ողջ մնայ եւ Նուարդ կը տրամաբանէ .

«Իսկ ես կը պահեմ քեզ հոգուս խորումս :

Որովհետեւ կը զգայ, որ կռիւ մը աւերակի պիտի վերածէ հայրենիքը, տուն ու տեղ :

Գ. Իփէկեանի թատերգութեան ողբերգութիւնը հոս է եւ մեզ ալ խորհրդածութեան կը մղէ :

Հողերանակա՞ն է, որ ոեւէ կին իր ամուսինը տեսնէ ուրիշի մը սեփականութիւնը, ուրիշ կին մը՝ նոյնիսկ թագուհի մը սիրէ : Արայի անձին, «Հայրենիքին» հանդէպ ունեցած անխաղախ սէրը կրնա՞յ արդարացնել նըւարդի թելադրութիւնը, նախանձի զգացումը իրա՞ւ գոյութիւն չունէր նուարդի հոգիին մէջ : Հարցեր են, զորս ձեզմէ ամէն մէկը տալու իրաւունք ունի, եւ փափաքելի է, որ թեր ու ղէմ կարծիքներու փոխանակութիւն մը տեղի ունենայ : Գ. Իփէկեան կարելի եւ քնական դասած է ատիկա :

Հեղինակը «Արա Կամ Իրամ» գործին մէջ մէկէ աւելի զուգակշիռներ ունի : Այսպէս, Արայի գաւազը՝ Կարգոս, եւ Շամիրամի ապօրինի դաւազը՝ Նինուաս : Շամիրամ եւ Նուարդ, Հայաստանի ազատ եւ Ասորեստանի ստրուկ պարտականները եւ, վերջապէս, երկու երկիրներուն բարձրու գուգակշիռը, այս բոլորը յատկօրէն կը յայտնուին թատերախաղին մէջ :

Երբ վանի վարազայ բարձունքէն կը դիտէ հրաշալի բնակարը, որ իր աչքերուն առջեւ կը պարզուէր. «Անհուն յափշտակութեամբ կը դիտելի, կը գրելի, այդ անսովոր գեղեցկութիւնը, որ կը խորհրդանշէ ինձ համար իմ հայ ժողովուրդիս գեղապաշտ հագին եւ այն սպցքը դէպի վեր, որ յատկանշած է գայի իր դարերու գոյութեան ընթացքին : Անա այդ պաշտպան յափշտակութեան եւ անմահութեան յուզումներուն մէջ յղացուցար այս երկը» : Եւ դարձեալ իր խոստովանութեամբ . «Ձամալով մնալ հուսատարիմ այն աւանդութեան, ուր այնքան շքեղօրէն յայտնաբերուած է Հայու քարապաշտու գեղապաշտ էութիւնը» :

Այս երկը, հետեւաբար, երեւան կը բերէ նաեւ հեղինակին գեղապաշտ ու զգալապաշտ հոգին, յատակ, խոհուն, խոտացած ու նկարչական ոճով, ապացոյցը տալով նաեւ, որ ան տպաւորապաշտ հոգի մըն է :

Գ. Իփէկեան արեւելահայ եւ արեւմտահայ բարբառները հաւասար ներգաշնակութեամբ ու ճկունութեամբ կը գործածէ, եւ այս յիշուած երկին մէջ բանաստեղծական-քնարերգական ոճի շքեղութիւններ կը յայտնուին տեղ-տեղ : Կարժէ կարգալ 24 եւ 26 էջերը, որոնց մէջ Շամիրամի նկարագիրը կը նկարուի, այնքան յաջող ու մարդկայնօրէն գծուած, հեթանոսական դարերուն, երբ տակաւին գոյութիւն չունէր քրիստոնէական բարոյականը :

Գ. Իփէկեան մեր զրականութեան մէջ մէկն էր անոնմէ, որոնց վաստակը ստուերի մէջ մնացած է, զժրատարար : Հին սերունդին կը պատկանէր, աշխատելու եւ արտադրելու անսպառ եռանդով : Կը զգար մահուանդ միջոցովին մեծերուն տուած մեծութիւնը : Իր ուժերը եւ վաստակը գերազանահատելու բացասականութիւնը չունէր : Փոքր ամուսի տշխարհահայեացքն ու փրկութեան իրաւունքը կը մտնէր եւ համեստութեամբ կը դիտէր իր վաստակը : Ձէր անոնցմէ, որոնք սրտիկան քանի մը նախափորձերով, զրականութեան մէջ դիբքերու կը սիրեն հասնիլ :

Համազգային Մշակութային եւ Հրատարակչական Ընկերութիւնը, որուն հիմնադիրներէն եւ անխոնջ աշխատողներէն էր ողբացեալը՝ պարտականութիւնն ունի զիրքերով հրատարակ հանելու անոր զրական վաստակը, այսօրուան եւ վաղուան սերունդներուն համար :

ՄԿՐՏԻՉ ՊԱՐՍԱՄԵԱՆ

Գ. Ի Փ Է Կ Ե Ա Ն

Ո՞Վ Է ԲԱՆԱՍՏԵՂԾԸ



Բանաստեղծութիւնը լեզուն է հագին. մարդ արարածը բանաստեղծութեան միջոցով կ'արտայայտէ իր ներքին յոյզերը, սպրումները, վիշտն ու ցնծութիւնը, մտածումներն ու խորհուրդները, ազատ, չափաւոր թէ յանգաւոր ձեւերու տակ՝ ան իր երաժշտականութեամբն ու ներդաշնակութեամբ՝ առիմֆնօզ է, հմայիչ, հաղորդական:

Բանաստեղծութիւնը, ունենալու համար մեր թուած յատկութիւնները, պէտք է ըլլայ անկեղծ, ինքնաբերիչ եւ ներշնչւած ու սրտայի:

Ան չի հանդուրժեր ոչ մէկ սուտի, կեղծիքի, ծէսի. անոր փափուկ էութիւնը կը սառի ու կը մեռնի անոնց պազ շունչին տակ:

Բանաստեղծը իր կրած ու արտայայտած տպաւորութիւններուն հանդէպ պէտք է ունենայ համարում, սէր, հաւատք: Իրմէ պահանջատեղ մաքրահատիկական ճշդ-դուրիւնը չէ, այլ՝ ճշմարտութիւնը:

Երբ բանաստեղծը ունի բնածին Քըրքըսումը կեանքի երեւոյթներուն հանդէպ, ան կոչուած է ստեղծելու գեղեցկութիւններ:

Բանաստեղծութիւնն այլ, ինչպէս ամէն արուեստ, ունի իր օրէնքները եւ իր թեմքիքը:

Ի հարկէ, այդ օրէնքներու եւ թեմքիքի իւրացումը չի բաւեր բանաստեղծ դառնալու համար, ճիշդ ինչպէս լեզու մը ուսանիլը չի բաւեր գրագէտ դառնալու: Սակայն այդ նախապարաստութիւնը

էական է, տալու համար բանաստեղծին հնարաւորութիւն՝ տիրականօրէն արտայայտուելու եւ յարթահարելու արուեստի նիւթական դժուարութիւնները:

Ռուս մեծ բանաստեղծ Բրիւսով, կը բացատրէր, թէ ամէն օր 6-8 ժամ վարժութիւններու կը յատկացնէ, ուսուցար գրելու իր ձեռքի սովորութիւնը չկրտրեցընելու համար, ի հարկէ, յետոյ պատռելով այդ վարժութիւնները...

Արուեստը տեղացան աշխատանք կը պահանջէ: Եւ կը պահանջէ բազմակողմանի ծանօթութիւններ, որոնք լայն հարկոցներ կը բանան բանաստեղծի մշտնօրէն ու հոգիին առաջ:

Եւրոպացի բոլոր մեծ բանաստեղծները հետեւած են բարձրագոյն կրթութեան. յիշելով միայն մէկ քանիներ՝ Միլթըն, Պայրըն, Շելլի, Թենիսոն, Ռաքսիթման, Լոնկֆելօ, Կէօթէ, Շիլլեր, Գոյնէյլ, Ռասին, Վիքթոր Հիւկօ, Լամարթին, Վիկնի, Ալպեր Մաւէն, Վերլէն, Վերհարն, Պոպլեր, Մեքերլինկ, Տանթէ, Մացցանի, Լէոփարտի, Տանուցիօ, Իրենց մանուկ հասակէն ընտելացած էին գասական լեզուներու եւ գիտութիւններու: Մա՛նաւանդ կը տիրապետէին իրենց մայրենի լեզուի բոլոր ճիւղերին: Եւրոպացիները՝ Եւրոպացիները եւ գասական մեծ տիրանները՝ Հոմերոս, Վիրգիլիոս, Լիւքսեցիա, Սոֆոկլէս, Էւրիփիտէս, Արիստոֆան, որոնք մշակած էին ու զարգացուցած իրենց բնածին ժիրքերը: Անկախ իրենց իրենց ներշնչած հիացէլէն, անոնք պատկառամբ կ'ազդեն իրենց հմտութիւնով:

Նայել կարելի է հաստատել Արեւելի մեծ երգիչներու մասին՝ Սաստի, Հաֆլզ, Օմար Խայծամ, Պապաթախիր, Յէլ-լալտտին Բուսի եւ ամենամ Ֆէրաուսին, ամենքն ալ ո՛չ միայն հանճարեղ բանաստեղծներ էին, այլեւ՝ իրենց ժամանակին ամենագիտուն դէմքերը:

Իսկ հնդիկ, հրէական, արաբական բանաստեղծութիւնները իրենց բացառիկ քռիչքով եւ ստեղծագործական արժէքներով, մարդկութեան հպարտմէքը կը կազմեն, ո՛չ միայն մեր օրերուն, այլ պե-

տի շարունակեմ կազմել, քանի մարդկութիւնը կ'ապրի: Յիշեմք միայն ամենուն ծանօթ անուններ, Շուքուրաւան, որով հմայուած է Կէօթէն եւ կը համարէ բանաստեղծական հրաշալիք: Քապիրը, Ապու Լալա Մահարիմ, Անթարը, Սրբ. Դիրֆի սագմտերգու եւ սիրերգակ բանաստեղծ արքաներ՝ Դաւիթ, Սոզուօն, եղերերգակ Յոսն ու Երեմիան: Այս բոլոր ամենները, ո՛չ միայն իբրեւ բանաստեղծ, այլեւ՝ իբրեւ գիտուն իմաստուններ, կը յարգուին մարդկութեան կողմէ:

ԱՐՈՒԵՍՏՆ ՈՒ ԱՐՈՒԵՍՏԱԳԵՏԸ



Արուեստի ամէն ստեղծագործութիւն, կեանքի ալլազան երեւոյթներու արտացոլումն է՝ արուեստագէտի էութեան մէջէն:

Արուեստագէտը, ըստ իր դիտելու, տեսնելու, ըմբռնելու, գատելու, խորհելու եւ, մանաւանդ՝ զգալու, յափշտակուելու, վերանալու կարողութեան եւ ըստ կարողութեան առաւել կամ նուազ մշակումին, կ'արտայայտէ կրած ուպաւորութիւնները իր ներկայ կամ պատմական ըրձագատի ընկերային կենցաղական ու բնութեան երեւոյթներէն:

Իր բնածին տաղանդին համաձայն՝ ան կ'ընտրէ իր արտայայտութեան միջոցները, — ձայնը, խօսքը, կտան ու դոյնը, կիճն ու ծարձարը:

Անոր կոշումն ու ձգտումն է, ոչ թէ ընդօրինակել, այլ վերստեղծել, աւելով սոյք տպաւորութիւններուն իր անհատականութեան կենդանի շունչը, իր երեւակայութեան թափն ու թռիչքը, իր վերացումի եւ յափշտակութեան դեղեցկութիւնը:

Հանճարեղ արուեստագէտը, ձերբազատուած ժամանակի, միջոցի, շրջապատի կայանդումներէն, կը դառնայ տիեզերական եւ ստեղծագործութեան ճանաչող կը տարածէ, արեւի նման, անցեալ ու դաշիք դարերու համայն ծարդկութեան վրայ:

Արուեստագէտը, մարդկային հոգեկան զգայնութիւններու թարգմանն է ու մեկնիչը:

Ան պէտք է ներգաղնակէ իր երեւակայութիւնը եւ ներշնչումը իր ներկայացուցած նիւթին: Պէտք է շփակչուէ, բընազդով, իր նիւթին տարողութիւնը եւ ըստ այնմ աստիճանաւորէ իր վերասոյք թռիչքը: Արուեստագէտը պէտք է մշակէ այս էական յատկութիւնը, մինչեւ որ դիտակցանէն անդիտակցականի վերածուի՝ շունչալով բնազդային:

Ինչպէս ընկերային կեանքի, այնպէս ալ արուեստի մարզին մէջ, ներգաղնակութեան դաղանիքը ինքնազստումի մէջ 'ր կայանայ: Այդ ինքնազստումը սոսկայն, պէտք է մշակուի ու դառնայ ինքնազուտու եւ ոչ թէ հետեանք արտաքին

պարտադրանքի, որ կրնայ այլասերիլ
«Ազատ կամքի բռնութեան»:

Արուեստը ենթարկել տիրիծիզմի՝
հաւասար է կտրելու արծիւին թեւերը.
տն այնու չի կրնար սլանալ ու սաւառ-
նիլ ու կը դատապարտուի գետնաքարը
սողալու, դալարուելու եւ մահանալու:

Յաճախ մեքենաբար կրկնուած բա-
նաձեւ մը կայ. «Ամէն մշակոյթ — հե-
տեւաբար ամէն արուեստագէտ — ունի
իր հայրենիքը եւ իր հայրենի հարազատ
հողին վրայ կրնայ անիլ, ուսնանալ եւ
տեղիւնդործել»:

Այդ մասնակի ճշմարտութիւն է մի-
այն. Արուեստը իր լրացուցիչ պայմաննե-
րուն, այդ ճշմարտութիւնը կը դառնայ
սիւսի եւ կը հաւասարուի սուտի, ինչպէս
Վանտիկի վիպութիւն մը:

Որպէսզի այդ վարկածը ճշմարտու-
թիւն դառնայ, պէտք է լրացնել, աւել-
ցրենելով. «Պայմանով, որ արուեստագե-
տը, ըլլայ ան քերթոյ թէ երաժիշտ, նը-
կարիչ թէ արձանագործ ու ճարտարա-
պետ, վայելի տեսնելու, մտածելու, ըզ-
ղալու եւ արտայայտելու ազատութիւ-
նը»:

Արուեստի բոլոր ճիւղերուն, բայց
մանաւանդ բանաստեղծութեան համար,
միշտ ներշնչման աղբիւր են ծտույթած
հոգեկան եւ ոչ թէ նիւթական արժէքնե-
րը: Անակրէտի մը, գինեգալտ Քայիած

մը, ամէն սեռի գեղեցկութեան սիրահար
Ստասի մը, սիրասարսիկ Քուչակը եւ
սեղանի ճոխ համադամներ ներքողող Նա-
դաշ Յովնաթան մը, եւ սիրասուրբ մեր
միջնադարեան կրօնականները, նոյնիսկ
իրենց շուայտ, աշխարհիկ երգերուն մէջ
կարտայայտեն իրենց ցանկալի էականե-
րուն կամ իրերուն պատճառելիք հոգեկան
վայելիլի ըղձանքը, մարմնովը կամ կար-
տը, քան թէ ուղղակի այդ իրերն ու էակ-
ները:

Եթէ սեռային եւ մարմնական բնագո-
նորու գրգռը չքողուի հոգեկանի նրբին
չղարշով, կը զազրի գեղեցիկ, առինքնող
ըլլալէ: Հանճարեղ արուեստագէտը —
բանաստեղծ, նկարիչ թէ արձանագործ
կամ պարող — ունի գաղտնիքը նետելու
հոգեկանի խորհրդաւոր մշուշը մերկու-
թիւններու վրայ: Ահա թէ ինչու Ս. Պետ-
տոսի տաճարի հրեշտակակերպ կանացի
մերկ արձանները, ոչինչ ունին գայթակ-
ղեցուցիչ եւ միայն գեղեցիկի վայելքը
յու տան հողիին:

Արուեստագէտը, ըլլայ բանաստեղծ,
նկարիչ թէ արձանագործ, երբ գուրկ է
այդ հոգեկան, վերացական կարողութե-
նէն, եւ անգոր է հասնելու նիւթին մէջէն՝
նողիին, անոր գործը կը զազրի գեղար-
եստական ամբողջութիւն ներկայացնելէ
ու կը դառնայ միջակ ու ձախողած:

Գ. Իֆէկեւն

Ոչ մէկ խոսք ունի նոյնպէս պատկանած է
ինձի, քան շքան քայ քաներ կան... Ի նման
խորհրդանութիւններ, որ կը խոստանան իրենց մէջ
քաղցրեմբի բնամտութիւնը, կնքծիբը եւ տղիտու-
թիւնը:

ՀՐԱՅ ԶԱՐԴԱՐԵԱՆ

(«Մեր կիսմերը»,
Երեւանի Հրատարակութիւն, էջ 268)



ՄԱՔՐԱԶՐՈՒՄՆԵՐ

ՄԵՐ ԿԵԱՆՔԸ՝ ՎԵՊԻՆ ՄԷՁ

«Բազմեմ նախորդ թիւերուն մէջ, «Կիսմերը» իմ հարգման ան-
մազարիի վրայ» վերջին միւսնայեան Հրատարակութիւններու երկայն-
քին հասարակած միւսմտութիւնները մասնանշելու ասան, յիշուցած
էինք, որ Երեւանի Հրատարակիչները, անհարկ նոյն մասնագութիւն-
ներով մատու խոսցուցած էին նաեւ Հրայ Զարգարեանի «Մեր կիսմերը»
վերջին ասորերը էջերուն վրայ. ասան՝ յ' անոնք ցուցարարած էին Հոգա-
ծութեան անպիսի՛ պահաս մը, որ մաս խաննել կու տայ Հայ գրական-
տութեան հանդէպ անպատ նուազագոյն յարգանք մը ունեցող մարդուն:

Հետագայ էջերուն կու ասնք Հ. Զարգարեանի վերջին երկու սուպ-
զրութիւններուն բաղդատական արդիւնքը, խորհրդանութեան բաժինը
ձեւելով ընթերցողին, ընդգծելով միայն մէկ կէտ, ա՛յն՝ որ ամէն մարդ
իրաւունք ունի պարզելու գրական իր տեսակէտը, երեւոյթներուն մտե-
նալու իր եզանակը, էջերուն վրայ հանդուրժելու կամ մերժելու լսնդուզն
պատկերացումներ, քայց ոչ ոքի իրաւունք տրուած է տպուած դործի
մը հետ վարուելու քստ կամս, քաղաքական ըլլայ իր շարժառիթը, կու-
սակցական ըլլայ թէ... տիրացուական:

ՅԱՊԱՌՈՒԱԾ ՄԵԾ ՀԱՏՈՒԱԾԸ

Հիմա կոնակը կը խօսի իր ականջին եւ կ'ըսէ, որ սրունքները կը քայ-
ւին եւ նոյն ձեռքը կ'օձանէ ցայլերուն մակերեսը: Աճուկներէն յետոյ՝ ըս-
տինքներուն պարագիծն ու փոքրը:

Իր՝ մօտ, արուակներ պրկուած է եւ կարծր՝ ու իր սեռին աչքերը յա-
ռած են զէպի անպեղէլի հորիզոնները:

Բռնկած ցանկութիւնը պակուցիչ ժայթքի մը մէջ կը նետուի: Արտէն
կ'ուզէ հասնիլ մինչեւ ակը այդ բանին: Պատուել բալոր պահարանները՝ հա-
նիլ մինչեւ ընդերքը այդ բանին:

Աղջկան ձեռքերը՝ փութկոտ, դինով, կը քակեն կոճակները, որոնցմէ
ոմանք կ'իյնան հապտապ: Գոնէ երկվայրկեան մը, կիրքը ցմբուր խմելու,
ցմբուր յազենալու կարծիր իզմը կը փոխէ իր լայն համարյուններ խորունկ
խածուածքներու, որոնց ցաւէն պզտիկ հնչնոցներ կ'ելլեն ու կը մարին: Ա-
մէն նոր փորձ, ամէն նոր խոյանք ասանց բաւարարելու՝ աւելի կը բորբոքէ
միայն այդ իշմը, աւելի կը մխրճէ միայն ակունները, որ արիւնին կը միտին
նրբ իր մարմինը մերկ եղաւ՝ կնոյ թեւերը պլլուեցան կոճակէն եւ մասները՝
բազի մաշիլներու պէս կառչեցան իր կողերուն: Առատ, կարծր ծիծերուն
ճգմունք իր կուրծքին՝ մթաղնեց իր աչքերը: Գինովութիւնը խառնուեցաւ կա-
տաղութեան:

Ձգլխանքը դարձաւ սպանութիւն:
Այդպէս իրարու ձուլուած, գնդակահար՝ թաւալեցան անկողին վրայ:
Արուի հետաքրքրութիւնը՝ խենթեցած՝ ցնցեց բաշերը. ես մղեց անոր
մարմինը, որպէսզի իր ձեռքերուն աչքերը, յանկարծ, դարբու հետարթու-
թենէն իրենց նախնիքին լոյսովը լեցուած՝ ահսեն ամէն մէկ ճիւղը, բալոր
պտուղները այդ մարմինին քաղցրահոտ ծառին. որպէսզի իր ձեռքերուն շրթ-
ները բժպեն բալոր բոյներէն մեղրայնոց փեթակին. որպէսզի իր ձեռքին ոտ-
քերը դիմեն զէպի բալոր հորիզոնները նորադիւտ ցամաքամասին, քայն ա-
նըպատ կալուածներուն վրայ այդ անվերջանալի իրանին:

Եւ ամէնէն առաջ, մէջքէն մինչեւ ուսերն ու ծոծրակը պարտա՛ կը-
նակի երկնակամարը, որուն միջին երկայնքովը կը պտակի ողնոտիւնը յօգա-
ռատ, շնչաւոր եւ ուշիմ, որպէս առաձգական սոնակ՝ ընդերքի ծործորներուն
ու արդանդին դաղտնախորհուրդ: Լեռնին ականջները այդ ձեռքերուն՝ կան-
չեր աւելի աղու, քան հրաւէրները պարիկներուն ու սահեցան մարմարակերտ
դիտերուն վրայէն զէպի որունքները պրկուած՝ որոնց մորթը, ինչպէս մա-
ղապատ պատմունանը վարունդին՝ անտեսանելի այտուցներով նուազ թաւ-
շային էր, քան այլուր:

Պարիկներուն կանչերը առին անդիմադրելի շէտեր: Երկշտութեան
վերջին թումբը խորտակուեցաւ: Խորտակումէն՝ աւելի օտտտիկ ժողովով՝
ձեռք իջաւ հոն՝ որուն կը ձգտէր առաջին պահէն իսկ: Փոքի՛ն, փոքի՛ն:
Հսկայ կաթան ստեղծազորութեան: Կակո՛ւղ, տա՛ք, շարժո՛ւն: Անծայրու-
ծիք այդ ծովուն վրայ՝ պորտին ձորակը եղաւ զէպի մեծին՝ կեդրոնակա՛ն,
անբնակա՛ն: Սանձակոծ հոսանուտներ, որընթաց, վազեցին արու բլլեջներու
անհուն երկայնքէն:

Այն ժամանակ՝ ձեռքին ձեռքը՝ մտաւ կախարդական աշխարհը: Ազը-
մէջի անդունդէ պալատները բոցավառուեցան: Ատողիկի լերան սպրչումէ
փայլալանքները եղան խենթեցող: Աւելի ակեղ, քան դետին վրայ, խոր-
տակիլ ցնցումները բռնկած սաւաննակին՝ մարմին մը նետուեցաւ մարմին մը
վրայ: Աւելի տարերային, քան ցուլին խոյանք խեղ, փոշիին մէջ՝ անտեսա-
նելի բանդերիլներով խթանուած՝ մարմին մը նետուեցաւ մարմին մը վը-
բայ: Բայց միեւնոյն պահուն, խորհուրդի մութ վիճէն, առայդ շշուկ մը՝ ա-

ւետիոյ պէս հասաւ: Մտաւ մարմնին մէջ. շուշուեցաւ մարմնին ամենափոքր միատորներու երկայնքին: Գերբնական կենդանութիւն մը խլրտաց ամէն տեղ: Շշուէլը՝ վազելով մտաւ բոլոր մկաններուն, բոլոր խորձերուն մէջ. անցաւ ընդերքի բոլոր փապուղիներէն. մէկ թափով ջրուեցաւ աղիքի պատերուն ամբողջ երկայնքովը՝ հասնելու համար, մէկ շունչով, թոքերէն դէպի սիրտը: Ենթաշնոնոս ու արտաշնոս բոլոր զեղձերը, հազիւ աւետիսը առած, սկսան բանիլ: Ուղեղը մեռաւ: Կամ՝ մտաւ ընդհանրական թրթռացումներու ուղկիանին մէջ:

Մինչ անդին, կենտոս պարկէ մը մէջ արթուն, զոյգ մը լուսարձակ՝ սուղորդի կղպուած ալքերուն պէս, կը ճառագայթէ: Անտարկէի ու դարձնակալ՝ երկուտրեակ կայսրերը ամորձիքներուն արայթէ՝ կ'իշխէին միաճեծան: Բոլորը, անոր մարմնին բոլոր բջիջները — աւելի առատ, քան կաթիլ կայ ծովուն մէջ — շարուեցան մէկ դծի վրայ: Ամէն մէկը արտաշնոց այն՝ որ ունէր որպէս ամէնէն աւելի թանկագին: Ու գծին անուն երկայնքովը, անդին հիւթէ զնոյակը սկսաւ թաւալիլ՝ հեղհեղէ անելով: Արուն՝ բոնուեցաւ տղատագրման երկունքի ցաւերէն: Անհունութեան մէջ, ահա՛ աւերթարթը՝ միակ ընտրեալ, ուր մահն ու կեանքը իրար տեսան...: Մէջըը ցլան վղի պէս պրկուեցաւ ու իր զայտազանտ աղեղին երթեւեկը՝ աստուածորէն կրաւորական անթի մէջ՝ սաստկացաւ: Այն իղձը՝ միշտ կատաղութեան մէջ, որ երբեք իրմէ չէր հեռացած, աւելի ուժգնօրէն, անզամ մը եւս ցցեց իր բաշը: Հասնիլ մինչեւ սկունքը այն բանին, որ գոհհիկները կ'իբք կ'անւանեն:

.

Արսէն՝ ջախջախուած, սպառած, ջրամեծ՝ կը հեւար մարմնի մը վըրայ, որ կը գալարուէր դեռ անուն հեշտանքի փթթումին մէջ: Կոկորդիլն մէջ, երազի ամենատուր ճիշերն ու կոյժարի ամենախորհրդաւոր, էք հնհնուքները իրար կը խնդդէին:

Ջրուանքի նոր ալիք մը ծածկեց տղան մինչեւ գլուխը:

Հ. ԶԱՐԴԱՐԵԱՆ

ՇՐՋՈՒՄԾ ԻՍՎԱՍՏՆԵՐ

Լրիւ մտերմութիւնը շտեղծուեցաւ:

(Առաջին տպագրութիւն, էջ 43)

Լրիւ մտերմութիւնը ստեղծուեցաւ:

(Երեւանեան հրատարակութիւն, էջ 37)

Հապա գունաւոր քարթերը...

(Առաջին տպագրութիւն, էջ 67)

Հապա գունաւոր քարթերը...

(Երեւանեան հրատարակութիւն, էջ 16)

Երգեցիկին զէպֆէն արագ սակայն, այս մտնաւոր...

(Առաջին տպագրութիւն, էջ 68)

Երգեցիկին զէպֆէն արագ սակայն, այս մտնաւոր...

(Երեւանեան հրատարակութիւն, էջ 62)

Ես արդէն ներքնապէս որոշումը սուսած էի, անկուճի պարագային
չձգել ինքզինքս՝ այլ աշխատիլ...

(Առաջին տպագրութիւն, էջ 90)

Ես արդէն ներքնապէս որոշումը սուսած էի, անկուճի պարագային
ձգել ինքզինքս՝ այլ աշխատիլ...

(Երեւանեան հրատարակութիւն, էջ 78)

Քաղեղու մուրաբինն անոր ալ եմ փոխանցած :

(Առաջին տպագրութիւն, էջ 183)

Քաղեղու մուրաբինն անոր ալ եմ փոխանցած :

(Երեւանեան Հրատարակութիւն, էջ 153)

«Աղջի, ըսաւ, հատ մը էւէլ, հաս մը պակաս»...

(Առաջին տպագրութիւն, էջ 264)

«Աղջի, ըսաւ, հատ մը էւէլ, համ մը պակաս»...

(Երեւանեան Հրատարակութիւն, էջ 215)

Միշտ յորդուն անողջութեամբ՝ պէտք է ըսել, որ նա կը սիրէր աշխատիլ...

(Առաջին տպագրութիւն, էջ 266)

Միշտ որդուն անողջութեամբ՝ պէտք է ըսել, որ նա կը սիրէր աշխատիլ...

(Երեւանեան Հրատարակութիւն, էջ 217)

Կը թղթատեմ նաեւ մեծ տրցակ մը...

(Առաջին տպագրութիւն, էջ 289)

Կը թղթատեմ նաեւ մեծ տրցակ մը...

(Երեւանեան Հրատարակութիւն, էջ 234)

Երկուքը՝ կեցած պատրաստ, սաւառնակներու պէս միջոցը կը դիտեն :

(Առաջին տպագրութիւն, էջ 304)

Երկուքը՝ կեցած պատրաստ, սաւառնակներու պէս միջոցը կը դիտեն :

(Երեւանեան Հրատարակութիւն, էջ 246)

ԽԱԽՏԱԾ ԲԱՌԵՐ ՈՒ ՇՈՒՈՎՆԵՐ

.. Կերպասներուն առաջին թաւիչը ընդմիշտ կը հեռանայ...

(Առաջին տպագրութիւն, էջ 77)

Կերպասներուն առաջ թաւիչը ընդմիշտ կը հեռանայ...

(Երեւանեան հրատարակութիւն, էջ 69)

Ճարտարարուեստի մարած մեքենայի մը հրէշային մարմինն անհամար բաւիղներուն երկայնքէն...

(Առաջին տպագրութիւն, էջ 79)

Ճարտարարուեստի մարած մեքենայի մը հրէշային մարմինն անհամար բաւիղներուն երկայնքէն...

(Երեւանեան հրատարակութիւն, էջ 71)

Սարմանարին կեռը, որ անցուցած էի պատուհանին երկաթեայ ցանկին՝ մեծապէս կ'օգնէր ինձ:

(Առաջին հրատարակութիւն, էջ 86)

Սարմանարին կեռը, որ անցուցած էի պատուհանին երկաթեայ ցանկին՝ մեծապէս կ'օգնէր ինձ:

(Երեւանեան հրատարակութիւն, էջ 74)

Հօրս խաշուած, կարմիր վիզը, գրեթէ միշտ ուռեցած վզերակներովը...

(Առաջին տպագրութիւն, էջ 87)

Հօրս խաշուած, կարմիր վիզը, գրեթէ միշտ ուռեցած վզերակներովը...

(Երեւանեան հրատարակութիւն, էջ 76)

...ինչպէս յաճախ պատկելէ առաջ, պահ մը սրունքները մարմանքի կ'ենթարկէր...

(Առաջին սպազբուրթիւն, էջ 88)

...ինչպէս յաճախ պատկելէ առաջ, պահ մը սրունքները մարմանքի կ'ենթարկէր...

(Երեւանեան Հրատարակութիւն, էջ 76)

Պէտք է անմիջապէս յետոյ իմս կարգադրել:

(Առաջին սպազբուրթիւն, էջ 91)

Պէտք է անմիջապէս յետոյ իմս կարգադրել:

(Երեւանեան Հրատարակութիւն, էջ 79)

...Գլուխը կը ծռէր. կը նայէր թաց դռներէն միւս սենեակներուն մէջ:

(Առաջին սպազբուրթիւն, էջ 98)

...Գլուխը կը ծռէր. կը նայէր թաց դռներուն միւս սենեակներուն մէջ:

(Երեւանեան Հրատարակութիւն, էջ 84)

...Միւս ներկաներն ալ սիրալիրօրէն ինծի նայեցան...

(Առաջին սպազբուրթիւն, էջ 104)

...Միւս ներկաներէն ալ սիրալիրօրէն ինծի նայեցան...

(Երեւանեան Հրատարակութիւն, էջ 89)

— Պուզի պէս աղջիկ էր... — կրկնեց շինծու կրքով, միւսներուն դարձած... — երկուս'նս... կ'ըսեմ, որ թիչ մը...

(Առաջին սպազբուրթիւն, էջ 108)

— Պուզի պէս աղջիկ էր... — կրկնեց շինծու կրքով, միւսներուն դարձած... երկուս'նս... կ'ըսեմ, որ թիչ մը...

(Երեւանեան Հրատարակութիւն, էջ 92)

Անձիջապէս գլխում հետ կը բարձրացնէ ինծի եւ ձեռքս կը ցնցէ :

(Առաջին տպագրութիւն, էջ 184)

Անձիջապէս գլուխն հետ կը բարձրացնէ ինծի եւ ձեռքս կը ցնցէ :

(Երեւանեան Հրատարակութիւն, էջ 153)

Նարնջենիի ծաղիկը շատ նուրբ կ'ուզէ. բարակ նարոտ մը :

(Առաջին տպագրութիւն, էջ 220)

Նարնջենիի ծաղիկը շատ նուրբ կը բուրէ. բարակ նարոտ մը :

(Երեւանեան Հրատարակութիւն, էջ 181)

Յանկարծ գոգուելի ակնարկը հազմերգու սպասուհիին, դրան ճեղքէն :

(Առաջին տպագրութիւն, էջ 253)

Յանկարծ գոգուելի ակնարկը յանգերգու սպասուհիին, դրան ճեղքէն :

(Երեւանեան Հրատարակութիւն, էջ 206)

...բարկութիւնը կնոջը գլխում պայթեցուց, առաջին առիթով :

(Առաջին տպագրութիւն, էջ 256)

...բարկութիւնը կնոջը գլուխն պայթեցուց, առաջին առիթով :

(Երեւանեան Հրատարակութիւն, էջ 208)

...Երկրայանքի, ախտաւարանի, անձկութեան, մելամաղձոտութեան...

(Առաջին տպագրութիւն, էջ 289)

...Երկրայանքի, ախտաւարանի, անձկութեան, մելամաղձոտութեան...

(Երեւանեան Հրատարակութիւն, էջ 235)

ԱՐԵՒԵԼԱՀԱՅԵՐԷՆ

Երկար ատեն ատանց խօսելու քայլեցի՞նք :

(*Երեւանեան հրատարակութիւն, էջ 31*)

Ես այդ անդունդն էր, որ կ'ուզէի վերացնել :

(*էջ 39*)

*Աւտի եւ ամբողջ ինդիքը կը կայանար՝ զիտե՛նայ, թէ պիտի յաջողի
կամ ոչ :*

(*էջ 43*)

Գոցեցի խանութս եւ սկսայ քայլել անձրեւին տակ :

(*էջ 45*)

Ամէն ինչ ջրին է տուել :

(*էջ 47*)

Միւս երկուսը պարտաւ կը սպասեն :

(*էջ 52*)

*— Հապա ինչի համար, ի՞մ սիրելի, — հարցուց անարատ մեղմու-
թեամբ :*

(*էջ 53*)

Յետոյ, շատ յետոյ, եթէ օր մը հանդիպեմք՝ կը տեսնուինք նորէն :

(*էջ 58*)

Ես քն կեանքիդ չեմ խառնուիր :

(*էջ 59*)

*«Հրեշտակ» էր դրած անունը եւ կը ձեւացնէր վարուել, որպէս բուրբոն-
վին մանուկի մը հետ :*

(*էջ 66*)

Ահագին քաղցր պատկերներ խուճեցին աչքիս առջեւ...

(*էջ 75*)

Իսկ բնագրներուն հետ կարելի չէ վիճարանել :

(*էջ 79*)

Կը դառնան տարօրինակ, մի խօսքով քրքջաշարժ :

(*էջ 86*)

Ոչ բարձր պաշտօնատարի, ոչ դաշնակցական գործչի, ոչ ուսման վարի, ոչ բարեգործականի:

(էջ 88)

Մեք հարսնացուն ժպտաց որոշ հիացական երանգով:

(էջ 89)

Այնպէ՛ս, ներքին, ինքնավստահ ու ժեղացրած իր բնական վերապահութեան մէջ...

(էջ 96)

Իր մեծադոյն հանոյքներէն մէկը կը կայանար ընդունել «որոշ» խրճորարկուներ...

(էջ 110)

● *Հողէ մի մեծ խաղան ունեմք. խեղճ մայրս...*

(էջ 115)

...Եւ որիչ մը կ'ենթարկի կոտորումին...

(էջ 120)

Օրերով իր յիշողութիւնը կը կորցնէ եւ եօթը...

(էջ 128)

Կը քաշուի իր կարծի մասները դիպցնելու:

(էջ 136)

Ի՞նչ նիւթի մասին է՝ դժուար է հասկանալ:

(էջ 138)

...Թէ՞ ժամանակ մը դադարեցնեմ այցելութիւններս...

(էջ 146)

Բարակացած շրթներուն վրայ աչքերուն յատուկ փայլէն շարունակութիւն մը նստեր էր:

(էջ 146)

Թերեւս իր վրայ բարերար ազդեցութիւն գործի:

(էջ 148)

Նոպաները միայն դեռ գոյութիւն ունեն եւ...

(էջ 152)

Կեանքի կտոր մը, որ կ'արտացոլէ այդ փոքրիկ ուղեղին մեծ երեւակայութեան եւ սահմանափակ բառերուն մէջէն...

(էջ 153)

- Կ'ափսոսար այն ազուրթ օրերը, ուր կը խորհնն աղջիկ մը գտած ըլլալ...*
(էջ 156)
- Նախանձո՞ղ, թշնամի՞ն կը պակասի:*
(էջ 168)
- Ջրերուն տակ, գեղին նունուֆարներու պակուղ մը...*
(էջ 185)
- Գառսուն ըտք չէք յառաջացեր, որ կանգ առնիլ տուի եւ իջանք...*
(էջ 186)
- Անգամ մը եւս կը յարակուսեմք զրան:*
(էջ 188)
- Ես ելայ եւ զնացի փոքրիկը փնտուելու:*
(էջ 189)
- Ես, որ այնպէս պաշտպանած էի եզրօրս այդ բոլորէն...*
(էջ 192)
- *Սեւ ժօրուքով մարդը կու գայ, որովհետեւ կը վախենաս:*
(էջ 195)
- Փրսնսիական համազգեստ մը... կարճ ասրատ:*
(էջ 201)
- Որ չմըսի շոգեկանքին մէջ:*
(էջ 209)
- Բաւականին զիբցած էր ու կոնքերը լայնացած:*
(էջ 210)
- Ինչպէս որոյս հագնուեցայ:*
(էջ 231)
- Հաստատութեան մը մէջ պտըտցնի...*
(էջ 243)
- Յրերը ինչով որ կը լցուէին, ինչպէս որ...*
(էջ 246)



ՈՒՆԻԵՄ ԿՈՆՏԻՆԿ

ՆՈՊԷԼԵԱՆ ԳՐԱԿԱՆ
ՄՐՅԱՆԱԿԱԿԻՐ

Շուհարի անգղեմիան այս տարուան նոպէլեան գրական ժրջանակը շտրկեց անգլիացի հանրածառնոթ վիզլասան Ուիլիքսմ Գոլտինկին:

Ուոլտինկն ժը որդին՝ Կոլտինկ ուսանած է Օքսֆորտի մէջ եւ մեծապէս ազդուած Համալսարանային երկրորդ պատերազմին իրրելու նաւաստի ապրած իր փորձառութիւններէն: Այս մասին ինք պիտի քննէ:

«Սեւէ սէկը, որ անցած է այդ տարիներէն առանց հասկնալու, թէ մտրդ արարածը վատուփիւմ կ'արտապրէ՝ ինչպէս մեզոյ մեղքը, պէտք է կոյր ըլլայ կամ գլխուն մէջ սխալ բան մը գոյութիւն ունենայ»:

Իր առաջին վէպը՝ «Միշտուներու արքան», լոյս կը տեսնէ 1954ին՝ անմիջական համրու սպարոյզիով իրեն: Կոլտինկ կը ճանչցուի իրրելու գրող ժը, որ պատշաճ ունի, Գործը կ'անցնէ համաշխարհայիններու գրական գասանիութիւնու ցանկին, կը բացատրուի՝ վերածուելու համար իր ամենապարզունակ իմաստին... Ինչ որ, հաւանաբար, հեղինակին զժրագոտութիւնը կը դառնայ:

Վերջեւ՝ փոքրիկ տղայ ժը, որուն հաւանաբար գասարանային պարտականութիւն տրուած է այս գործը կարգայ, կը գրէ իրեն. «Եթէ տակաւուր մը ես, կը համի՞ս պատասխանի այս հարցումներուն»:

Յաւորը գործերը՝ «Փիկըր Մարքիթն ու Ակաա անկուսը, ընթերցողներու կողմէ կը դիմաւորուին յարգանքով եւ, միտմանակ, շփոթով կամ անհանգստութեամբ: Ընթերցողները որչառ լափով խարուած կը պզտ, երբ «Փիկըր Մարքիթն վէպի աւարտին կ'իմոնան, որ դիտաւոր հերոսը մահացած է երկրորդ էջէն իսկ: Երբ Ակաա անկուսը լոյս կը տեսնէ, որ մամականակէց մարդու շրջապատն ու ներքին ախարհը կը պատկերացնէ, փնտրատները կը բողոքեն, թէ ներկայացուածը իրենց ծանօթ շրջապատը չէ...»

Հիմնական հարցը այն է, որ պատկերացուածը իսկապէ՞ս ընթերցողին ծանօթ շրջապատը չէ, թէ մարդ արարածը շտրկեց զիմացրուել իր ներքին թիրտ ճշմարտութիւնը: Ակաա անկուսին հերոսը՝ Սամի Մտունիթոյ պիտի հարցնէ շարունակ, թէ ե՞րբ կորսնցուցած է իր ազատութիւնը եւ վէպի աւարտին, նախկին սիրած աչկիկը պիտի գտնէ հոգեբուժարանի մը մէջ... Յաճախ որդիներու կը դիտանք՝ առանց անդադուանալու կամ ուղչլու: Իսկ երբ Սամի գործ կ'իջնայ զերմանացիներու մեղքը, նազի սպան կը յաշտէ Սամիի ներքին դժոխքը բանալ՝ իր դիմաց:

«Կարիւն առտուանը, Ալթոյրէ քիթեւէկը, զժասանգարդները, իւրիւր, ըրա՞ կը տեսնեն առանց նոր իրագործում ժը արժանագրելու իր տ-

նույնին: Իսկ «ԲՈՒՐՊԵ» երկին հաստատվում են նաև (1967), Կոլտինկ անվի բանաստեղծությունները: Նույնիսկ մե կը պահեն: Գրական շրջանակներու կարծիքով՝ Կոլտինկ սպասած է:

1970ին՝ անակնկալ կերպով լոյս կը տեսնէ «Տնտեսային խաւարը», ուր տառապանքով, դանդաղ, այլ յանդուգն և արտակարգ նոր փորձառութիւն մը պահի է, հակառակ անոր, որ հեղինակին սեւեռումը նոյնն է: Այսպէս՝ երկիր վրայ հաստատուած ժրթոնեան դժուր մը կը դրաննէ, ուր երկու գեղեցիկ էրներ շարութիւն կը գործեն՝ շարութեան սիրտին:

Իսկ 1980ին լոյս կը տեսնէ «Անցումի ծեփք» անուն վեպը, որ հաւանաբար ամենէն կարեւոր իրադրութեան է Կոլտինկի:

Գործողութիւնները տեղի կ'ունենան անցեալ դարու սկիզբը՝ Անգլիայէն Աւստրալիա մեկնող հին նաւու մը վրայ: Արեւել զբնիկ կարելի է դանկ առնէ ինչ — սեռային ցանկութիւն, դիսուսութիւն, շփոթ, նշանաւազ, ծնունդ մը, մահ մը, Ժողովին թաղում մը, ստորնացումներ, ասորիք տախարահանայեցիներ, եւայլն:

Գեղգերուն կը ծանօթանալ երեսասարդ և ինքնահաւան կամուսնու Քալպոթի օրագրութեան ընդմէջէն, որ կը ներկայացնէ անդիլիական բարձր դասը: Կոլտինկ կը լալողի ցոյց աւել ալս մարդուն նկ հորիզոնը՝ մէկ կողմէ ներկայացնելով դեպքերը, միւս կողմէ՝ անոց պատկերացումը Քալպոթի օրագրութեան մէջ: Աւելի ուշ՝ Քալպոթ կը դիտնայ, որ նաւու նաւորներէն կրօնական մը, որ կը զինովայ նաւաստիներու մէկ խաղին վրայ, ստորնացումներու, ծիծաղելի կուցութիւններու և յուսահատութեան կը մտնուի, որ ան ևս օրագրութիւն կը պահէ: Պատուի թիւը կ'երթայ սկզբնատրութեան, կը վերսկսի և ամբողջովին սարբեր դիտանկիւն մը կը դաննէ: Հոն կատարուող իրադրութիւններուն աւելուութեամբ...

Քալպոթ, որ Աւստրալիա կ'երթայ նոր դաս-

տի մը կատարելու, իր օրագրութիւնը կը փոխէ այն յատկութեամբ, որ ինք՝ Հուստաութեան դարու պատկեր, նոր փորձառութեամբ մը հարստացած է այս նաւորագրութիւնը՝ մարդ արտարծի ներաշխարհը հասկնալու ուղղութեամբ, Սակայն Կոլտինկի անկարգութիւնը յոսան է — նոյն կարեւոր և մակերեսային մտայնութիւն է, որ կը յարկանէ իշխող դասակարգը:

«Անցումի ծեփք» կ'արժանանայ Համբարձում Պալքըր Մըք-Քոնէլի մրցանակին:

Հիմաուի իր գրականութեան շարք մը տեսիլ կամ բարդ նկարագրիւն, ուր գործնական մտայնութիւն ու խորհրդապաշտութիւնը կը միաձուլուին, Կոլտինկի մարդկային և կարգադրուող պ ուղե է: Եղեցիկան մրցանակի շնորհակալութիւնը՝ գրական խորագրի ինկմար Պայրքըթին կ'ընէ: «Միլիք» կուտնկի վեպերն ու պատմականները խմբու բարոյապատրիստիկ կամ մուք սասակցիներ չեն միայն՝ անոնք ու վտանգաւոր ուժերու մտնիմ: Անոնք մտն արկուծախնայրակամ աշխուժ պատումներ են՝ գիտնելով, սուղագործակամ կամայքով և հետաքրքիրեամբ բարոյապո:

Հաւանաբար Կոլտինկի մտայնութիւնը որոշ շարքով սարբեր է:

Անցեալ սարի հրադարակուած յոգևաններու և գաղափարութիւններու հաւաքածոյի մը մէջ ան է՛րաք- Վեր իտիալիստ: Կը հետիւիմ սակարկի մը, գրք ալ կրնամ հասկնալ, ալ ալ բացատրել: Նոյն յոգևաններ մէջ, որ հաւաստի և սահմանադրութեան հարցերը կ'արծարծէ, ան իր գրականութիւնը կը սահմանէ իրեն զգաւմաւորիմը իմ անհնական ցատումներուս: «Միլիստներու արեան», ըստ իրեն, ցատումի արտայայտութիւն մըն է, որ կը միտի ցնցել իմացական բանտին մոդը, որ արդի մարդը կատարած է իր լուրջ՝ Մարքսի, Տարտինի և Պրեյտլի պաղափարներով:

Դժուհայ Կոլտինկի այս ըմբոս կեցուածքին մէջ կը կայանայ, հաւանաբար, զրոյթ իր աննազխաւոր յատկանիչը:



ԱՐԵՎԻԿԱ-ԱՅԵՐԵՆԵ ԲՈՒՍԵՐԷՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ
ԿԱՍԸՆԹԱՅՔԻ
Մ. ԿՈՐԳԻ ՀԻՄՆԱՐԿԻՆ ՄԷՋ

Մոսկուայի Մաքսիմ Գորբի Գրականության
Հիմնարկի գեղարվեստական Քարգանդների
ամսագրի այս տարիչրթինի հասցատան է նոր
գումարը թայք ժՆ՝ արեւմտահայերէնէ ուսերէն
Քարգանդների կատարողները պատրաստելու նը-
պատակով:

Ամսագրի վարիչը՝ Գր. Լեզիան Գլխա-
գիւղէ, Երեւանի Կոմունիստական Համալսարանի
հարցադրոյցի մէջ, հարցադատ է լաւեկան Կե-
տեւեայ տեղեկութիւնները:

Վեր կենտրոնը ԲԵՆ յիտուն տարուան պատ-
մաւրիւն ուժի, բայց գնդարեւտակալ քարգա-
մուրքեան ամպիւնը կիմնուած է տակի ուշ՝ 1956ին:
Անցեայ տարիներու ըմբայքին, կարիքային
Միութեան ազդերու Յ4 յեզումներով, ամպիւնը
պատրաստած է մտա 250 քարգամուրքներ: Մեր
ամպիւնի կիմնուող զատակոսներն է Յակոբ Խա-
չատուրեանց, որ հայ գրականութեան յատգոյն
գարծերու իր քարգամուրքեանը, որոնց կարգին՝
Յան Ծ. Չարննցի շարիքին, մեծ հա-
նայում գտած է ուսը ըմբերգակն մտա: Իրենց ու-
սումը Մ. Կորգի Հիմնարկը ստացած քարգամ-
մուրքներն 19ը՝ հայերէնէ աստերէն քարգամուր-
քներ Յժ - այս թիւը իմենին ցոյց կու տայ, թէ
Ի՛նչ կարեւորութիւն կ'ընծայուի հայ գրականու-
թեան քարգամուրքեան: Հայ ժողովուրդի իմա-
ցական մշակոյթը, որուն ակունքները հարերու
խորերէն կու գան, ա՛յնքան հարուստ է, որ մեր
Հիմնարկին մէջ, ասիւտ տակիւն յոր տարի ա-
ռայ, հայերէնէ աստերէն քարգամուրքիւններ
կատարող խումրի մը տեղեկամ անհրաժեշտա-
րիւնը զգացուցտա:

Հայ գրականութեան ամենակտիւ մէկ մտաք
հանդիսացող արեւմտահայ գրականութիւնը կու

Միւրեւին հայ գրականութիւնը մեծ արժէք կը
մերկայացնեն եւ ունին շատ մը ամուսնի վարպետ
գրողներ՝ տրժակի, բամաստեղծութեան եւ կրա-
պարակագրութեան մարգերու մէջ: Անոնց գործե-
րը, ԲԵՆԻ տակու քարգամուրքիւններով, արժա-
նացած են խորհրդային ըմբերգակներու ուշա-
դուրքեան եւ գնմատեմէին: Հիմնարկի քարգ-
մամուրքեան ամպիւնի մարտի տարիներու ուսա-
մակները արդէն քարգամած են Գանիլ վարա-
ժանի, Համաստեղի, Շահան Շահմուրի, Վանքաժ
Մազեանի, Արմէն Գորեանի եւ այլոց գործերը:
Այսուհանդերձ, անհրաժեշտ կկատուցտա արեւ-
մտահայերէնի քարգամութիւն կատարող մտա-
մակներու կրթութեան գործը տակի յայտի կի-
մնուր վրայ դնի: Անա թէ ինչու հայ քարգամ-
մուրքեան արեւմտահայերէնի կատարող մտա-
մակները՝ ինչ հայ երիտասարդներ, բացառակալ
արեւմտահայերէնով գրուած գրականութեանը
պիտի գրագի: Ուսումն տեւողութիւնը քարգամ-
մուրքեան քամին մէջ կիմն տարի է: Ուսումնական
յայտագրին մէջ կան ման քամտարական ընդ-
հանուր կիւրքեր՝ քարգամութեան տեւութեան,
ժողովրդական քամտարութեան, ապային մշա-
կոյթի ընդհանուր պատմութիւն: Հայ ունկնդի-
րը, օրինակ, պիտի ուսումնասիրէ հայ գրակա-
մութեան պատմութիւնը, հայ ժողովուրդի պատ-
մութիւնը, հայ իմացական մշակոյթի պատմու-
թիւնը՝ Հայաստանի թէ Միւրեւին մէջ:

ՎԵՆԵՐ Գժաւար ԲԵՆ կարեւորին մտան ամպիւն
մը կիմնի, ստանց Հայաստանի օգնութեան: Օգ-
նութիւն մը՝ զոր մեծի կը տանակ հայ ամուս-
նի գրողներէ. զիմակամներէ: Մեր մտա զատա-
խօսութիւններ կը կարդան Մոսկուա ընտեղ մտա-
մակներ, ինչպէս ման կրակիրեղներ՝ Հայաս-
տանէն եւ այլ երկիրներէ: Երկար տարիներ
զատախօսած է Յակոբ Մայիսեան: 1980ական թը-
ակամներուն, յուսանիլ եւ տարտելի ետք, գա-
տարտած է ման Պարոյր Մեւակ: Ամպիւնի մը-
կայ աշխատակիցներէն է բամաստեղծ եւ քարգ-
մամուրքի կրքեան Ալիշեան: Կը յատանէ, որ քամի
մը տարի ետք մեր Հիմնարկի շքանուարա քարգ-
մամուրքներ ուսերէն յեզում ըմբերգակն կը մը-
կայտեմն արեւմտահայ, ինչպէս ման՝ Միւրեւին
հայ գրականութեան յատգոյն գարծերը:

ԱԼԻՍԻԱ ԹԵՐՁԵԱՆԻ ՋՈՅԳ ՅԱՂԹԱՆԱՆՆԵՐԸ

Հինգշաբթի, 26 Օգոստոս 1988ին, Պուէնտո Այրէսի Վենիթոս Ռիզորտիոյի սրահին մէջ տեղի ունեցած է արժանաւիշակաւ երգահան-երաժշտագիտուհի Ալիսիա Թերզեանի եւ ժախտաւիճի ներկայացման երեկոն, ուր ներկայ գտնուած են բազմաթիւ երգահաններ, երաժիշտներ, մամուլի ներկայացուցիչներ եւ երաժշտուէր հոծ թաղմութիւն մը:

Ջախտաւիճի ընդ առաջ է Արուսեայ Ազգային Ֆոնատի եւ Ակուսիին Յոջոս հաստատութեան նախաձեռնութեամբ: Անիկա բաղկացած է չորս ստեղծութիւնէ՝ «Մայնք», «Շանթիմիէն-բան», «Լիւրսոններ» եւ «Գարմէն Գրիտարալիտ», որոնք յօրինուած են 1963-79 տարիներու:

Ալիսիա Թերզեան կիւր եւ արուստագիտուհին ներկայացուցած է խորամուտ Ռուսոյի Ալիսիա կա: Ապա խոր առան է հայ արուստագիտուհին, որ իր երաժշտական կազմաւորման մէջ ծընողին ունեցած գիտաւոր դերին անդրադասուելով՝ ըսած է: Թէ իրենց այդ ընթացքով՝ «ամենէ իննի առիթը ընծայեցիմ գորգացնելու ա՛յն՝ ինչ որ, շարքերէն սոգացուրծ՝ իրենէ չէիմ կրցած ընել»:

Իսկ Ջորջըարթի, 14 Սեպտեմբեր, երեկոյեան ժամը 9ին, «Քոլիսէո» Թատերասրահին մէջ տեղի ունեցած է միջազգային առաջին ներկայացուցումը շուտամա՛ Գառնիլիոյ եւ Արսլանի բազումի, զուտոր կարգիկէ արժանաւիշակ ունուծ ուսուցիչին:

Երաժշտութեան Հեղինակն է Նոյնինքն Ալիսիա Թերզեան, որ իր այս ստեղծութիւն մէջ ներ-

մուծած է հաստատուներ հայ եկեղեցական երաժշտութեան:

Ա՛ ժուրիստներն մամուլը բարձր գնահատականներով ահաբազարմած է հայ արուստագիտուհին այս երկու գործերուն, ընդգծելով անոնց գեղարուեստական բարձր արժէքը, ոճային հարմարութիւնը, ինքնատիպ դրոշմը եւ հարուստ երևակայութիւնը:

ՎԱՆ ՍՈՂՈՄՈՆԵԱՆ ԿԸ ԽԼԷ ՅԱԷՆՑԱՅԻ ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿԸ

Իտալիոյ Ճաէնցա բաղաւթին մէջ տեղի ունեցած խեցեղործութեան միջազգային ցուցահանդէս-մրցումին դասակարգման միտմանութեամբ գափնեկիր հռչակած է հայրենի նկարիչ Վան Սողոմոնեանը, աւտոր ընտրելով յիսուսը մրցանակը:

Ճեմահայ Վան Սողոմոնեան, որ մրցանակին մասնակցած էր ՎՄԱԳԸ եւ միջազգայրը աւուծ իր ստեղծագործութեամբ, աւարտած է երևանի գեղարուեստաթատերական Հիմնարկը եւ մասնակցած՝ միջազգային ու խորհրդային կարգ մը ցուցահանդէսներու: Անոր յաւազոյն գործերէն կը նկատուին «Լուսոյտ քոչում», «Բազալիք» եւ «Արլիւն» խորագրի ստեղծութեանը, որոնք 1980ին ցուցադրուած են Արեւելեան Գերմանիոյ մէջ տեղի ունեցած խեցեղործութեան միջազգային ամառուամարին:

Հայրենի արուստագէտը առաջուկեան մրցանակը խլած է 30 երկիրներէ եկած բազմաթիւ ներկայացուցիչներու ձեռքէն:

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՀՈՂ, ՄԱՐԳ ԵՒ ԳԻՐ

— Տպատրատաշտ էջեր —

• Հրատարակւթիւմ Հայկ Մերձնկիւլեան գրական մրցանակի, թիւ 8, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան տպարան, Ամբիլիսա, 1983, 373 էջ:

ՆԻԿՈՂՈՍ ՍԱՐԱՆԵԱՆ

ՉԱՓԱԾՈՅ ԵՐԿԵՐ

• Հրատարակւթիւմ Գէորգ Մերձնկեցի գրական մրցանակի, թիւ 17, վեբրատայակութիւններու ֆոնտ, Ամբիլիսա, 1982, 512 էջ:

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ


ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ

Մ. Ի Շ Խ Ա Ն

ԻՍ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՍ

(Յուշեր 'եւ տպատրութիւններ)

- ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆ
- ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԿՈՆՑ
- ՆԻԿՈՂ ԱՂԲԱԼԵԱՆ
- ԼԵՒՈՆ ՇԱՆՔ
- ՍԻՄՈՆ ՎՐԱՅԵԱՆ
- ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆ
- ՎԱՀԱՆ ԹԵՔԷԵԱՆ



بَاكِينُ

مجلة شهرية ، ادبية وفنية علمية

المدير المسؤول

السيد ارتين كارنيك قزانيان

PAKINE

REVUE MENSUELLE

LITERAIRE & ARTISTIQUE

Propriétaire

Dr. A. KAZANDJIAN

Բ Ա Գ Ի Ն

ԱՄՍԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

Խմբագիր

ԳՕՂՈՍ ՄՆԱԳԵԱՆ

Խմբագրության անդամները

ՑԱՐՈՒԹԻՐՆ ԳԵՐԳԵՐԵԱՆ

ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Վարչական պատասխանատու

ՎԱՍԷ ԲՈՒՄԵԱՆ

B. P. 11-8404 - Beyrouth - LIBAN

Tel. 274898

تشرين الاول ١٩٨٣

digitised by A.R.A.R.@